Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

63.3(2Հ)
Հ

Վ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽ.

հիմնահարցի ակունքները

Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Վ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽ.
հիմնահարցի ակունքները

32.951
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«ՍՈՆԱ» ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 1998



Պատասխանատու խմբագիրներ՝ Մ. Ե. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Վ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ. Բ.

ԱՐՑԱԽ. ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ: Պատմական ակնարկ: Վահան Հարությունյան. Ստեփանակերտ, «ՍՈՆԱ» գրահրատարակչություն, 1998, 128 էջ:

ՍՈՆԱ ՓԲԸ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Նախ գրքի հեղինակի մասին:

Արցախում Վահան Հարությունյանը ճանաչված եւ գնահատված անձնավորություն է եւ խորհրդային, եւ հետխորհրդային շրջանում: Հակասական անձնավորություն, որ պատեհապատշաճության սայթաքուն լարի վրա պահպանեց իր արժանապատվությունը որպես մարդ, քաղաքացի, հայ: Նա ժամանակի բոլոր դարձիդարձումներում անթեղված թե բացահայտ պահպանել է մարդու, քաղաքացու, հայի ստույգ նկարագիրը: Ինձ համար դժվար է միանշանակ պատասխան տալ, կարծում եմ հենց իր Վահան Հարությունյանի համար էլ դժվար է հստակ ձեւակերպել այն բանաձեւը, թե ինչպես է հնարավոր գիտակցական կյանք ապրել 30-ական, 40-ական, 50-ական, 60-ական, 70-ական, 80-ական, 90-ական թվականների խառնաշփոթ ժամանակաշրջանում ու խուսափել բարոյական կորուստներից: Ավա՜ղ, կորուստներ ենք ունեցել բոլորս, բայց բոլորս չէ, որ կարողացել ենք ինքներս հաղթահարել մեզ եւ արժանի դառնալ նորօրյա մեր հերոսամարտին: Եվ, այնուամենայնիվ, անցնելով խորհրդային ու կուսակցական ծանրագույն պարունակներով, Վ. Հարությունյանը կարողացել է 88-ի արցախյան գոյամարտը ընդունել այնպիսի արժանավորությամբ, որ իրեն իրավունք վերապահի դառնալ այդ գոյամարտի տարեգիրը: Ամբողջ տասը տարիների ընթացքում նա մորթի փա զգացել է, հոգեպես ու բարոյապես տարել ու զգացել շրջափակման, բռնությունների, կորուստների ու (օ՜,գոհություն) հաղթանակի շանթ ու բերկրանքը: Բարձրաստիճան կուսակցական պաշտոնյայից մինչեւ իր ժողովրդի ազգա-

յին-ազատագրական շարժման հավաստի տարեգիր ընդհանրական այս ձեւակերպման մեջ է ամփոփված Վահան Հարությունյանի կյանքն ու գործը:

Հրապարակի վրա է Վահան Հարությունյանի մեծածավալ «Իրադարձությունները Լեռնային Ղարաբաղում» աշխատությունը: Վեց գրքի մեջ ամփոփված արցախյան գոյապայքարի քրոնիկան, հիրավի, երեւելի երեւույթ է, որը ոչ միայն ապրողներիս համար է գրված, այլեւ գալիք պատմաբանի, արցախցու, հայի: Բարեխիղճ, եթե չասենք մանրախնդիր, պրակից պրակ շարադրվում են այն կարեւոր, շարժման էությունը բացահայտող մանրամասնությունները, որոնք բնութագրում են, թե որտեղից եւ դեպի ուր է գնում շարժման պատմական միտումը: Եվ, այնուամենայնիվ, աշխատասիրությունը ամբողջական եւ ամփոփ չէր լինի, եթե ընթերցողի սեղանին չդրվեր հեղինակի «Արցախ. հիմնահարցի ակունքները» գիրքը: Այն մեզ համար աներկբա ճշմարտությունը հաստատող, ընդդիմախոսի հոծ համառությունը ճեղքելու ընդունակ, իր հագեցվածությամբ զարմանալի կառուցիկ մի աշխատանք է, որի անհրաժեշտությունը պարտադիր է ոչ այնքան մեզ, որքան անտեղյակին, ընդդիմախոսին, հակառակորդին: Այս անհրաժեշտությամբ է թելադրված «Արցախ. հիմնահարցի ակունքները» գիրքը, որը ձեւավորվել է հեղինակի ամբողջ կյանքի ընթացքում:

Նշանակալից է, որ գիրքը լույս է տեսնում արցախյան գոյամարտի տասներորդ տարում, որի առթիվ ԼՂՀ նախագահի հրամանագրով համաժողովրդական ծավալով նշվում է այն որպես հոբելյան:

Մաքսիմ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՑԱԽ.
ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Ղարաբաղյան հիմնախնդրի միջազգայնացումը, երբ միջազգային կազմակերպությունները մասնավորապես ՄԱԿ-ը, Անվտանգության խորհուրդը, ԵԱՀԿ-ն, ԱՊՀ-ի երկրները շահագրգիռ հետաքրքրություն են հանդես բերում ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հարցին, զարմանալի անտրամաբանությամբ ու հետեւականորեն Ադրբեջանի քարոզչությունը փորձում է Արցախի հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը ներկայացնել այնպես, որ իբր գոյություն չունի «ղարաբաղյան հիմնահարց», որ այն ներ է մուծվել դրսից Հայաստանի ազգայնամոլների, Սփյուռքի հայ լոբբի եւ տեղական ծայրահեղականների ջանքերով, ուստի եւ, եզրակացնում են մեր քաղաքական ընդդիմախոսները, ղարաբաղյան պրոբլեմը, որպես այդպիսին, իրականում գոյություն չունի: Մինչդեռ անվիճելի փաստերը հակառակն են ապացուցում. արցախյան ազգային-ազատագրական շարժումը ծագել է ժողովրդական զանգվածներում, վերջինիս լայնածավալ ելույթներով ուղղված հայահալած այն քաղաքականության դեմ, որ Ադրբեջանի կառավարող շրջանները իրականացնում էին 1921 թվականից սկսած, երբ Ստալինի անմիջական հրահանգով Ղարաբաղը բռնակցվեց մինչ այդ պատմությանը անհայտ մի պետության, որ հետագայում կոչվեց Ադրբեջան:

Արցախյան շարժումը իր երկար պատմությունն ունի եւ մեր քաղաքական ու գաղափարական հակառակորդների ոտնձգությունների առնչությամբ ես ստիպված եմ կրկին դիմել Շարժման ակունքներին եւ հրապարակել այդ շարժման ժողովրդական բնույթը հաստատող նոր նյութեր ու փաստաթղթեր:

Թեեւ Լեռնային Ղարաբաղի հայության ազգային-ազատագրական շարժումը արդեն մի քանի տարի է համաշխարհային հասարակայնության սեւեռուն ուշադրությունն է գրավում, բայց ոչ բոլորը գիտեն, որ արցախահայերը պարսիկ եւ թուրք նվաճողներից ազատագրվելու համար պայքար են մղել հինավուրց ժամանակներից ի վեր, իսկ Ադրբեջանի մուսավաթական եւ խորհրդային իշխանությունների դեմ պայքար են մղում ահա արդեն 80 տարի:

Վերադառնանք պատմության մատյաններին, որոնք պերճախոս վկայում են, թե ինչպես Արցախի հայ ժողովուրդը դարեր ի վեր պայքարել է հանուն իր անկախության ու ինքնության: Մի՞թե 5-րդ դարում ազգային-ազատագրական պայքար չի մղել Ղարաբաղի տիրակալ Վաչեն. պարսից շահի ճնշման տակ հրաժարվելով իր գահից, պարսկուհի մորից եւ կնոջից, որոնցից առաջինը շահի քույրն էր, մյուսը նրա քեռու դուստրը, նա հավատարիմ է մնացել իր հավատին ու Արցախի ազատության համար պայքարին: Վաչագան թագավորը՝ Վաչեի ժառանգորդն ու նրա եղբայր Հազկերտի որդին, շարունակելով իր նախորդի պայքարը ազատություն բերեց Արցախի ժողովրդին: Մի՞թե ազատագրական պայքարում իր անունը չի անմահացրել Արցախի մեծ իշխան Ջավանշիրը 7-րդ դարում, որի հաղթանակները օտար նվաճողների դեմ գովերգել է նրա ժամանակակից հայ մեծ բանաստեղծ Դավթակ Քերթողը իր «Ողբ ի մահն Ջեւանշիրի մեծի իշխանին» սքանչելի պոեմում:

Արցախի ազատագրական պայքարում իր բարի անունն ու գործն է պատմությանը թողել 9-րդ դարի Արցախի տիրակալ, շիկաքարցի Սահլ Սմբատյանը: Փակագծերում ասեմ, որ նա իմ նախնին է՝ շիկաքարցի մորս կողմով: Սահլ Սմբատյանը՝ իր հարազատ Շիկաքար ամրոցում (ներկայիս ԼՂՀ Ասկերանի շրջանի Քարագլուխ գյուղը) փոքրաթիվ զորքով նախ ոչնչացրել է արաբ նվաճողների խոշոր բանակը, ապա եւ օգնության եկած 12-հազարանոց հեծելազորը, ապա եւ պարսիկ Բաբեկի բազմահազարանոց բանակը: Ի դեպ, մինչեւ օրս ադրբեջանական վայգիտնականները տարփողում են Բաբեկին, ներկայացնելով նրան որպես թուրք-ազերի, միեւնույն ժամանակ վարկաբեկելով Արցախի տիրակալ Սահլ Սմբատին: Սահլի հայրենակից Եսայի Աբու Մուսե իշխանը, նույն 9-րդ դարում գլխավորելով ոտքի ելած ժողովրդին, օտարերկրյա նվաճողներին ջախջախել է Տողասարում, Դիզակում եւ ազատագրել հայրենի երկրամասը: Նրանց մասին է ներշնչանքով գրել այն ժամանակվա հայ մեծ պատմիչ Մովսես Կաղանկատվացին իր «Պատմություն Աղվանից աշխարհի» գրքում:

Խաչենի տիրակալներ՝ հայր եւ որդի Վախթանգ եւ Հասան Ջալալյանները 12-րդ դարի վերջին եւ 13-րդ դարի սկզբին արյունալի պայքար են մղել թաթար-մոնղոլների դեմ՝ հանուն Արցախի ազատության:

Պատմության մատյանները հավաստում են, որ Արցախի մելիքները հինգ դար շարունակ պայքարել են պարսիկ եւ թուրք նվաճողների դեմ:

Մեր ժողովրդի բազմադարյան պատմությունը հայրենիքի ազատության համար անձնուրաց պայքարի օրինակներով է հագեցած: Միեւնույն ժամանակ պատմության դասերը նրան բերել են այն եզրակացության, որ օտար նվաճողների դեմ պայքարում նա կարող է ապավինել

միայն Ռուսաստանին, որի աշխարհաքաղաքական շահերը չեն հակասում ազգային անկախության համար պայքարին: Ահա թե ինչու հայ-ռուսական հարաբերությունները արմատներով գնում են դարերի խորքերը: Դեռեւս 10-րդ դարում հայերը կապեր են հաստատել Ռուսաստանի հետ: Դրանք եղել են առեւտրատնտեսական եւ քաղաքական կապեր: Ռուս-հայկական հարաբերությունների հաստատման գործում մեծ դեր են խաղացել Կիեւյան Ռուսիայում ստեղծված հայկական գաղութները:

Ռուսներն Արցախին ծանոթ են հնագույն ժամանակներից: Միջին դարերի հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին իր «Պատմություն Աղվանից աշխարհի» գրքում նշում է, որ 944 թվականին Արցախի մայրաքաղաք Պարտավ է ժամանել ռուսական մի ջոկատ: Պատմիչը գրում է, որ «...Ընդ նոյն ժամանակս բախի ի կողմանցն հիւսիսոյ այլազգէ, օտարանշան ազգ իմն, զոր Ռուգիկ կոչեն, որք ոչ աւելի քան զերիս ժամանակս ընթանալով իբրեւ զմրիկ ընդ համատարած աշխարհածով ելիցն Կասպից՝ յանկարծ հասանէին ի մայրաքաղաքն Աղուանից Պարտաւ...» (Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 338, Երեւան, 1983):

Հայերի, այդ թվում նաեւ արցախցիների շփումները ռուսական պետության հետ հատկապես ուժեղացան 17-րդ դարի վերջին: Այդ շրջանում Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին դիմեց ցար Ալեքսեյ Միխայլովիչին, որպեսզի նա «...բարեհաճի օժանդակություն ցույց տալ» հայերին: Ցար Ալեքսեյ Միխայլովիչին նույնպիսի խնդրագիր է հղել Գանձասարի Պետրոս կաթողիկոսը:

Առանձնապես պետք է ընդգծել հայ ժողովրդի մեծ զավակ Իսրայել Օրիի դերը հայ-ռուսական հարաբերությունների ընդլայնման ու ամրապնդման գործում, որի նախաձեռնությամբ 1699 թվականին տեղի ունեցավ Արցախի եւ Սյունիքի հայ մելիքների հանդիպումը, որտեղ էլ նա լիազորություն ստացավ Արեւմտյան Եվրոպայում եւ Ռուսաստանում բանակցություններ վարել ազգային-ազատագրական պայքարում հայերին օգնություն ցույց տալու հարցի վերաբերյալ:

Իսրայել Օրին Մինաս վարդապետի (արցախյան Հակոբավանքից արքեպիսկոպոս Մինաս Տիգրանյան) ուղեկցությամբ մեկնեց Արեւմտյան Եվրոպա: Մելիքների գրավոր լիազորություններով նրանք ներկայացան համարյա բոլոր եվրոպական երկրների կայսրերին ու թագավորներին: Ավա՜ղ, եվրոպական միպետները հայ ժողովրդին օգնելու համար ոչինչ չձեռնարկեցին: Արքունիքների անտարբերությունից հիասթափված, Իսրայել Օրին ու Մինաս վարդապետը կտրուկ շրջադարձ են կատարում իրենց կողմնորոշման մեջ, թողնում Արեւմտյան Եվրոպան եւ 1701 թվականին ուղեւորվում Ռուսաստան: Իսրայել Օրիի եւ Արցախի ու Սյունիքի մելիքների կողմնորոշումը դեպի ռուսական պետություն կարե-

ւոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ: Կարելի է համոզված ասել, որ այդ ժամանակաշրջանից էլ հայկական քաղաքական շրջանները վերջնականապես կողմնորոշվեցին դեպի Ռուսաստան: Ժամանակը ցույց տվեց, որ նրանք չսխալվեցին, քանի որ միայն ռուսական կողմնորոշումը, մեր կարծիքով, հայ ժողովրդին փրկեց լրիվ ֆիզիկական ոչնչացումից:

Ժամանելով Մոսկվա, Իսրայել Օրին ռուսական ցար Պյոտր Առաջինին է ներկայացրել Արցախի եւ Սյունիքի հայ մելիքների դիմումը, որում նրանք խնդրում էին, որ ցարը կարեկցի հայ ժողովրդին եւ նրան ազատի թուրք-պարսկական լծից: «Մենք ուրիշ ոչ մի հույս չունենք,- գրում էին մելիքները ցարին,- մենք հույսներս դնում ենք Աստծո եւ քո երկրի վրա»: Պյոտր Մեծը բարեհաճ վերաբերվեց հայ մելիքների խնդրանքին եւ խոստացավ օգնություն ցույց տալ հայ ժողովրդին: Հաշվի առնելով 18-րդ դարասկզբին հայերի խնդրանքը, Ռուսաստանը արշավանքի է նախապատրաստվում դեպի Անդրկովկաս:

Այդ ժամանակաշրջանում Պյոտր Մեծը, 1721 թվականին հաղթանակով ավարտելով Հյուսիսային պատերազմը շվեդների դեմ, սկսեց նախապատրաստվել Կասպիական արշավանքին, նպատակ ունենալով տիրել Կասպիականին, ամրանալ Անդրկովկասում եւ կանխել թուրքական առաջխաղացումը Պարսկաստանի եւ Կովկասի վրա: 1722 թ. ամռանը ռուսական զորքերը շարժվեցին դեպի հարավ: Նրանք գրավեցին Դերբենտը, Բաքուն, Ռեշտը եւ Մերձկասպիականի մի շարք քաղաքներ: Դա մեծ հույսեր ներշնչեց հայերին, որոնք վաղուց էին պատրաստ ապստամբելու թուրքական ու պարսկական լծի դեմ:

Այդ ամենն, անկասկած, նոր խթան եղավ արցախահայության ազգային-ազատագրական պայքարին: 18-րդ դարասկզբին սկսվեց հայկական ազգային-ազատագրական ապստամբությունը, որը ղեկավարում էին Դավիթ Բեկը, Ավան հարյուրապետը, Եսայի Հասան-Ջալալյանը: Ապստամբները բազմիցս դիմեցին Պյոտր Առաջինին գինված օգնության խնդրանքով: 1723 թվականին Երից Մանկանց (ներկայիս Մարտակերտի շրջանում) կաթողիկոս Ներսեսը Պյոտր Առաջինին ուղարկած նամակում գրել է. «...ամենայն մեր ժողովրդով խնդրում ենք, որ ներկայումս մենք անհավատների ձեռքին ենք, ոնց որ նրանց գերիները լինենք, որոնք գիշեր ու տիվ դաժանորեն հալածում, թալանում ու կոտորում են մեզ եւ գերեվարում, եւ մնացածներս էլ ով փրկվում է ու ողջ մնում, սարերը փախչելով ու ձորերում թաքնվելով, ապրում ենք կարիքի մեջ առանց հաց ու ջրի, սակայն նախ Աստծո եւ ապա Ձերդ մեծության վրա հույսներս կդնենք եւ ոչ այլ ոքի, Ձերդ մեծությունից բացի ոչ մի ապավեն չունենք, այդ պատճառով էլ խնդրում ենք ազատել մեզ այս ցավից եւ պաշտպան լինել մեզ, ինչպես մեծն Մովսես մարգարեն ազատեց ձեռից փարավոնաց, այդպես էլ ազատեցեք մեզ ձեռից բարբարոս...» (տես Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сб. документов, т. II, ч. II, Ереван, 1967 г., док. 176, стр. 27-28): Արցախյան 40-հազարանոց զորքը Գանձակ քաղաքի մերձակայքում գտնվող Չոլաղ կոչվող վայրում սպասում էր Պյոտր Առաջինին: Բայց Պյոտր Առաջինը ստեղծված քաղաքական բարդ իրադրության պատճառով դադարեցրեց արշավանքն Անդրկովկասում եւ տեղ չհասավ: Չնայած դրան, արցախահայերը, Պյոտր Մեծի դիմումից ոգեւորված, 1722 թվականին ապստամբություն բարձրացրին պարսկական խաների դեմ եւ անկախ հռչակեցին իրենց երկիրը:

Նադիր շահը ստիպված էր հաշվի նստել Ղարաբաղի հայերի ռազմաքաղաքական ուժերի հետ, ստեղծել քաղաքական նոր կազմավորում «Մահալե Խամսե» («Հնգյակ»), որն իր մեջ ներառնում էր Խաչեն, Ջրաբերդ, Թալիշ, Վարանդա եւ Դիզակ հայկական մելիքությունները: Այդ կիսանկախ քաղաքական կազմավորման գլուխ նշանակվեց Դիզակի մելիք Եգանը, որն իր պաշտոնական փաստաթղթերում իրեն կոչում էր «Հայաստանի թագավոր» (տես А. Папазян. Надпись на входе в приемную Мелика Егана. Вестник общественных наук АН Арм. ССР. 1985 г., № 5, стр. 75-78):

Հայերի ազատագրական պայքարը նոր ուժով ծավալվեց 18-րդ դարի երկրորդ կեսին, ամեն ինչ արվում էր օտարերկրյա ճնշումից ազատագրման եւ հայկական պետականության ստեղծման համար: Առանձնահատուկ ակտիվ դեր խաղացին Արցախի (Ղարաբաղի) մելիքներն ու ժողովուրդը: Այդ մասին բավականին ճշգրիտ է նկարագրվում Իրակլի 2-րդ վրաց թագավորի կողմից 1769 թվականին Ռուսաստան (Պետերբուրգ) ուղարկված գեկուցագրում: «Խամս»-ը (Արցախ-Ղարաբաղը - Վ. Հ.) իրենից ներկայացնում է մի տիրույթ, որը բաղկացած է յոթ վոյեվոդական կառավարչություններից, եւ նրա ամբողջ ժողովուրդը հայկական օրենքի է: Այս տիրույթում կա հայ կաթողիկոս. իսկ երբ պարսկական շահը (Նադիրը - Վ. Հ.) մեռավ, ապա նրանց իսկ կողմից մահմեդական օրենքի եւ ջավանշիրյան ցեղի մի մարդ ուժեղացավ. այս կառավարչության Խամսայի (Արցախի - Վ. Հ.) մեջ կա մի ամրոց (Շուշին - Վ. Հ.), որը նրանց կողմից խաբեությամբ է գրավված եւ բազմիցս մեր կողմից ջավանշիրների հետ պատերազմ է տեղի ունեցել, բայց Աստծո օգնությամբ միշտ... մեզնից պարտված են եղել եւ ջախջախված, միայն վերոհիշյալ ջավանշիրները, այլ ոչ հայկական օրենքինը, իսկ ներկայումս որոշ հանգամանքների պատճառով երկու կողմերից խաղաղություն է կնքված: Հայերն ունեն մեծ ամրություն. վայրերը լեռնոտ են, անտառապատ, ըստ որում էլ դաշտերն արգավանդ են. ջավանշիր ցեղից պատերազմի դուրս կգա երկու հազար հինգ հարյուր մարդ, իսկ հայերից չորս հազար հինգ

հարյուր, եւ այդ տիրույթը պատրաստ է նրանց կես օրում դուրս բերելու: Սույն Խամսայի (Արցախի - Վ. Հ.) տիրույթը գտնվում է Շիրվանի, Նախիջեւանի, Գյանջայի եւ Կարադաղի արանքում, եւ Խամսայի (Արցախի - Վ.Հ.) հայերը խիզախ ու քաջ են, բայց քանի որ ցույց տրված մասերում վոյեվոդներն իրար միջեւ անհամերաշխ են, ապա նրանց այդպիսի անհամերաշխության պատճառով ջավանշիրների կողմից իրենց իշխանության տակ են գցված» (տես Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии, т. 1, с 1768 по 1774 г. г., под редакцией А. А. Цагарели. СПб., 1891 г., док. 198, стр. 434-435):

1780 թվականին Իվան Լազարեւը (Լազարյան) Ա. Վ. Սուվորովին ներկայացրեց Հայաստանի ազատագրման պլանը, որի մեջ, մասնավորապես, ասվում է. «Արդեն մի քանի դար է, ինչ Հայաստանը զրկվել է իր թագավորից եւ հատկապես կառավարումից, շատ վայրերի տիրացել են թուրքերն ու պարսիկները, իսկ մի փոքրիկ մասը, այսինքն Ղարաբաղը, ողջ է եւ մինչ օրս մնում է անկախության մեջ, բայց իրենց ազգից մի որեւէ պետ լինելու դեպքում ամբողջովին Հայաստանը կարող է դյուրությամբ վերականգնվել եւ կարճ ժամանակամիջոցում դառնալ ոչ փոքր ժողովրդի միավորում» (տես Собрание актов, относящихся к истории армянского народа, стр. 68):

Հովհաննես Լազարյանը (Իվան Լազարեւ) եւ Իոսիֆ Արգությանը (Արգուտինսկի) իրենց ծրագրում, որը նախատեսում էր հայկական պետության վերականգնումը Երեւան մայրաքաղաքով, առաջարկում էին ստեղծել հատուկ հայկական գունդ, որը Ղարաբաղի հայ մելիքների զորքերի հետ համատեղ պետք է ազատագրեր Արարատյան գավառը, իսկ այնուհետեւ նաեւ մնացած հայկական մարզերը: Նախատեսված էր նաեւ Ռուսաստանի ռազմական օգնությունը:

Լազարյանի եւ Արգությանի ծրագրի իրականացման համար դեպի Անդրկովկաս ռազմարշավի նախապատրաստությունը հանձնարարված էր մեծ զորավար Ա. Վ. Սուվորովին, որը ճանապարհվելով Աստրախան եւ կապեր հաստատելով Անդրկովկասում գտնվող հայրենասիրական ուժերի հետ, այդ թվում Արցախի մելիքների հետ, սկսեց անհրաժեշտ տեղեկություններ հավաքել, բայց ռուսական զորքերի ռազմարշավն Անդրկովկաս անհայտ պատճառներով չիրագործվեց (մեծ զորավարի գեներալիսիմուս Ալեքսանդր Վասիլեւիչ Սուվորովի մայրը Եվդոկիա Ֆեդոսեւնա Մանուկովան (Մանուկյան) հայուհի էր, ծագումով Արցախից):

1783 թ. Իոսիֆ Արգուտինսկին (Արգության) կազմեց եւ գեներալ Պ. Ս. Պոտյոմկինին ներկայացրեց ղարաբաղյան մելիքների մասին մի պատմական տեղեկանք, որի մեջ հավաստիացրեց, որ «նրանք բազմիցս իրեն են դիմել իրենց մարզերի ազատագրման մասին առաջարկություններով» ռուսական զորքի օգնությամբ: 1783 թ. մայիսի 19-ին իշխան Գ. Ա. Պոտյոմկինը Եկատերինա 2-րդ կայսրուհուն գրել է հետեւյալը. «Ես գեներալ-պորուչիկ Պոտյոմկինին Շուշիի Իբրահիմ խանի մասին նրան հպատակության մասին մակագրություն եմ տվել: Այն քննարկման է ենթակա, որպեսզի հարմար պահին նրա մարզը, որը կազմված է հայկական ժողովուրդներից, տալ ազգային կառավարման եւ նրա միջոցով Ասիայում վերստեղծել քրիստոնեական պետությունը Չ. կ. մ. խոստումներին նմանօրինակ, որոնք իմ միջոցով տրվել են հայ մելիքներին» (տես А. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х г. г. 18-го столетия. Ереван, 1947 г., док. 24, стр. 238):

1784 թ. ապրիլին իշխան Գ. Ա. Պոտյոմկինը Եկատերինա 2-րդին զեկուցում է, որ «Կատարելով Ձերդ կայսերական մեծության բարձրագույն կամքը, իմ կողմից սուրհանդակներ էին ուղարկվել Հայաստան, Պարսկաստանին պատկանող Ղարաբաղ գավառը եւ Կարադաղ նրանց ներշնչելու վսեմագույն հովանավորությունը, որով նրանք ազարյանական (մահմեդական - Վ. Հ.) լծից ազատագրվել կարող են: Ձի սույն ժողովուրդների հակվածությունը ժամ առ ժամ ուժգնանում է: Ձերդ կայսերական մեծությանը թույլ տվեք հաղորդել սույնով ներկայացվող տեղեկագրերից, որ Իբրահիմ խանը, վախենալով իր բռնատիրությունից բաց թողնել սույն ժողովրդին, Ռուսաստանի հետ միացում է որոնում» (տես АВПР, ф. СРП, оп. 7716, д. 469, л.1):

Շուտով Ռուսաստանը համոզվեց, որ Իբրահիմ խանը անկեղծ չէ: 1787 թ. հուլիսի 8-ին Վրաստանում Ռուսաստանի ներկայացուցիչ Ս. Դ. Բուրնաշովը Պ. Ս. Պոտյոմկինին զեկուցեց հետեւյալը. «Սույն ամսի 1-ին եկել էր Սղնախի դաշնության մելիք Բախտամի որդին: Գալով ինձ մոտ, նա հայտարարեց, որ Գավրիլ Գարախանովի դավադրությամբ Իբրահիմ Խանի կողմից կալանքի տակ էին վերցվել Գանձասարի պատրիարքը եւ բոլոր մելիքները: Վերջիններս, կտտանքներով դաժանորեն տանջահարված լինելով, խոստովանել են եւ տվել այն նամակներն ու բոլոր նվերները, որ ստացել են Ձերդ գերազանցությունից: Պատրիարքը վախից մահացել է, նրա ամբողջ կալվածքը խլվել է եւ եկեղեցական սպասքը թալանվել: Այժմ հայերն այնտեղ ծայրաստիճան ճնշվածության մեջ են» (տես ԱԳՎԻԱ, ф. 52, оп.1/194, док. 416, ч.1, л. 353): Նույն տեղում նշվում էր, որ «մելիքներն ուղարկել են թագավորի (Իրակլի 2-րդի- Վ. Հ.) մոտ խնդրելու ազատել, ներկայացնելով, որ նրանք բոլորը պատրաստ են իրենց զենքը շրջել իրենց կեղեքիչի դեմ (Իբրահիմ խանի դեմ - Վ. Հ.), երբ Ձերդ գերազանցությունը կներկայանա Ղարաբաղ»:

Իոսիֆ Արգությանը 1788 թ. հունվարի 7-ին իշխան Պոտյոմկինին գրել է այն մասին, որ «... մեր ազգի Ղարաբաղյան մելիքները, իսկ անձամբ Մեժլումը եւ Աբովը իրենց նման մյուսների հետ միասին, որոնք նախանձախնդիր ու եռանդագին ցանկություն ունեն մշտապես ծառայել Ռուսաստանյան պետությանը, եւ որ Ձերդ պայծառափայլությանը բա-

վականին հայտնի է նրանց եւ իրենց գործերի մասին, ներկայումս Շուշիի խանի նկատմամբ ատելության եւ նրանից հալածվելու պատճառով ստիպված են փախչել Վրաստան եւ այնտեղի պաշտպանությանն ապավինել, թողնելով իրենց կանանց եւ ամբողջ ունեցվածքը» (տես ЦГВИА, ф. 52,оп.1/194,док. 270,л. 23-24):

Այդ ժամանակ ընթանում էր ռուս-թուրքական պատերազմը, այդ պատճառով ռուսական զորքերը դուրս եկան Վրաստանից եւ չկարողացան օգնություն ցույց տալ Արցախի մելիքներին: Դա չարեց նաեւ Իրակլի 2-րդ թագավորը, որը զգուշանում էր թուրքերի ոտնձգություններից, նա տեղյակ էր, որ Իբրահիմ խանը օգնություն ստանալու մասին հետեւյալ խնդրագիրն էր ուղարկել թուրքական սուլթանին. «Ամենապայծառափայլ բարձրյալիդ զեկուցում եմ, որ պատվիրակն եմ դարձնում ինձ վսեմագույն Դռան, որտեղ հենց հրեշտակներն են ապրում եւ նրանից են հորդում առատություններն անծայր, քանց ծովը, ամբողջ իմ կյանքը, կարողությունը, հողերն ու ժողովուրդները ոտքի փոշին են փոխանորդի մեր մեծ մարգարեի: Ողորմագութ տեր, ... քեզնից օգնություն եմ սպասում, եւ եթե զորացնեք մեզ, ապա մեր օրենքի թշնամիներին մենք գլխիվայր կդնենք» (տես Исторический сборник, т. 23-24, Тбилиси, 1970,стр. 140-141):

1792 թվականի փետրվարի 7-ին Իոսիֆ Արգուտինսկին Եկատերինա 2-րդին է դիմում Հայաստանի ազատագրման նոր պլանով: Բայց դա մնում է լոկ որպես պլան:

1793 թ. մայիսի 3-ին Ի. Արգուտինսկին նամակ է հղում Պլատոն Զուբովին, որը փոխարինել էր 1791 թ. հոկտեմբերի 6-ին մահացած Գ. Ա. Պոտյոմկինին: Նամակում նա առաջարկում է Հայաստանի, այդ թվում եւ Ղարաբաղի ազատագրման եւ Հայկական պետության ստեղծման նոր պլան:

Ղարաբաղի հայերի ու նրանց մելիքների վիճակը կրիտիկական է դառնում Պարսկաստանում Աղա Մուհամեդ խանի հզորացումից հետո, որը 1795 թ. ավերիչ արշավ է ձեռնարկում դեպի Անդրկովկաս եւ տիրում նրան: 1796 թվականին Եկատերինա 2-րդի մահից եւ Պավել 1-ի իշխանության գլուխ անցնելուց հետո նրա հրամանով զորքերը ստիպված էին հեռանալ մեր տարածաշրջանից: Ռուսական զորքերի հետ միասին Ռուսաստան հեռացան նաեւ մելիքներ Զամշիդը (Զումշուդ) եւ Պրիդոնը (Ֆրիդուն):

Արգուտինսկին եւ այդ մելիքները ընդունելության արժանացան ցարի պալատում եւ բանակցություններ վարեցին Պավել 1-ի հետ:

Իրակլի 2-րդ վրաց թագավորը 1797 թ. հունիսի 23-ին հետեւյալ նամակը գրեց կանցլեր Ա. Ա. Բեզբորոդկոյին. «Ղարաբաղում բնակվող մելիք իշխանների հայ ժողովուրդը վաղեմի ժամանակներից ցանկություն ունի վերաբնակվելու քրիստոնյաների մոտ, որպեսզի դրանով իսկ ազատվի անօրենների ձեռքից եւ այնտեղ իրենց կրած մեծ կեղեքումից: Որի պատճառով ղարաբաղցի իշխաններ մելիք Զամշիդը, որդին Մելիք Շահնազարովի, եւ մելիք Պրիդոնը, որդին մելիք Բեգլյարովի, ներկայումս հարմար առիթ են գտել միասին եւ գերդաստաններով հեռացել են Ղարաբաղից եւ ժամանելով մեզ մոտ, հայտարարել են հայ ժողովրդի վերը հիշատակված վերաբնակության իրենց ցանկության մասին եւ այն մասին, որ դրա համար ցանկանում են ճանապարհվել կայսերական մեծության արքունաց Բարձր դուռը... որպեսզի հիշյալ քրիստոնյաները... ձերդ միջնորդությամբ ազատվեն կեղեքումից» (տես АВПР, ф. СРП, оп. 110/3,док. 454, л.100-101):

Պավել 1-ը 1797 թ. հոկտեմբերի 7-ին հրապարակում է հետեւյալ հրամանագիրը.

«Հետեւագորի պարոն գեներալ գրաֆ Գուդովիչ

Ձեզնից հասցված խնդրագրի բովանդակության վերաբերյալ, որը Ձեզ է տրվել Պարսկաստանից մեկնած երկու դարաբաղցի հայ մելիքների կողմից Վարանդայի տեր Զամշիդից եւ Գյուլիստանի տեր Ֆրիդոնից, հրամայում ենք. նրանց հետ համաձայնել նրանց եւ ցանկություն հայտնած մյուս մելիքներին իրենց իշխանությանը ենթակա հայ ժողովրդի հետ միասին, թվով 11000 ընտանիքներից բաղկացած, մեր հպատակության տակ ընդունելու եւ նրանց Պարսկաստանից Ռուսաստան տեղափոխելու եղանակների մասին, ձեր կողմից բոլոր անհրաժեշտ կարգադրություններն անել այդպիսի համաձայնությունը գործողության մեջ դնելու մասին, տալով ձեր հայեցողությամբ ամեն տեսակի նպաստները ուղղված ինչպես տեղափոխվելու ժամանակ սույն ժողովրդին եւ նրա ունեցվածքը թալանելուց պաշտպանելուն, այնպես էլ նրանց կովկասյան գծի վրա բնակեցնելուն, միաժամանակ նշանակելով նրանց համար բավականաչափ հողեր եւ ապահովելով նրանց հանգիստ ապրելը մեզ մոտ: Իսկ մինչ այդ հիշյալ երկու մելիքներին, ըստ իրենց ցանկության, ուղարկել մեր մայրաքաղաքը, նախապես մեզ զեկուցելով, թե ինչ համաձայնություն եք նրանց հետ կայացրել եւ կարգադրություն արել» (տես Полный свод законов Российской Империи, т. XXIV, стр. 761):

Այդ հրամանագրի համաձայն, Զումշուդ եւ Ֆրիդոն մելիքներն ուղեւորվում են Պետրոգրադ եւ 1798 թ. մարտի 9-ի նամակով դիմում Պավել 1-ինին, որի մեջ նախ նշում են ռուսաստանյան արքունիքի հետ իրենց նախկին կապերի ու Եկատերինա 2-րդի խոստումների մասին, այնուհետեւ շարադրում երեք կետից բաղկացած իրենց խնդրանքը.

«1. Ամենաբարձրյալի օգնությամբ հալածելով մեր փրկիչ տեր Հիսուս Քրիստոսին ատելի նշանակները, եկել ենք, քո բարձր հովանավո-

Ղարաբաղցի հայերն այսպես էին պայքար մղում իրենց ազատության համար:

Շուշիի հերոսական պաշտպանությունը շարունակվեց 47 օր 1826 թ. հուլիսի 26-ից մինչեւ սեպտեմբերի 13-ը, մինչեւ որ ռուսական զորքերը մեր հայրենակից գեներալ Վալերիան Մադաթովի հրամանատարությամբ (Մադաթյանը ծագումով Ավետարանոց գյուղից էր) պարսկական զորքերին ջախջախեց Շամխոր գետի եւ Ելիզավետպոլի մոտ, օգնության եկավ շուշեցիներին: Ինչպես նշում է Վ. Պոտտոն, Շուշիի պաշտպանությունը հսկայական ազդեցություն ունեցավ ամբողջ ռուս-պարսկական պատերազմի ընթացքի վրա: Ցար Նիկոլայ 1-ը Շուշիի ամրոցի խիզախ պաշտպաններին շնորհեց Գեորգիեւյան դրոշ «1826 թ. պարսիկների դեմ Շուշիի պաշտպանության համար» մակագրությամբ: Գնդապետ Ռեուտը պարգեւատրվեց Վլադիմիրի շքանշանով: Չմոռացվեցին նաեւ հայերի ազգային-ազատագրական շարժման ղեկավարներ եղբայրներ Սաֆար եւ Ռոստոմ Թարխանյանները, որոնք անչափ նշանակալի եւ հերոսական ծառայություններ մատուցեցին ռուսներին: Նիկոլայ 1-ին ցարը Ռոստոմին շնորհեց ենթասպայի (պրապորշչիկ) աստիճան եւ ցմահ կենսաթոշակ նշանակեց: Սաֆարը Շուշիի շրջափակման վերացումից շատ չանցած մահացավ, սակայն պետական գանձատնից հատուկ նպաստ նշանակվեց կնոջն ու երեխաներին: Գնահատանքի արժանացան նաեւ ուրիշ հայեր:

Ղարաբաղում ռուսական տիրապետության հաստատումով սկսվում է երկարատեւ պայքար հայ մելիքների եւ մահմեդական վերնախավի միջեւ Մեհթի խանի գլխավորությամբ: Այդ պայքարի էությունը կայանում էր նրանում, որ հայ մելիքները փորձում էին օրենքով ապացուցել, որ խանն ու բեկերն ապօրինի կերպով են տիրում ղարաբաղյան հողերին եւ հայ մելիքները դրան հասել են 1820 թվականին Ղարաբաղի ապօրինի խանությունը ռուսական ցարի կողմից լուծարելուց հետո: (Այդ գործով դատարանի նյութերը ներկայումս պահվում են Երեւանի Մատենադարանում եւ պարունակում են ավելի քան 400 տպագիր թերթ - Վ. Հ.):

Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ 1813 թ. հոկտեմբերի 12(24)-ին կնքված Գյուլիստանի պայմանագրի եւ 1828 թ. փետրվարի 10(22)-ի Թուրքմենչայի պայմանագրի համաձայն, Ղարաբաղն առհավետ մտել է Ռուսաստանյան պետության կազմի մեջ:

Ղարաբաղի խանության լուծարումով եւ Ելիզավետպոլի նահանգի կազմավորումով, որի մեջ մտան Ղարաբաղի բոլոր հինգ մելիքությունները, արցախահայությունը փրկվեց ֆիզիկական ոչնչացումից:

Բավական էր, սակայն, որ ռուսները 113 տարի անց (1918 թ.) հեռանային Ղարաբաղից, որպեսզի երկրամասում սկսվեն ազգամիջյան կռիվներ. վերստին արթնացավ արցախահայության վաղեմի ազատատենչ, ազգային անկախության ոգին: Արցախցիների ժողովրդական ոգու այդ գիծը հատկապես վառ կերպով դրսեւորվեց 1918 թվականի ամռանը, երբ ամբողջ Անդրկովկասը հնազանդորեն գլուխ խոնարհեց թուրքական ներխուժման առաջ, եւ միայն ղարաբաղցի հայերը զենքը ձեռքներին դիմավորեցին նենգ թշնամուն եւ Մսմնա գյուղի մոտ (ներկայիս ԼՂՀ Մարտունու շրջանում) գլխովին ջախջախեցին թուրքական խոշոր զորաջոկատը, կրկին հայկական իշխանության ռեժիմ հաստատեցին Լեռնային Ղարաբաղում: Երկրամասն սկսեցին կառավարել Ղարաբաղի Ազգային խորհուրդը եւ տեղական կառավարությունը: Բայց նենգ թշնամին չէր ննջում, առավել եւս, որ նա ուներ այնպիսի ուժեղ հովանավորներ, ինչպիսիք էին արյունարբու Թուրքիան եւ հին ծովային շնաձուկ Մեծ Բրիտանիան: Այդ գիշատիչների օգնությամբ ադրբեջանական մուսավաթական կառավարությունը 1918 թվականի ամռանը լայնածավալ հարձակում կազմակերպեց Լեռնային Ղարաբաղի վրա եւ սկսեց ավերել ու ֆիզիկապես բնաջնջել Ղարաբաղի հայ բնակչությանը չնայած Ազգերի լիգայի իր մանդատով Հայաստանի կառավարմանը տալու մասին մեծագոռգոռ խոստումներին:

Ռուսաստանում 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունը եւ Անդրկովկասում Վրաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի նոր պետությունների կազմավորումը նոր խթան տվեցին ազգային-ազատագրական շարժմանը Արցախ-Ղարաբաղում: Այդ շարժումն ուժեղացավ հատկապես այն ժամանակ, երբ Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը Թուրքիայի եւ Մեծ Բրիտանիայի օգնությամբ սկսեց իր տարածքն ընդլայնել հարեւան հայկական շրջանների հաշվին: Հենց այդ ժամանակ էլ քաղաքական ասպարեզում հառնեց ղարաբաղյան հարցը: Մուսավաթական կառավարությունը, օգտվելով ցեղասպանություն կրած Հայաստանի ծանր դրությունից, Մեծ Բրիտանիայի եւ Թուրքիայի աջակցությամբ սկսեց զավթել վաղեմի հայկական հողերը Նախիջեւանը, Զանգեզուրը եւ Ղարաբաղը:

Լեռնային Ղարաբաղի հայերը համարյա երկու տարի արյունահեղ մարտերով հետ էին մղում ադրբեջանա-թուրքական զորքերի գրոհները. նրանք պաշտպանեցին իրենց քաղաքական պնկախությունը, ստեղծեցին Ազգային խորհուրդ ու կառավարություն, որոնք երկրամասը ղեկավարեցին ընդհուպ մինչեւ 1920 թվականի ապրիլի 28-ը, երբ խորհրդային իշխանություն հաստատվեց Ադրբեջանում:

Հայտնի է, որ 1917 թվականի փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանում անիշխանության հանգեցրեց ինչպես հենց Ռուսաստանում, այնպես էլ Ռուսաստանյան պետության ծայրամասերում: Դա զգացվեց հատկապես Անդրկովկասում, այդ թվում նաեւ Լեռնային Ղարաբաղում, քանի որ ռուսական զորքերը հեռացան երկրամասը թողնելով թուրք-ադրբեջանական զորքերի շրջապատման մեջ: Դրսի աշխարհից կտրված եւ շրջափակման մեջ հայտնված Ղարաբաղի հայերը

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ

պատրաստ էին օրհասական պայքար մղել իրենց հողն ու հայրենիքը, ազգային անկախությունը պաշտպանելու համար: Ծանր ու անելանելի դրության մեջ էր գտնվում նաեւ Հայաստանը, որը զգալի տարածքներ կորցնելու հետեւանքով հեղեղված էր հարյուր-հազարավոր փախստականներով. մոլեգնում էին սովն ու համաճարակը, ստեղծվել էր ռազմաքաղաքական ծանր կացություն: Հայաստանը չէր կարող բավարար չափով օգնություն ցույց տալ Լեռնային Ղարաբաղին:

Եվ ահա այդ ծանր շրջանում Լեռնային Ղարաբաղում գտնվեցին սքանչելի հայրենասերներ, որոնք կազմավորեցին բազմակուսակցական բյուրո: 1918 թվականի հուլիսի 22-ին հրավիրվեց Լեռնային Ղարաբաղի աշխատավորների 1-ին համագումարը:

1-ին համագումարը տեղի ունեցավ Շուշի քաղաքում ռեալական դպրոցում, 180 պատգամավորների մասնակցությամբ: Համագումարի նախագահ ընտրվեց Ղարաբաղի բոլշեւիկների ղեկավար Ալեքսանդր Ծատուրյանը: Սակայն երկրորդ օրը անհայտ պատճառներով համագումարին նա չներկայացավ, եւ պատգամավորները ստիպված էին համագումարի նոր նախագահ ընտրել դաշնակցական կուսակցության ղեկավար Հայրապետ Մուսայելյանին: Լեռնային Ղարաբաղի աշխատավորների 1-ին համագումարը լսեց նրա զեկուցումը «Անդրկովկասում եւ Լեռնային Ղարաբաղում տիրող դրության մասին», եւ որոշում ընդունեց կազմավորել Լեռնային Ղարաբաղի կառավարություն, որի առաջ ծառացել էին երկրի տնտեսական, քաղաքական եւ ռազմական կառավարման, եւ առաջին հերթին երկրամասի ինքնապաշտպանությունը կազմակերպելու խնդիրները: Կառավարության անդամներն անվանվեցին կառավարիչներ: Երկրամասի ներքին գործերի բաժնի կառավարիչ նշանակվեց Եղիշե Իշխանյանը, արտաքին գործերի նույն Եղիշե Իշխանյանը, ռազմական գործերի Հարություն Թումյանը, հաղորդակցության գործերի Մարտիրոս Այվազյանը, արդարադատության Արշավիր Քամալյանը, հողային բաժնի նույն Արշավիր Քամալյանը, պարենի Արսեն Հովհաննիսյանը, ֆինանսների Մովսես Տեր-Աստվածատրյանը եւ այլն: Նրանցից 4 հոգի դաշնակներ էին, 2-ը մենշեւիկներ, մեկը էսեռ, մեկը անկուսակցական: Կառավարությունը որոշում ընդունեց ունենալ իր թերթը «Ղարաբաղի լրաբեր», որի առաջին համարը լույս տեսավ 1919 թվականի օգոստոսին:

Կառավարությունն իր գլխավոր խնդիրն էր համարում պայքարը հանուն ազատ Ղարաբաղի: Լեռնային Ղարաբաղի նորաստեղծ կառավարությունը տեղնուտեղը որոշում է ընդունում մերժել Ադրբեջանի կառավարության հակաօրինական եւ հակահիրավական պահանջը Լեռնային Ղարաբաղի Ադրբեջանի կազմի մեջ մտցնելու մասին եւ պատրաստ լինել զենքի ուժով պաշտպանել նորաստեղծ պետությունն ու ժողովրդին: Որոշվեց, որ Ադրբեջանի հետ բանակցություններ պետք է վարել

միայն այն ժամանակ, երբ երկու կողմերը հավասար իրավունքներ կունենան այդ բանակցություններում:

Ինձ բախտ է վիճակվել Լեռնային Ղարաբաղի 1918-1920 թվականների կառավարության անդամներից մեկին ճանաչել մոտիկից: Դա Արցախի մտավորականության նահապետ Արշավիր Ոսկանի Քամալյանն էր, որը մինչեւ Ղարաբաղում խորհրդային կարգերի հաստատումը զբաղեցնում էր միաժամանակ արդարադատության եւ հողագործության նախարարների պաշտոնները: 1920 թվականի մայիսին մեր երկրամասում հաստատվեցին խորհրդային կարգեր: Նկատի առնելով Ա. Քամալյանի մեծ հանրաքվեն եւ ունակությունները, նոր իշխանությունները նրան նշանակեցին Լեռնային Ղարաբաղի լուսավորության ժողովրդական կոմիսար:

Նրա հետ ծանոթացել եմ 1935 թվականին իր կրտսեր քրոջ Թամարա Քամալյանի տանը: (Հորս չարաբնեգ սպանությունից հետո մեր ընտանիքի խնամակալությունը վերցրել էր Ստեփանակերտի բժշկական ուսումնարանի տնօրեն, Լեռնային Ղարաբաղում մեծ անուն ու հարգանք վայելող մտավորական Թամարա Քամալյանը):

Իսկապես անգնահատելի է անկուսակցական Արշավիր Քամալյանի վաստակը սերունդների դաստիարակման գործում: Ի դեպ նշեմ, որ նրա եղբայր Հրանտ Քամալյանը եղել է նախարարի տեղակալ, մյուս եղբայրը գիտությունների դոկտոր-պրոֆեսոր՝ Գուրգեն Քամալյանը, բազում տարիներ աշխատել է Երեւանի զոոանասնաբուժական ինստիտուտի ռեկտորի պաշտոնում, կրտսեր քույրը Թամարա Քամալյանը, ինչպես նշեցինք վերեւում, եղել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարանի հիմնադիրը եւ քառասունից ավելի տարիներ նրա տնօրենը, մյուս քույրը Սիրան Քամալյանը, եւ կինը Աշխեն Քամալյանը, երկար տարիներ աշխատել են Ստեփանակերտի դպրոցներում:

Արշավիր Քամալյանն ունեցել է երկու զավակ, տղան Նժդեհը, հերոսի մահով զոհվել է Հայրենական մեծ պատերազմում 1942 թվականին, դուստրը Լիա Քամալյանը, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր է, ապրում եւ աշխատում է Երեւանում:

Մեծանուն մտավորական Արշավիր Քամալյանը ծնվել է 1889 թվականին Շուշի քաղաքում, մահացել է 1968 թվականին Երեւանում: Նա մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունն ավարտել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը եւ վերադարձել հայրենի Շուշի ու անմիջապես մասնակցել Արցախի ազգային-ազատագրական շարժմանը: Նա 1918-1920 թվականներին Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի (պառլամենտի) բոլոր 9 համագումարների կազմակերպիչներից եւ ղեկավարներից մեկն է եղել, համագումարներ, որոնք բոլորն էլ դեմ են քվեարկել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում լինելուն:

Ես ճանաչում էի նաեւ 1918-1920 թվականների Լեռնային Ղարաբաղի պարենի նախարար Արսո Հովհաննիսյանին, որը երկար տարիներ աշխատել է Լեռնային Ղարաբաղի հողագործության ժողովրդական կոմիսարիատում եւ մեծ համբավ ուներ Արցախում:

Քամալյանների ընտանիքի մասին իմ այս գրառումներին ես ծանոթացրի ծագումով Գիշի գյուղացի, որտեղից են նաեւ Արշավիր Քամալյանի նախնիները, Արցախի մտավորականության հարգարժան ներկայացուցիչներից մեկին 90-ամյա Թեւան Ջավադյանին, որը Հրանտ Քամալյանի դասընկերներից է, եղել է Լեռնային Ղարաբաղի կենտգործկոմի անդամ, բազում տարիներ աշխատել է միջնակարգ դպրոցի, գյուղտեխնիկումի տնօրենի, լուսավորության շրջանային բաժնի վարիչի, շրջկոմի քարտուղարի, մարզկոմի բաժնի վարիչի, կոլտնտեսության վարչության նախագահի պաշտոններում եւ քաջ ծանոթ էր Քամալյանների ընտանիքին: Մեծարգո Թեւան Ջավադյանը ոչ միայն հավանություն տվեց այս ամենը լուսաբանելուն, այլեւ մեղադրեց վերջին 70 տարիների Լեռնային Ղարաբաղի ղեկավարներին այն բանի համար, որ մինչեւ հիմա Շուշի եւ Ստեփանակերտ քաղաքներում Արշավիր Քամալյանի անունով չկան փողոցներ ու դպրոցներ, որ Թամարա Քամալյանի անունով չի կոչված Ստեփանակերտի բժշկական ուսումնարանը, որի հիմնադիրը եւ կեսդարյա տնօրենն է եղել:

Արցախի ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմությունը նոր շրջանում, հատկապես դարասկզբի պատմությունը ինչպես հարկն է չի ուսումնասիրված եւ գնահատված մեր պատմաբանների կողմից: Ցավով պիտի նշել նաեւ, որ այդ պայքարի հերոսների ու ղեկավարների անունները պետականորեն չեն հավերժացված:

Պատմությունը կրկնվում է:

Պատմական փաստաթղթերը ցույց են տալիս, որ Լեռնային Ղարաբաղի 1980-1990-ական թվականների իրադարձությունները 1918-1920 թվականների իրադարձությունների ճշգրիտ կրկնությունն են:

Մերկապարանոց չլինելու համար ստորեւ բերում եմ 1918-1920 թվականների ժամանակաշրջանի կարեւոր պատմական փաստաթղթերից մի քանիսը, որոնք հաստատում են այն հին ճշմարտությունը, որ պատմությունը կրկնվում է, այդ թվում նաեւ մեզ մոտ՝ Լեռնային Ղարաբաղում:

ԹԻՎ 1 ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«Բաքվի հայկական տեղեկատվական բյուրոյի զեկույցը Հայաստանի Հանրապետության ռազմական նախարարությանը: Կցվում է Շուշիի բրիտանական առաքելության եւ Ղարաբաղի Ազգային խորհրդի նամակագրությունը

27 փետրվարի 1919 թ.

Շուշիի բրիտանական առաքելությունը ի դեմս մայոր Մոնք-Մեգոնի, Ղարաբաղի հայոց Ազգային խորհրդին է դիմել հետեւյալ նախագծով, որն ընդունվելու դեպքում պետք է հրապարակվի:

«Բրիտանական առաքելությունից: Պաշտոնական հաղորդագրություն:

Բրիտանական հրամանատարությունը հայտարարում է բոլոր բնակիչներին պարտադիր կատարման համար.

Բրիտանական հրամանատարության համաձայնությամբ Զանգեզուրի, Շուշիի, Ջեվանշիրի եւ Ջեբրայիլի գավառների գեներալ-նահանգապետ է նշանակվել դոկտոր Խոսրովբեկ Սուլթանովը: Քաղաքացիական մասով նրա օգնականը հայ է: Կառավարման համար գեներալ-նահանգապետին առընթեր հիմնադրվում է Խորհուրդ, որի կազմում կընդգրկվեն երեք հայ եւ երեք մուսուլման, որպես բրիտանական հրամանատարության ներկայացուցիչ՝ առաքելության մեկ սպա:

Զորքերի բոլոր տեղաշարժերը կատարվում են բրիտանական առաքելության գիտությամբ: Գեներալ-նահանգապետի բոլոր պաշտոնյաներին պահելու համար միջոցները բաց են թողնվում դաշնակիցների գիտությամբ եւ համաձայնությամբ:

Բրիտանական առաքելությունը անհրաժեշտ է համարում մեկ անգամ եւս հավաստել, որ այս կամ այն պետական միավորի մեջ նշված մարզերի պատկանելությունը լուծվելու է խաղաղության կոնֆերանսում: Սույնով բրիտանական առաքելությունը հայտարարում է, որ գեներալ-նահանգապետից եւ նրա մարմիններից արձակվող բոլոր հրամանները անվերապահորեն պետք է կատարվեն ողջ բնակչության կողմից: Նրանց ցույց տրվող ամեն մի դիմադրություն կասեցվելու է ամենավճռական միջոցներով»:

Քննարկելով այդ նախագիծը եւ այն համարելով անընդունելի, Ազգային խորհուրդը տվեց հետեւյալ պատասխանը.

«Շուշի քաղաքի Մեծ Բրիտանիայի առաքելությանը

Ղարաբաղի հայոց Ազգային խորհուրդը լրիվ կազմով, Ղարաբաղի բոլոր շրջանների զորքերի հրամանատարների հետ մեկտեղ, քննարկելով Ադրբեջանի կառավարության կողմից Ղարաբաղում գեներալ-նա-

հանգապետի նշանակման փաստը, հանգել է այն եզրակացության, որ հայկական Ղարաբաղը չի կարող հաշտվել համանման փաստի հետ, քանզի կախվածությունը Ադրբեջանի կառավարությունից, ինչ ձեւով էլ որ այն դրսեւորվելու լինի, Ղարաբաղի հայ ժողովուրդը անընդունելի է համարում իր համար՝ նկատի առնելով այն բռնություններն ու իրավունքների այն ոտնահարումները, որոնց սիստեմատիկ կերպով մինչեւ վերջին ժամանակներս Ադրբեջանի կառավարության կողմից ենթարկվում էր հայությունն ամենուրեք, որտեղ որ նա իր ճակատագիրը կապած է եղել այդ կառավարության հետ: Հայկական Ղարաբաղը փաստորեն ազդարարել է համայն աշխարհին, որ իր գոտում չի ճանաչել եւ չի ճանաչում Ադրբեջանի կառավարության իշխանությունը, ինչպես որ վճռել է Ղարաբաղի ամբողջ հայության վերջերս կայացած համագումարը:

Ելնելով այն բանից, որ հայկական Ղարաբաղը բրիտանական հրամանատարության կողմից ճանաչվել է մի այնպիսի տարածք, որը մինչեւ խաղաղության կոնֆերանսում հարցի լուծումը ենթարկեցված չէ որեւէ պետության, ուրեմն, մասնավորապես ու հատկապես Ադրբեջանին, Ազգային խորհուրդը Ղարաբաղի հայերի համար կառավարման միակ ձեւը համարում է անգլիացի գեներալ-նահանգապետի նշանակումը: Ինչի մասին էլ որ առաքելությանը խնդրվում է միջնորդել անգլիական բարձրագույն հրամանատարության առաջ:

Խորհրդի նախագահ
Խորհրդի քարտուղար

Բաքվի հայկական տեղեկատվական բյուրո»:

(Հայաստանի կենտր. պետական պատմական արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թերթ 25-27 եւ Հայաստանի արխիվների բանբեր, թ.1, 1989 թ.)

ԹԻՎ 2 ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«Հայոց Ղարաբաղի եւ բրիտանական հրամանատարության ներկայացուցիչների՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցի շուրջ կայացած բանակցությունների գրանցումը

26 մարտի 1919 թ.

1. Գնդապետ Շաթելվորթի գրույցը Ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարովի եւ քաղաքի ղեկավար Գերասիմ Իսահակի Մելիք-Շահնազարովի հետ: 1919 թ. մարտի 26, ժամը 11-ից մինչեւ ցերեկվա ժամը 11/2, թարգմանիչ գնդապետ Քլանթենբերգ, ներկա է մայոր Մոնք-Մեզոնը:

Մայորը պատվիրակությանը ներկայացնում է անուն առ անուն:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Գրառում եւ մի շարք հարցեր է տալիս նախ հանգամանորեն, նախագահին, ապա համառոտ՝ քաղաքապետին, գրառելով բոլոր պատասխանները: Բոլոր հարցերին տրվում են հանգամանալից պարզաբանումներ: Որտե՞ղ եք ապրել վերջին ժամանակներս, որտե՞ղ եք մշտապես բնակվում: Խնդրում եմ քարտեզի վրա նշել վայրը: Իսկ մինչ այդ որտե՞ղ եք եղել, որտե՞ղ եք ստացել միջնակարգ, բարձրագույն կրթություն: Արդյո՞ք ծագումով եք Ղարաբաղի շրջաններին: Եղե՞լ եք Երեւանում, Ղարսում, Թուրքահայաստանում: Ի՞նչ նպատակով եք մեկնել արտասահման, որտե՞ղ եք եղել: Ի՞նչ պաշտոն եք զբաղեցնում, ո՞ր կուսակցությանն եք պատկանում: Բացատրեցեք, թե ինչո՞ւ եք անկուսակցական: Արդյո՞ք կալվածք ունեք, եւ որտե՞ղ է այն գտնվում:

ՇԱԹԵԼՎՈՐԹԸ՝ քաղաքապետին: Ձեր ազգանունը, որտե՞ղ էիք ծառայում վերջին ժամանակներս, արդյո՞ք կալվածք ունեք: Քաղաքապետը մանրամասն պարզաբանում է:

ՇԱԹԵԼՎՈՐԹԸ ընդհանուր հարց է տալիս.

Ի՞նչ է ցանկանում ձեր ժողովուրդը, ո՞ւմ եք ներկայացնում դուք: Քաղաքապետը հարցնում է, թե ով պատասխանի. ի՞նքը, թե՞ նախագահը: Նրան բացատրում են, որ՝ նախագահը:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎԸ նկարագրում է դաշնակիցների գալուց առաջ Ղարաբաղում տիրող իրադրությունը, պատերազմը, անգլիացիների հետ հայերի ունեցած հույսերը:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Ի՞նչ է հասկանում ժողովուրդը հանգիստ կյանք ասելով եւ ինչպե՞ս պետք է դրան հասնել:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Մոդուսը հարկավոր է փնտրել Ադրբեջանից դուրս, որի հետ ժողովուրդը չի հաշտվի:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Մենք գիտենք, որ պատերազմի ժամանակ դժբախտ հայ ժողովուրդը բոլորից շատ է տուժել: Հիմա նրան հարկավոր է խաղաղություն եւ անդորր: Դաշնակիցները մտահոգված են այդ բանում: Եվ նրան ավելին են տալիս, քան սկզբնական շրջանում կարելի էր ենթադրել: Ինչ վերաբերում է Ղարաբաղին, ապա այդ հարցը լուծելի է եւ ենթակա է լուծման խաղաղության կոնֆերանսում, իսկ ներկայումս ձեզ հարկավոր է ժողովրդին բացատրել, որ մինչեւ խաղաղության կոնֆերանսի ավարտը նա պետք է ենթարկվի բրիտանական հրամանատարության գիտությամբ եւ համաձայնությամբ նշանակված գեներալ-նահանգապետին:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Դա անհնար է, մենք չենք համարձակվի. ժողովուրդը 4-րդ համագումարում կտրականապես մերժել է Ադրբեջանին, ինչ ձեւով էլ որ այն լինելու լինի:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Ի՞նչի է ձգտում ժողովուրդը:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Մեծն Հայաստանին, որի հետ նրա ամեն ինչն ընդհանուր է:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Դուք խոսում եք ամբո՞ղջ Ղարաբաղի մասին, թե՞ վիճելի գոտու:

Հայաստանի հետ Ղարաբաղի միացումը կախված է խաղաղության կոնֆերանսից:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Ես խոսում եմ վիճելի գոտու մասին, որտեղ 90 տոկոսը հայեր են:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Հայերն ինչպիսի՞ կառավարում են ուզում այդ վիճելի գոտում:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Հայերն ուզում են, որ բարձրագույն կառավարումը գտնվի ձեր ձեռքում: Իսկ նրա կազմում պետք է լինեն երկու ժողովուրդների ներկայացուցիչներ հավասար թվով կամ համամասնորեն:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Դա անհնարին է: Մենք գործ ունենք ոչ թե զանազան մարմինների, այլ կառավարությունների հետ: Ահա, Ղարսում թաթարները չեն ճանաչում Հայաստանի Հանրապետության իշխանությունը: Բայց մենք նրանցից պահանջում ենք ենթարկվել հայերին, եւ նրանք պետք է ենթարկվեն: Նույնպիսի կացություն է ստեղծվել Ղարաբաղում: Այստեղ մենք պետք է գործենք գոյություն ունեցող կառավարության միջոցով: Հակառակ դեպքում հնարավոր չի լինի կարգուկանոնը վերահաստատել:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Վերքերը թարմ են, այսօր դա չի կարելի անել: Ժողովուրդը մեզ ճակատագիր է վստահել, մենք չենք կարող դավաճան լինել, քարոզել ադրբեջանական իշխանությունը: Մենք ակնկալում ենք անդորր եւ խաղաղություն:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Արդյո՞ք Ազգային խորհուրդը ազդեցություն, հեղինակություն ունի ժողովրդի շրջանում:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Այո:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Դուք խելացի՞ մարդ եք համարում Սուլթանովին:

Քաղաքապետին խնդրում է բնութագրել Սուլթանովին:

Քաղաքապետը տալիս է նրա որպես անգլոատյացի եւ թուրքասերի, բնութագիրը:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Գիտեմ, բայց այսուհանդերձ, մեր համաձայնությամբ է նա նշանակվել գեներալ-նահանգապետ: Ճուշիի առաքելությունը վերահսկելու է նրան, եւ նա չի կարող գարշելի բան անել: Գալուց ի վեր նա արդյո՞ք վնաս է պատճառել ձեզ:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Այո, զորքերի առաջշարժումը դեպի Խանքենդի, խրամատները, բռնագրավումները:

Շաթելվորթը բացատրություններ է պահանջում մայոր Մեզոնից: Վերջինս, բռնագրավումներից բացի, մնացածը հաստատում է:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Բռնագրավումների մասին մենք առաքելությանը չենք հայտնել, բայց այդ հողի վրա բախումների հնարավորության մասին նախազգուշացրել ենք:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Խրամատների մասին տեղեկություններ ստանալուն պես ես կարգադրել եմ դադարեցնել այդ աշխատանքը: Բռնագրավումների մասին առաջին անգամ եմ լսում, որ նրանք առանց վճարի ու անդորրագրի հավաքում են ժողովրդից:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Առհասարակ, Ադրբեջանն ընդունակ չէ կարգուկանոն հաստատելու նույնիսկ իր երկրում, նրա ժողովուրդը մեր համեմատությամբ անկուլտուրական է, չի կարելի կուլտուրական մարդկանց ենթարկեցնել անկուլտուրականներին:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Ես համաձայն չեմ. հայերն ու մուսուլմանները գտնվում են համարյա կուլտուրայի միեւնույն մակարդակի վրա: Մի՞թե ձեր ժողովուրդը ծարավի չէ խաղաղության եւ կբռնի բախումների ռիսկի տանող ճանապարհը, եթե մտցվի գեներալ-նահանգապետություն:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Մենք բոլորից շատ ենք ծարավի խաղաղության, բայց ոչ ստորացուցիչ խաղաղության: Եթե մտցվի ադրբեջանական գեներալ-նահանգապետություն, ապա ժողովուրդը կդիմի ամեն ինչի:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Դուք ժողովրդի ներկայացուցիչն եք, ասում են, թե հեղինակություն եք վայելում, դուք պետք է ժողովրդին բացատրեք, որ Ադրբեջանը ժամանակավոր է, որ ձեր ճակատագիրը կախված է խաղաղության կոնֆերանսից: Եվ եթե կոնֆերանսի որոշումից հետո դուք անցնեք Ադրբեջանին եւ չկամենաք մնալ, ապա ազատ կարող եք տեղափոխվել Հայաստան:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Ապագան չէ, որ մեզ հետաքրքրում է: Ես խոսում եմ ժամանակավոր կառավարման մասին: Մենք չենք կարող ժողովրդի մեջ ենթակայություն քարոզել: Դա դավաճանություն կլինի:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Ես նախազգուշացնում եմ, որ Ադրբեջանի եւ նրա գեներալ-նահանգապետի դեմ ուղղված ամեն մի բախում կդիտվի որպես ելույթ ընդդեմ Անգլիայի: Մենք այնքան ուժեղ ենք, որ կարող ենք ձեզ ստիպել ենթարկվել: Դուք ինքներդ եք ներկայացուցիչը, պատասխանատու եք ամեն ինչի համար, եւ ձեզանից ենք պահանջելու: (Ընդգծումը մերն է - Վ. Հ.):

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ: Ինչո՞ւ ժողովրդի համար անելանելի կացություն ստեղծել: Մի այլ ելք գտեք: Կառավարումը վերցրեք ձեր ձեռքը, մենք համաձայն ենք, եթե նույնիսկ գեներալ-նահանգապետը մուսուլման լինի, բայց ոչ թե Ադրբեջանի անունից:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Ես կրկնում եմ, որ մենք չենք կարող ստանձնել երկրամասում վարչակազմ կազմավորողի դեր: Մեր առաքելությունը, որի մեջ մտնում են նաեւ ամերիկացի երկու սպա, ցուցում ունի հետեւելու գեներալ-նահանգապետի գործողություններին, բայց ոչ թե կառավարումը վերցնել իր ձեռքը: Հայերի շահերը ոչ մի դեպքում չեն անտեսվելու, բանգի առաքելությունն իրավունք ունի միջամտել ադրբեջանական վարչակազմի ներքին կարգադրություններին:

Դուք պետք է բացեք հաղորդակցման ուղին, պետք է ստեղծեք հայերի շրջան ներթափանցելու եղանակ, որպեսզի մենք մեր աչքով տեսնենք ու համոզվենք հայերի նկրտումների մեջ: Չէ՞ որ խաղաղության կոնֆերանսը չի որոշում ճշգրիտ սահմանները: Այդ բանը հանձնաժողովներն են կատարում տեղերում, ստուգում փաստերը եւ տվյալների հիման վրա տարանջատում տարածքները:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Դուք միշտ էլ կարող եք ներթափանցել հայերի մեջ, իմանալ ձեզ անհրաժեշտ ամեն բան, սակայն Ադրբեջանի առաջ բոլոր ճանապարհները փակվելու են եւ նրա իշխանությունն էլ չի ճանաչվելու: Խնդրում ենք ձեր ձեռքը վերցնել կառավարումը:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Դա անհնարին է: Դուք պետք է մայորի հետ ետ դառնաք, համոզեք ժողովրդին ճանաչել ադրբեջանցի գեներալ-նահանգապետի իշխանությունը, խաղաղորեն ապրել եւ բարդություններ չստեղծել: Ազգային խորհուրդը մեզ պատասխան կտա ամեն մի անկարգության համար, իսկ հրահրողներն էլ խստիվ կպատժվեն:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Ստեղծվում է անելանելի կացություն, եթե գեներալ-նահանգապետն ուղարկվի, ապա Խորհուրդը հրաժարական կտա, քանզի աշխատելը հնարավոր չի լինի:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Դուք իրավունք չունեք հրաժարական տալ: Դուք պետք է մայորի հետ գնաք եւ աշխատեք այնտեղ կարգուկանոնի վերահաստատման ուղղությամբ:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Ժողովուրդն ինձ անկուսակցականիս, ընտրել է իր շահերը պաշտպանելու համար, այլ կերպ աշխատելու իրավունք չունեմ: Ասպարեզ կելնեն հեղափոխական կուսակցությունները: Կհրավիրենք նոր համագումար, կիմանաք ժողովրդի կարծիքը, կընտրեք մի նոր մարմին: Ես չեմ կարող:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է, որ բախումներ լինեն:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Քոչի սկսվելու հետ (բացատրում է, թե ինչու) անխուսափելի կլինեն, եթե քոչը կատարվի առանց ձեր ղեկավարման, հայտարարում եմ, որ իմ պատասխանատվությունը հանում եմ:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Այդ դեպքում դուք կմնաք այստեղ (ապա դիմում է քաղաքապետին). «Դո՞ւք ինչ կարծիք ունեք բախման վերաբերյալ»:

ՔԱՂԱՔԱՊԵՏ. Ես ներկայացնում եմ հայերին ու մուսուլմաններին, ես բարեկամական կապեր ունեմ մուսուլմանների հետ, որոնք ինձ շատ հարգում են: Ղարաբաղը, որի շուրջ խոսում է նախագահը, ոչ միայն վիճելի հողաշերտ է, այլեւ այն ամբողջովին պատմական սահմաններ է: Սրանից 120 տարի առաջ ամբողջ Ղարաբաղն է եղել իմ նախնիների իշխանության ներքո, իսկ մելիքների օրոք հայերն ու մուսուլմանները ապրում էին հաշտ ու համերաշխ: Այսօր կարելի է առանց Ադրբեջանի էլ այդպիսի կյանք ստեղծել:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Իսկ դուք հետ կդառնա՞ք:

ՔԱՂԱՔԱՊԵՏ. Այո, ես քաղաքապետ եմ եւ պետք է հետ գնամ, բայց խնդրում եմ թույլ տալ մեկ շաբթով մեկնել Թիֆլիս, երեխաներիս տեսության, հետո Շուշի: Առաքելությունը հիանալիորեն գիտի իմ աշխատանքը, իմ գիծը, տակտով լինելը:

ՇԱԹԵԼՎՈՐԹԸ Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎԻՆ. Դուք կմնաք, իսկ դուք (քաղաքապետին) կմեկնեք: Մեզոնին հարցնում է. «Կա՞ն ուրիշ պատասխանատու մարդիկ»: Վերջինս թվարկում է զորապետներին:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Հրամանատարները հեղինակությո՞ւն են վայելում: Նրանք կարո՞ղ են, արդյոք, ստանձնել պատասխանատվությունը:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Հրամանատարները զինվորներ են, առաջնորդներ, իրավազոր չեն քաղաքական հարցեր լուծելու, անպայմանորեն ենթարկվում են Ազգային խորհրդին:

ՇԱԹԵԼՎՈՐԹ. Հարցերը սպառված են (տեղից վեր է կենում), ավելացնում. որտե՞ղ է լինելու հայկական նստավայրը:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Վանում, ապա Էրիվանում:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՈՎ. Ադրբեջանը պրիստավ է նշանակել Խանքենդիում, սակայն նա չի կարող երեւալ հայկական գյուղերում, ահա ակնառու օրինակ»:

(Հայաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 200, գ.1, գործ 243, թերթ 107-108 եւ Հայաստանի արխիվների բանբեր, N1, 1989 թ.):

ԹԻՎ 3 ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«Զանգեզուրի հայկական ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկի նամակը Բաքվի դաշնակցային զորքերի հրամանատարին Ղարաբաղում եւ Զանգեզուրում ադրբեջանական զորքերի կենտրոնացումն անհապաղ արգելելու մասին

Մարտ 1919 թ.

1918-ին անցյալ տարվա իմ առաջընթացը դեպի Շուշի, կասեցվեց գեներալ-մայոր Թոմսոնի կարգադրությամբ: Ինձ հայտնեցին դաշնակից տերությունների հաղթանակով մեծ պատերազմի ավարտի մասին, տերություններ, որոնց զինակիցն եմ համարվում եւ հպարտանում եմ նրանցով: Խոստացել էին, որ միջոցներ են ձեռնարկված, եւ չեն կարող մուսուլմանների կողմից լինել որեւէ առաջարժում, ագրեսիվ գործողություններ, ճնշումներ: Ես լսեցի նրանց, վերադարձա Զանգեզուր, ազնիվ խոսք տալով սպառիչ ջանքեր եւ միջոցներ գործադրել խաղաղությունը,

անդորրը եւ, առանց տարբերություն դնելու, ամբողջ բնակչության նկատմամբ ամենաբարյացակամ վերաբերմունքը վերահաստատելու, իմ գլխավոր հրամանատարի տարածքները վերականգնելու համար:

Ցավոք, ներկայումս ինձ հայտնի է, որ մուսուլմանների զորամասերը առաջ են շարժվում եւ կենտրոնանում Ղարաբաղում, եւ Զանգեզուրում մարտական գիծանքերը է տեղափոխվում տեղից-տեղ:

Այս ամենի մեջ նկատելով կարգադրությունների բեկում ի վնաս հայության բարեկեցության եւ մուսուլմանների կողմից Զանգեզուրի, Ղարաբաղի հայությանն ու ինձ ուղղված մարտահրավեր, թախանձագին խնդրում եմ բնակչության բարօրության համար միջոցներ ձեռնարկել մինչեւ նոյեմբերի կեսերը եղած իրադրության վերականգնման նպատակով, կարգադրել զորամասերը հանել Խանքենդիի տարածքից եւ մյուս վայրերից, որպեսզի կրքերը հանդարտվեն եւ հակագործողություններ չհարուցվեն հայերի կողմից:

Իմ պարտքն եմ համարում հայտնել, որ Ղարաբաղի եւ Զանգեզուրի նահանգի Կապանի, Սիսիանի եւ Մեղրու մահալների հայությունը, ավելի քան 400 հազար հայեր, ոչ մի դեպքում չի կարող իր տարածքում ընդունել Ադրբեջանի որեւէ իրավունք, ինչ էլ որ այն լինի:

Զանգեզուրի հայկական ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ»:

(Հայաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ-370, ց.1, գ. 39, թերթ 7: Հայաստանի արխիվների բանբեր, N1, 1989 թ.)

ԹԻՎ 4 ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«Ղարաբաղի հայոց Ազգային խորհրդի տեղեկագիրը Ղարաբաղի պատմաաշխարհագրական, քաղաքական եւ սոցիալ-տնտեսական կացության մասին

5 մայիսի 1919 թ.

1. Ներածություն

1918 թվականի սկզբներին, երբ Անդրկովկասում Ռուսաստանի իշխանությունը վերացվեց, երկրամասը թողած իրենց իսկ ռուսական զորքերի կողմից սկսեցին ձեւավորվել առանձին պետական կազմակերպություններ, ազգային ինքնորոշման խիստ սկզբունքով: Այդ կազմավորումներից մեկը, որն առաջացավ Արեւելյան Անդրկովկասի տարածքում (Մերձկասպյան հարթավայրը եւ նրան հարող Կուր գետի ավազանը) եւ,

ունենալով բացառապես թուրքական նկարագիր, իրեն շնորհեց Ադրբեջան անվանումը եւ սկսեց ջանքեր թափել, որպեսզի իր սահմաններում ներառնի հայ ժողովրդի վաղնջական սեփականությունը կազմած Լեռնային Ղարաբաղը, որտեղ հայերը այսօր էլ գերակշիռ մեծամասնություն են կազմում:

Արեւելյան Անդրկովկասի այս բողոքը դարձավ ներկայումս այնքան սուր ձեւ ընդունած Ղարաբաղի մասին հարցի առաջացման միակ հիմքը: Քանզի հնարավոր է, որ ներկա դրությամբ այս հարցի նկատմամբ անուշադիր վերաբերմունքը կարող է հանգեցնել անցանկալի բարդությունների եւ այդ երկիրը բնակեցնող ժողովուրդներին ներքաշել ծանրագույն փորձությունների մեջ, ապա ծայրաստիճան անհրաժեշտ է համարվում բացահայտել մշակութային եւ պատմական, էթնիկական, տնտեսական եւ աշխարհագրական այն պայմանները, որոնց վրա հենվելով հայ ժողովուրդը այդ մարզը համարում է իր անքակտելի սեփականությունը: Սույն փաստաթուղթը հետապնդում է հենց այնպիսի խնդիր այն խիստ օբյեկտիվ հետազոտության սահմաններում, որը միակ հեղինակավորն է ազգամիջյան վեճերի արդարացի լուծման համար:

2. Աշխարհագրական միջավայրը

Հայոց կամ Լեռնային Ղարաբաղը ընդգրկում է Սեւանա (Գոկչա) լճից դեպի արեւելք ընկած ամբողջ լեռնային մարզը, որը հյուսիսից եւ հարավից երիզված է մինչեւ Կուր գետի հովիտն իջնող Գանձիտի լեռնաշղթայով եւ մինչեւ Արաքս գետի հովիտն իջնող Բարգուշատի լեռնաշղթաներով: Չնայած արեւելքից Լեռնային Ղարաբաղը հարում է Ղարաբաղյան անունը կրող ընդարձակ տափաստանին, այն իրենից ներկայացնում է աշխարհագրական տեսակետից մի կատարյալ առանձնահատուկ աշխարհ, ուստիեւ կարող է հեշտորեն առանձնացնել եւ միացնել իր հարազատ միջավայրի հետ, այսինքն Կուր-Արաքսի հարթավայրի հետ, որի շարունակությունն էլ նա հանդիսանում է:

Հայոց Ղարաբաղը քարտեզագրական, աշխարհագրական եւ ֆիզիկական տեսանկյուններից մի անխզելի ամբողջություն է կազմում Գոկչայի լճից դեպի արեւմուտք ընդհուպ մինչեւ Ալեքսանդրապոլի հարթավայրը ձգվող լեռնազանգվածների հետ: Դա Հայկական բարձրավանդակի բնությունն է, որը միատեսակ հետք է թողնում այդ ամբողջ ընդարձակ լեռնային երկրի կյանքի վրա, ստեղծում տնտեսական եւ մշակութային կյանքի միատեսակ պայմաններ: Այս տեսակետից Ղարաբաղը ամենասերտ կերպով կազմում է մնացած բարձր լեռնային Հայաստանի, որպես հարազատ միջավայրի, մի մասը:

Ղարաբաղի արեւելյան սահմաններից մինչեւ Երզրում ընկած ամբողջ տարածքում հնարավոր է միայն ալպիական կուլտուրան, որն էլ ստեղծում է միատեսակ տնտեսական ձեւեր, ժողովրդական աշխատանքի, ժողովրդական հոգեբանության տեղական պայմաններ: Հենց այդ պայմանների շնորհիվ է, որ Ղարաբաղը, չնայած քարտեզագրական առումով մասնատված բազմաթիվ առանձին միմյանցից կտրված լեռնային խորշերի, ընդհանուր առմամբ մի ամբողջություն է կազմում ազգագրական, տնտեսական եւ լեզվական առումներով:

Ուստիեւ հարազատ լեռնային միջավայրից Ղարաբաղը բռնությամբ կտրելը, բռնությամբ նրան ուրիշ եւ օտար մշակութային աշխարհի հանձնելը, ինչպիսին Ադրբեջանն է հանդիսանում իր բացառիկ հարթավայրային տնտեսությամբ, տնտեսական շահերի հատուկ կերպով, որը հաճախ թշնամական է ալպիական մշակույթի ժողովուրդների շահերին, կլիներ ոչ մի բանով չբացատրվող անարդարության ակտ, ինչը ընդունակ կլինի միայն խարխլել ժողովրդի կյանքի հիմքերը, կասեցնել տնտեսական եւ մտավոր զարգացման աճը ստեղծելով հակադիր մշակութային շահերի բախումներ:

3. Ղարաբաղը որպես մի տնտեսական ամբողջություն

Ղարաբաղը հանդիսանում է Հայաստանի հյուսիս-արեւելյան գավառը, որի միջոցով հայ բնակչությունը ջանացել է հասնել մինչեւ Կուր գետի հովիտը: Պատմական անցյալում այդ ձգտումը հանդիպել է անհաղթահարելի խոչընդոտների, եւ հայերը ստիպված են եղել ամուր բնակություն հաստատել լեռնային հատվածում եւ բնական միջավայրին համապատասխան ստեղծել ինքնաբավարարող տնտեսական կյանք: Հայոց Ղարաբաղը այդպիսի տնտեսական կյանքի բնույթը պահպանել է նաեւ ռուսական տիրապետության օրոք: Ռուսական իշխանությունը չի կարողացել երկրում ստեղծել ունեցվածքի անվտանգության երաշխիք եւ լուծել փողային հարցը: Այդ հանգամանքը խիստ արտահայտված ազգային կնիք է թողել Ղարաբաղի երկու հատվածների վրա, ինչով էլ պայմանավորվեց տնտեսական շահերի տարբերությունը եւ նստակյացությունը: Երկրամասի վարչական կառուցվածքը եւ Կուր գետի հարթավայրով ճանապարհների անցկացումը ստեղծեց արհեստական ձգտում դեպի այնպիսի կենտրոններ, ինչպիսիք են Ելիզավետպոլը եւ Բաքուն: Սակայն Ղարաբաղը անցյալում կապված էր Հայաստանի կենտրոնի Արարատյան գավառի հետ, հետեւաբար կենտրոնի քաղաքական վերածնունդը կկարողանա վերականգնել նախկին կապերը...

4. Պատմական իրավունք

Այժմյան Ղարաբաղի կազմի մեջ մտնում են հայ ժողովրդի պատմության մեջ նշանավոր երկու գավառ Արցախը եւ Սյունիքը, ինչպես նաեւ ոչ պակաս նշանավոր Ուտիք գավառի մի մասը: Այս գավառները հայերի պատմական կյանքի ամբողջ ընթացքում մի այնպիսի խոշոր դեր են խաղացել, որ նրանք ունեն իրենց սեփական տեղական պատմությունը, որը շարադրում է այնտեղ իրականացված մշակութային-պատմական բնույթի բոլոր շարժումները: Այդպիսին է, օրինակ, 7-10-րդ դարերում Սովսես Կաղանկատվացու գրած Արցախի պատմությունը, 14-րդ դարի հեղինակ Ստեփան Օրբելյանի Սյունիքի պատմությունը («Histoire de la Siounie», ֆրանսերեն թարգմանությունը ակադեմիկոս Բրոսեի): Այս գրավոր հուշարձաններից բացի մեծ թիվ են կազմում նաեւ շինարարական արվեստի հուշարձանները սփռված Ելիզավետպոլի, Ջեվանշիրի, Շուշիի, Ջեբրայիլի եւ Զանգեզուրի նահանգների լեռնային տարածքներում, որոնք վկայում են այն ինտենսիվ քաղաքական կյանքի եւ այն բարձր կուլտուրական բարգավաճման մասին, որոնց ասպարեզը դարեր շարունակ եղել են այդ գավառները:

Հայ արվեստի կոթողներից այսօր ուշադրություն են գրավում երկու հոյակերտ տաճարները, որոնք դարերի ընթացքում ծառայել են իբրեւ մտավոր եւ քաղաքական կենտրոններ: Դրանք են Տաթեւի եւ Գանձասարի տաճարները, որոնք կառուցվել են 9-րդ եւ 13-րդ դարերում: Մինչդեռ Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքում չես գտնի թաթարական մշակույթի թեկուզ չնչին ուշադրության արժանի որեւէ հուշարձան:

Ղարաբաղի պատմությունը սկիզբ է առնում հայերի քաղաքական կյանքի ամենասկզբից եւ բավականին ծավալուն է: Հայ ժողովրդի ճակատագրում այդ գավառի առավել կարեւոր դերը սկսվում է այն պահից, երբ հայկական թագավորությունն ընկնում է միջինասիական հրոսակախմբերի հարվածների տակ եւ երբ քաղաքական կյանքը կենտրոնանում է հյուսիսային Հայաստանի լեռնային մասերում, որտեղ Լոռվա մարզի իշխանների ղեկավարությամբ ստեղծվել էր հայ իշխանների մի հզոր ֆեդերացիա թուրք-մոնղոլների դեմ պայքարը շարունակելու համար: Այդ ֆեդերացիայի անկումից հետո Ղարաբաղի լեռները ամբողջ Հայաստանում մնում են ազգային անկախության միակ օջախը: Մելիքներ անունով հայտնի մանր ֆեոդալական իշխանությունների սերտ ամբողջությունը ճանաչեց Պարսից շահի միայն անվանական իշխանությունը: Դաշինքներով եւ համաձայնեցված գործող այդ մանր իշխանները Հայաստանի կենտրոնական մարզերում հայ ազգային իշխանության

լրիվ վերացման երկար դարերի ընթացքում հանդիսացել են ազգային մտքի միակ կրողները, ժողովրդական ազատության միակ ջատագովները: Հենց այդ ֆեդերատիվ Ղարաբաղն է անընդհատ պատերազմներ մղել ընդդեմ մուսուլմանական իշխողների, որոնք փորձում էին նրանց ենթարկեցնել իրենց իշխանությանը: Այդ պարտիզանական պատերազմների դրվագներով լեփ-լեցուն է հայոց բարձրավանդակի այդ երկրամասի պատմությունը: Նույնպիսի դրվագներ են պատկերված նաեւ հարուստ ժողովրդական բանահյուսության մեջ:

Զգոհանալով իր անկախության վրա արվող հարձակումներից սեփական օջախի պաշտպանության վիճակով, Ղարաբաղի հայկական ֆեդերացիան 17-րդ դարի վերջերից դիվանագիտական հարաբերություններ հաստատեց որոշ արեւմտաեվրոպական պետությունների, այնուհետեւ Ռուսաստանի հետ Պարսկաստանին պատկանող Հայաստանի տարածքում, այսինքն Անդրկովկասի ամբողջ հարավային հատվածում, հայկական հարցը լուծելու համար:

Գոյություն ունի ղարաբաղցի հայ մելիքների եւ եվրոպական տերությունների, հատկապես Ռուսաստանի հետ փոխանակված փաստաթղթերի ժողովածու: Այդ մեծաքանակ փաստաթղթերը կասկած չեն հարուցում, որ այդ երկրները մելիքներին վերաբերվել են ինչպես ինքնիշխան տերերի: Այդպիսին են, օրինակ, Պյոտր Մեծ կայսեր ակտերը: Մելիքներին հղված ցարական դիմումների օրինակ կարող է ծառայել կայսր Պավելի 18-րդ դարի վերջին գրված նամակը, որը սկսվում է այսպիսի խոսքերով. «Տերունական եւ նշանավոր Ղարաբաղ աշխարհի գերազնիվ մելիքներին, Վարանդայի տեր Ջեմշիդ Շահնազարովին եւ Գյուլիստանի տեր Ֆրիդոն Բեգլյարովին եւ այդ նշանավոր աշխարհի բոլոր մյուս մելիքներին ու յուզբաշիներին եւ նրա ողջ ժողովրդին»:

Ռուսական կառավարության պաշտոնական այլ գրություններից հայտնի է դառնում, որ ցարական պալատի եւ մելիքների միջեւ բանակցություններ են ընթացել Ղարաբաղի հայկական թագավորության եւ հարեւան Ղարադաղի (Պարսկաստանի մաս) կազմավորման շուրջ:

Մինչեւ 18-րդ դարի կեսերը հայոց Ղարաբաղի հյուսիսային հատվածում (Ջեվանշիրի եւ Շուշիի նահանգների լեռնային մասը) թաթարներ եւ առհասարակ մուսուլմաններ բոլորովին չեն եղել, եւ այդ ամբողջ տարածքը բնակեցված է եղել հայերով: Այս մասին տեղեկացնում են նույն ռուսական պաշտոնական աղբյուրները: Այսպես, գիտական մեծ ճանաչում գտած ակադեմիկոս Բուդկովի աշխատության մեջ (գիտությունների ակադեմիայի հրատ., հատոր 1, էջ 385-386) մենք գտնում ենք ակնհայտորեն ոչ հայկական աղբյուրներից քաղված հետեւյալ տեղեկությունները. «Ղարաբաղը մի երկիր է, որը գտնվում է Արաքսի ծախափնյակի եւ Կուրի աջափնյակի միջեւ, Մուղանի դաշտից վերեւ, լեռներում:

Նրա ամենագլխավոր բնակիչները հայեր են, որոնց ժառանգաբար կառավարում են իրենց 5 մելիքները կամ բնական իշխանները ըստ կանտոնների (մելիքություններ) թվի:

Յուրաքանչյուրը կարող է տրամադրել մինչեւ հազար զինվոր: Այս մելիքները ըստ Նադիրի (շահի) հավաստման անմիջապես կախված են շահից: Այստեղ իր դիրքով ամենաամուրը Շուշի գյուղն է: Այն պատկանել է Մելիք Շահնազար Վարանդացուն, որը, վեճի մեջ մտնելով մելիքներ Ադամ Զրաբերդցու եւ Յուսուֆ Իրմիդորթցու հետ, դաշինք է կապում Փանահ խանի հետ: Նա Ղարաբաղի մոտակա Ջեվանշիրի գավառի քոչվոր թաթարների մի անհայտ առաջնորդ էր: Մելիք Շահնազարը Նադիրի մահից հետո վերջինիս գիջեց Շուշի գյուղը եւ հնազանդվելով նրան ու միանալով 20 տարի պայքար մղեց իր թշնամի մյուս երկու մելիքների դեմ»:

Այդ պատերազմը շարունակվեց նաեւ Փանահ խանի որդու Իբրահիմ խանի օրոք:

Հայ մելիքները բոլոր ջանքերը գործադրում էին հյուսիսային Ղարաբաղը ենթարկած օտար թշնամական տարրը դուրս վռնդելու համար: Այդ նպատակով էլ նրանք ակնկալում էին Ռուսաստանի աջակցությունը: Բայց հակառակ կողմը նույնպես անդուլ աշխատանք էր տանում:

Իբրահիմ խանը ջանում էր հայ բնակչության շրջան մտցնել եթե ոչ թաթար, ապա առնվազն մուսուլմանական տարրեր: Եվ նա որոշ հաջողություն ունեցավ:

Այսպես հավաստիորեն հայտնի է, որ ներկայումս Ջեվանշիրի նահանգի արեւմտյան հատվածում բնակվող քրդական ծագմամբ այրումները նրա կողմից այստեղ են բերվել Էրիվանի հարթավայրից: Այդ մասին պատմում է մի ականատես ճանապարհորդ, որը հիշյալ վերաբնակներին տեսել է 1780 թվականին Գոկչա լճի ափին, նրանց Ղարաբաղ բերելու ժամանակ:

Ջավթիչ խանի դեմ մելիքների պատերազմը փոփոխական հաջողություններով շարունակվեց մինչեւ 19-րդ դարի սկիզբը, երբ Ղարաբաղը մտցվել էր Ռուսաստանի կազմի մեջ (1805):

Հայերը գոհ էին երկարամյա արյունահեղ պայքարի այդպիսի ելքից: Եթե Ղարաբաղը նրանց ձեռքում չմնաց էլ, ապա թշնամուն էլ չմնաց: Երրորդ արտաքին ուժը հսկայական հեղինակություն էր վայելում եւ իր տրամադրության տակ բավականաչափ միջոցներ ուներ վաղուց ցանկալի կարգուկանոնն ու խաղաղությունը հաստատելու համար: Սակայն բավական էր, որ ավելի քան հարյուր տարի անց ռուսները հեռանային Ղարաբաղի լեռնային հատվածից, բավական էր, որ երկու ժողովուրդը մնային իրենք իրենց, որպեսզի հայ ժողովրդի մեջ կրկին ծառս լիներ ազատության եւ ազգային անկախության հին ոգին:

Ժողովրդի հոգու այդ գիծը վառ կերպով արտացոլվեց 1918 թվականի ամռանը, երբ ամբողջ Անդրկովկասը խոնարհաբար ու սարսափահար գլուխ խոնարհեց թուրքական արշավանքի առաջ եւ միայն Ղարաբաղն էր, որ անկուշտ թշնամուն դիմավորեց զենքը ձեռքին: 400 հոգուց բաղկացած ջոկատը ոչնչացվեց հայերի կողմից Մսմնա գյուղի մոտակայքում, ըստ որում, նրանց ձեռքն ընկան երկու թնդանոթ եւ գնդացիր: Ըստ երեւույթին Ղարաբաղի լեռներում սկսվել էր նոր հայ-թուրքական պատերազմ: Բայց հենց այդ ժամանակ էլ Թուրքիայի զինուժը ջախջախած գեներալ Ալլենբիի հաղթանակը վերջ տվեց Կովկասում նրա տիրապետությանը:

Եվ այդպես էլ այնտեղ հաստատվեց մի իրականություն, որը գոյություն ունեցավ մինչեւ ռուսների գալը, այսինքն հաստատվեց հայկական իշխանությունը:

5

Վերջապես բնակչության իրական տեղաբաշխման սկզբունքն էլ հրամայաբար պահանջում էր Ղարաբաղի շուրջ վիճելի հարցը լուծել հայ ժողովրդի ձգտումների օգտին, քանզի նա էր կազմում գերակշիռ էթնիկական տարրը Ղարաբաղի ամբողջ լեռնային հատվածում:

Ըստ ռուսական կառավարության պաշտոնական վիճակագրական տվյալների, որոնք հրապարակվել են մինչեւ համաեվրոպական պատերազմի սկիզբը, հայերի թիվը Լեռնային Ղարաբաղում հասնում էր 280 հազարի (կլորացված), իսկ թաթարներինը եւ մուսուլմանական հավատը դավանող այլ ազգություններինը 75 հազարի: Ուստի չէր կարելի փոքրամասնությանը զոհաբերել հարյուր հազարավոր ժողովրդի արմատական շահերը:

6

Շարադրվածից պարզ է դառնում, որ Ադրբեջանի վերաբերմունքը կամայական է եւ կոպտորեն ոտնահարում է Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության սրբազան իրավունքները: Այս ոտնձգությունը ոչ մի բանով արդարացված չէ. ոչ երկրի բնությամբ, ոչ տնտեսական կառուցվածքով, ոչ բնակչության էթնիկական կազմով, ոչ ժողովուրդների ինքնորոշման վեհ սկզբունքով, ոչ էլ ավելի քան երկհազարամյա պատմությամբ, որը ժողովրդի արյամբ ու տառապանքների գնով ծնել է հայրենի տարածքի նկատմամբ սեփականության անսասան իրավունքը, մի շարք անթիվ սերունդների սեփականությունը:

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության հոգում այս գիտակցությունը միշտ էլ եղել է կենարար ու գործուն: Այն դուրս մղել անհնարին է այսօր, երբ համայն մարդկությունը անցել է 1914-1919 թվականների ցնցող իրադարձությունների մեծ դպրոցը:

Ժողովուրդները երբեք չեն մոռանում նման մեծ դասերը: Այդ դասերը առավել եւս մոռանալ չի կարող հայ ժողովուրդը, որը պատերազմի հենց սկզբից կանգնեց դաշնակիցների կողմը եւ ազատության ընդհանուր գործին իր նվիրվածությունը ապացուցեց իր զավակների հարյուր հազարավոր դիակներով, իր հայրենիքը համատարած գերեզմանոցի վերածելով:

Հայ ժողովուրդը հիմա էլ ակնածում է իր դաշնակիցներից: Նա խոր վշտով տեսնում է, որ երկրամասում անգլիական բարձրագույն հրամանատարությունը խրախուսում է Ադրբեջանի անարդար ու նվաճողական վերաբերմունքը հայոց Ղարաբաղի նկատմամբ:

Հայ ժողովուրդը հայտարարում է, որ սրբորեն հարգում է յուրաքանչյուր ժողովրդի ինքնորոշման իրավունքը, բայցեւ նույնպիսի վերաբերմունք է պահանջում իր նկատմամբ: Հայոց Ղարաբաղը ողջունում է Ադրբեջանի ինքնորոշումը եւ պատրաստ է նրա հետ բարիդրացիորեն գործել ի բարօրություն երկու ժողովրդի եւ հոգուտ քաղաքակրթության:

Բայց երբ Ադրբեջանը ինքնորոշման իրավունքը միայն իր համար է ընդունելի համարում, ապա այդ տեսակի մտածողությամբ էլ պետք է ընդդիմանալ ըստ ամենայնի:

Կովկասի մեծբրիտանական հրամանատարությունը, իբրեւ չեզոք եւ հեղինակավոր ուժ, համարձակվում ենք կարծել, պետք է ամեն մի ժողովրդի համոզչորեն մատնանշի նվաճողական նկրտումների անթույլատրելիությունը: Նրա քաղաքականության հիմքում պետք է ընկած լինի «ապրիր եւ ուրիշներն էլ թող ապրեն» սկզբունքը, որով նա կարող է պաշտպանել ուժեղ թշնամիներից դարեր շարունակ պաշտպանվող հայ ժողովրդի շահերը:

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա.ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա. ԲԱԲԱԽԱՆՅԱՆ, Ն. ՍԱՐԿԻՍՈՎ,
Դ. ՏԵՐ-ԴԱՆԻԵԼՅԱՆ, Ս. ՀԱԽՈՒՄՅԱՆ,
Մ. ԿԱՐԱԲԵԿՅԱՆ, Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ»

(Հայաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ 200, ց.1, գ.244, թերթ 38-44 եւ Հայաստանի արխիվների բանբեր, N1, 1989 թ.)

ԹԻՎ 5 ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«Ղարաբաղի հայոց Ազգային խորհրդի դիմումը Հայաստանում գերագույն կոմիսար, գնդապետ Հասկելին Ղարաբաղից ադրբեջանական զորքերն ու իշխանությունները, հայերի ջարդի ու կոտորածի կազմակերպիչներին վտարելու համար միջոցներ ձեռնարկելու խնդրանքով

18 օգոստոսի 1919 թ.
քաղ. Թիֆլիս

Համաշխարհային պատերազմի ընթացքում 1918 թ. Անդրկովկասում թուրքական արշավանքից ու ջարդերից եւ սեպտեմբեր ամսում Բաքու քաղաքում կազմակերպված ջարդից հետո բոլոր հայկական մարզերից մազապուրծ են եղել միայն Լեռնային հայոց Ղարաբաղը եւ Զանգեզուրը գեներալ Անդրանիկի գլխավորությամբ դրանց բնակչության տոկուն ու հուսահատ դիմադրության շնորհիվ:

Հայկական Ղարաբաղն ու Զանգեզուրը, որոնք հարում են Հայաստանի տարածքի հյուսիս-արեւելյան մասին, գբաղեցնում են Ելիզավետպոլի նահանգի Ելիզավետպոլի, Ջեվանշիրի, Շուշիի, Կարյագինոյի եւ Զանգեզուրի գավառների լեռնային տարածքը եւ բնակեցված են ավելի քան 300 հազար հայերով, որոնք կազմում են ամբողջ բնակչության 75-90 տոկոսը:

Եթե չլինեին դաշնակիցների տարած հաղթանակները Ֆլանդրիայի դաշտերում, ապա մեր ազատության ու պատվի այդ վերջին պատվարը ժամանակի ընթացքում բնաջինջ կարվեր թուրքական զորքի եւ թուրք-ադրբեջանական եւ կանոնավոր ավազակախմբերի կողմից:

Բրիտանական իշխանությունների գալուց առաջ Անդրկովկասում թուրքերը եւ նրանց տեղացի դաշնակից ադրբեջանցիները ստիպված եղան մաքրել Լեռնային Ղարաբաղում իրենց գրաված կետերը, Շուշի քաղաքը եւ սահմանամերձ կիսավեր Ասկերան հինավուրց ամրոցը: Հայ բնակչությունը թեթեւացած շունչ քաշեց կարծելով, թե վրա է հասել իր ազատագրման ժամը:

Անդրկովկասում բրիտանական իշխանությունների եւ զորքերի ներկայությունը համարելով անձնական անվտանգության եւ իր օջախի ու ունեցվածքի անձեռնմխելիության լավագույն երաշխիքը, Ղարաբաղի եւ Զանգեզուրի հայերը անվերապահորեն կատարում էին բրիտանական հրամանատարության բոլոր պահանջները: Գեներալ Անդրանիկը իր ջոկատով հեռացավ Ղարաբաղի եւ Զանգեզուրի սահմաններից, իսկ տեղական ուժերը հասած լինելով մինչեւ իրենց նախնական բազաները, զորացրվեցին:

Սակայն Ղարաբաղի հայության արդարացի եւ օրինական հույսերը չարդարացան: Բրիտանական հրամանատարությունը պահանջ ներկայացրեց հայոց Ղարաբաղը Ադրբեջանին ենթարկելու եւ վերջինիս դրածո թուրք հայտնի գործակալ եւ հայատյաց դոկտոր Խոսրովբեկ Սուլթանովին ենթարկելու մասին, դա պատճառաբանելով հաղորդակցման գծեր բացելու եւ բնակչության պարենային կարիքների բավարար սպասարկման անհրաժեշտությամբ:

Ապարդյուն եղան հայոց Լեռնային Ղարաբաղի հեղինակավոր մարմինների, Ազգային խորհրդի պատվիրակային համագումարների, Ղարաբաղի եւ Զանգեզուրի հայրենակցական միությունների եւ կենտրոնական մշակութային-լուսավորչական հինգարկների ներկայացուցիչների բոլոր դիմումները հղված բրիտանական հրամանատարությանը երկրամասում թուրք-ադրբեջանական իշխանության հաստատման անթույլատրելիությունը մինչեւ Փարիզի խաղաղության կոնֆերանսում հարցի վերջնական լուծումը լիության եւ այնտեղ ժամանակավոր դաշնակցային կառավարման հաստատման անհրաժեշտության մասին դիմումները զեկուցագրերի, տեղեկատվական հաղորդումների, բողոքագրերի եւ առաջարկների ձեւով: Ցավոք, բրիտանական հրամանատարությունը, որը ոչ բավարար չափով էր ծանոթ Ղարաբաղում տիրող գործերի վիճակին, Անդրկովկասում բնակվող ժողովուրդների փոխհարաբերություններին եւ միակողմանի ու միտումնավոր տեղեկություններ էր ստանում ադրբեջանական իշխանություններից, թույլ տվեց հայերի համար ճակատագրական սխալ եւ ոչ պատշաճ ուշադրություն դարձնելով վերոհիշյալ բոլոր դիմումներին, Ադրբեջանի կառավարությանը թույլատրեց զգալի թվով զորքեր կենտրոնացնել Ասկերանում, Խանքենդիում, Շուշիում եւ Զաբուխում: Իր համար նպաստավոր այդ հանգամանքից օգտվելով ադրբեջանական կառավարությունը, հանդիսանալով թորքական քաղաքականության եւ տիրապետության ուղեկցորդը Անդրկովկասում, իր զորքերն ու թուրք էմիսարներին անարգել մտցրեց երկրամաս, կոտորած կազմակերպելու համար:

Ապարդյուն եղան վերը նշված մարմինների բազմաթիվ նախազգուշացումներն այն մասին, որ բրիտանական հրամանատարության նման վերաբերմունքը չի համապատասխանում զենքի ուժով լուծելու, ում կողմից էլ որ լինի, վիճելի տարածքային հարցերի լուծման անթույլատրելիության մասին դաշնակիցների կողմից ամրագրված սկզբունքին, եւ կհանգեցնեն ոչ թե երկրամասում անդորրի ու կարգուկանոնի հաստատման, այլ միայն արյունահեղության եւ կոտորածի:

Իսկապես, հունիս ամսվա առաջին օրերին Ղարաբաղի գեներալ-նահանգապետ Սուլթանովը, չերկնչելով Շուշիում բրիտանական զորքերի եւ առաքելության ներկայությունից, հարձակում կազմակերպեց քաղաքի հայկական մասի վրա, իսկ մերձակա Ղայբալիշեն, Կրկժան եւ

մյուս գյուղերում սանձազերծեց կոտորած, որին զոհ գնացին մի քանի հարյուր անմեղ կանայք, երեխաներ ու ծերեր:

Բարձրագույն բրիտանական հրամանատարությունը հայկական կառավարությանն ու տագնապած հասարակության ներկայացուցիչներին հավաստիացրեց, որ ինքը վճռական միջոցներ կձեռնարկի անձի եւ ունեցվածքի անվտանգության ապահովման համար ու կհեռացնի կոտորածի մեղավոր դոկտոր Սուլթանովին: Սակայն մեկ ամիս անց, բոլորի համար անսպասելի, Ղարաբաղից հեռացան անգլիական զորքերը, դոկտոր Սուլթանովը վերադարձավ իր նախկին պաշտոնին, իսկ օգոստոսի 10-ին հետ կանչվեց Շուշիի բրիտանական առաքելությունը: Այսպիսով, Ղարաբաղի անպաշտպան հայ բնակչությունը այսուհետ ամբողջովին թողնված է ադրբեջանական իշխանությունների, թուրք էմիսարների եւ զորքերի արյունարբու բնագդներին եւ մենք գտնվում ենք Ղարաբաղում մի նոր, էլ ավելի սոսկալի եւ անխուսափելի կոտորածի նախաշեմին: Դրա հետ մեկտեղ Ղարաբաղի սահմաններից հեռացել են օգնության ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչները, դրանով իսկ բնակչության աղքատ խավին զրկելով ցույց տրվող օգնությունից, աջակցությունից եւ նրան մատնելով սովյալ մահվան:

Եվ ահա անգլիական զորքերի ու առաքելության հեռանալու պահին Ղարաբաղի հայերը հայտնվեցին էլ ավելի անհուսալի կացության մեջ, քան Անդրկովկասում դաշնակիցների հայտնվելու պահին էր: Ղարաբաղի եւ Զանգեզուրի հայրենակցությունը դիմում է ձերդ գերազանցությանը եւ խնդրում վճռական միջոցներ ձեռնարկել ադրբեջանական զորքերն ու իշխանությունները Ղարաբաղի սահմաններից հեռացնելու, այս երկրամասում դաշնակցային կառավարում հաստատելու եւ նրա բնակիչների կյանքը, պատիվն ու ունեցվածքը ապահովելու համար:

Դրա հետ մեկտեղ խնդրում ենք մտնել փախստականների դրության մեջ եւ ամերիկյան կոմիտեն վերադարձնել Շուշիի սովյալներին օգնություն ցույց տալը շարունակելու համար:

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀՐԱՆՏ ԲԱՀԱՏՈՒՐՈՎ

ՂԱՐԱԲԱՂԻ ԵՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ
ՀԱՅՐԵՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՐ. ԲԱԲԽԱՆՅԱՆ

ՆՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ՝ Լ. ՂՈՒԼՅԱՆ, Յու. ՀՈՒՆՈՒՆՑ,
Մ. ՂԱՐԱԲԵԿՅԱՆ»

(Հայաստանի կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 200, ց.1, գ.50, թերթ 104-107 եւ Հայաստանի արխիվների բանբեր, N1, 1989 թ.)

ԹԻՎ 6 ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«Թիֆլիսի եւ Էրիվանի հայրենակցության նախագահների հեռագիրը Հայաստանի կառավարությանը՝ Լեռնային Ղարաբաղի զանգվածային ջարդից փրկված բնակչությանը օգնություն ցույց տալու մասին՝

30 մարտի 1920 թ.
քաղ. Թիֆլիս

Մոտավորապես մարտի 20-ից սկսած գեներալ Նովրուզովի բազմահազարանոց զորքերը եւ Խալիլ-Փաշայի եւ Սուլթանովի մեծաթիվ ավազակախմբերը ուժեղ հրետանիով ու գնդացիրներով հանկարծակի գինաթափ անելու նպատակով հարձակվել են ռազմաճակատի առաջին գծի վրա գտնվող հայոց գյուղերի վրա եւ հրետանային կրակով ավերել մի շարք գյուղեր վերջնականապես բնաջնջելով հրդեհներով: Բնակչությունը սրախողխող է արվել, ունեցվածքը թալանվել, բնակչության փրկված մասը թաքնվել է լեռներում, մեռնելով ցրտից ու սովից: Տեղեկությունները նշում են, որ կոտորածը տարածվել է Գյուլիստանից մինչեւ Զանգեզուր: Անգեն բնակչությունը խուճապի մեջ է Ղարաբաղը կործանվում է: Նրան սպասվում է Ագուլիսի ճակատագիրը: Ադրբեջանական մամուլի հաղորդումները հայերի հարձակումների մասին լրիվ կեղծիք են, որոնց նպատակն է մոլորության մեջ գցել հանրային կարծիքը, ինչպես նաեւ դաշնակից շրջաններին:

Ընդհակառակը, ճշգրիտ հայտնի է, որ ամենուրեք հարձակումները անակնկալի են բերել հայերին: Այստեղ բնակվող բազմաթիվ ղարաբաղցիների անունից, ում ընտանիքները կործանվում են, համոզչորեն խնդրում ենք կառավարության խորհրդարանին բոլոր հնարավոր եռանդագին միջոցները ձեռնարկել Ղարաբաղի ժողովրդին փրկելու համար:

Թիֆլիսի եւ Էրիվանի հայրենակցության նախագահներ՝ ԼԵՌ եւ ԲԱԼԱՅԱՆ»

(Հայաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 200, ց.1, գ. 563, թերթ 3-5 եւ Հայաստանի արխիվների բանբեր, N1, 1989 թ.)

ԹԻՎ 7 ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«Մուսավաթական կառավարության կողմից 1920 թվականի մարտին Ղարաբաղում կազմակերպված ջարդերի եւ կոտորածի մասին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի անդամ, հայտնի հեղափոխական Օջախկուլի Մուսաեւի ՈՍՖՍՀ կառավարությանն ուղղված նամակից

Հունիս 1921 թ.

... Սակայն հանկարծ անցյալ տարվա մարտի 22-ի գիշերը, ինչպես պարզ դարձավ կոմունիստ ընկերների ասածից, գիշերվա ժամը 4-ին սաստիկ փոխհրաձգություն սկսվեց Շուշիում, որտեղ, չնայած դաշնակների գերազանցող ուժին, շուտով քաղաքի ստորին հայոց հատվածը լցվեց մուսուլման սպեկուլյանտներով, քաղքենիներով, կուլակներով եւ այդ կարգի մարդկանցով ու սկսվեց անպաշտպան կանանց, աղջիկների, երեխաների, պառավների, ծերերի անխնա բնաջնջումը: Հայերը ենթարկվեցին զանգվածային կոտորածի, գլխավորապես ներկայիս կարծեցյալ, այսպես կոչված, կոմունիստներ Սաբունչի Մահոմեդ Աբասովի (Ղոչի), Մոլլա Մախի Համզադեի (Մոլլա), Սուրխանբեկ Ադիգյոզալովի եւ նրանց նմանների ղեկավարությամբ:

Ըստ որում, գեղեցիկ հայ աղջիկներին եւ կանանց բռնաբարում էին, որից հետո գնդակահարում եւ այդ ձեւով էլ խարդախ-վայրենի հաշվեհարդար տեսնում, մարդկային զոհեր պատճառում: Նախկին գեներալ-նահանգապետ Խոսրովբեկ Սուլթանովի կարգադրությամբ ջարդերը շարունակվել են ավելի քան 6 օր, հայոց հատվածի բոլոր տները ավերվել են, թալանվել եւ մոխրակույտերի վերածվել, կանացի սեռը տանելով ով որտեղ ցանկացել է, մարդասպան մուսավաթների կողմից հաշվեհարդար տեսնելու համար: Այդ պատմական խարդախ հաշվեհարդարների ընթացքում Խոսրովբեկ Սուլթանովը ճառեր արտասանելով մուսուլմաններին հայտարարել է սրբազան պատերազմի մասին եւ կոչ արել վերջնականապես վերջ տալ Շուշի քաղաքի հայերին՝ չխնայելով կանանց, երեխաներին եւ այլոց...

Օջախկուլի Մուսաեւ»:

(Նախկին մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական բաժանմունքի կուսարխիվ, ֆ. 1022, ց. 2, գ. 168, թերթ 17 եւ «Լեռնային Ղարաբաղը 1918-1923 թ.թ.» փաստաթղթերի ժողովածու, էջ 638-639)

Չնայած վերեւում հիշատակված փաստաթղթերից հետո, ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են, այնուամենայնիվ, որոշ եզրակացություններ կատարենք:

Վերոհիշյալ փաստաթղթից երեւում է, որ 1918-20 թվականներին Լեռնային Ղարաբաղը իրենից ներկայացնում էր մի ինքնուրույն քաղաքական միավոր, թուրք արյունարբուների մեղքով այն իր գերակշիռ հայ բնակչությամբ հանդերձ չգիտես ինչու դարձավ վիճելի տարածք. արդյո՞ք այն միացվելու է Հայաստանին թե Ադրբեջանին, թե հարցը լուծվելու է Ղարաբաղի բուն բնակչության կողմից նրա ազատ կամարտահայտմամբ: Սակայն Ղարաբաղի ճակատագիրը այն ժամանակ որոշվեց Անդրկովկասում (Բաքվում) անգլիական հրամանատարության կողմից գեներալ Թոմսոնի եւ գնդապետ Շաթելվորթի կողմից, որոնք ջանում էին Ղարաբաղը բռնությամբ ենթարկեցնել Ադրբեջանին: Սակայն Ղարաբաղի ժողովուրդը այդ բանը անընդունելի է համարում՝ հաշվի առնելով այն բռնություններն ու իրավունքների ոտնահարումը, որոնց պարբերաբար հայությունն է ենթարկվել Ադրբեջանի կառավարության կողմից ամենուր, որտեղ որ նա իր ճակատագիրը կապել է այդ կառավարության հետ: Ղարաբաղցի հայերը վճռականորեն հայտարարեցին, որ իրենց տարածքում չեն ճանաչում Ադրբեջանի կառավարության իշխանությունը, ինչի մասին որոշել են Ղարաբաղի հայերի գրեթե 9 համագումարներում:

Սակայն չերկնչելով Շուշիում բրիտանական զորքերի եւ բրիտանական առաքելության ներկայությունից, Ադրբեջանի կառավարությունը օգտվելով այն ժամանակ ստեղծված քաոսից եւ իր համար նպաստավոր հանգամանքից՝ 1918 թվականի սկզբին Լեռնային Ղարաբաղ մտցրեց իր զորքերն ու թուրք էմիսարների, որոնք հարձակվեցին Շուշի քաղաքի հայոց հատվածի եւ մերձակա հայկական գյուղերի վրա, կազմակերպեցին զանգվածային կոտորած, որին զոհ գնացին հազարավոր անմեղ հայ կանայք, երեխաներ ու ծերեր:

Բայց անսպասելիորեն ու անակնկալ ճայթեց 1917 թվականի հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը, որի հետ մեծ հույսեր էին կապում ռուսական պետությունը բնակեցնող ժողովուրդները, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հայերը: Սակայն ղարաբաղցի հայերը խաբվեցին: Լենինը եւ Ստալինը, կոպտորեն խախտելով ժողովրդի ինքնորոշման իրավունքը, Լեռնային Ղարաբաղը կտրեցին Հայաստանից եւ հանձնեցին մուսավաթական Ադրբեջանին: Մերկապարանոց չլինելու համար ստորեւ ներկայացվում է Ի. Վ. Ստալինի 1920 թ. հուլիսի 8-ի հ. 345 հեռագիրը՝ հղված ՌԿ(բ)Կ Անդրկովկասի երկրամասի քարտուղար Գ. Կ. Օրջոնիկիձեին՝ Ղարաբաղի հարցում Ադրբեջանին եւ Թուրքիային զորավիգ լինելու անհրաժեշտության մասին:

«Իմ կարծիքն այն է, որ չի կարելի անվերջ խաբս տալու կողմերին, հարկավոր է պաշտպանել կողմերից մեկին, որոշակիորեն, տվալ դեպ-

քում անշուշտ Ադրբեջանին եւ Թուրքիային: Ես խոսել եմ Լենինի հետ, նա չի առարկում:

Ստալին»:

(Նախկին մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական կուսակցական արխիվ, ֆ. 558, ց.1, գ. 4018, թ.1, հեռագրային բլանկ: Տես նաեւ նախկին ԽՍՀՄ Հոկտեմբերյան հեղափոխության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 130, ց.4, գ.496, թ.142 եւ «Լեռնային Ղարաբաղը 1918-1923 թ.թ.» փաստաթղթերի ժողովածու, էջ 524):

Այս առիթով լավ է ասել ռուս մեծ գրող, Նոբելյան մրցանակի դափնեկիր Ալեքսանդր Սոլժենիցինը «Ինչպես կառուցենք Ռուսաստանը» հոդվածում. «... Իլիչն առաջինն է սահմանների հարցը համարել «նույնիսկ տասներորդական» (այսպես են Ղարաբաղը կտրել, միացրել Ադրբեջանին, ինչ տարբերություն, թե որտեղ, այն ժամանակ հարկավոր էր սիրաշահել սովետների սրտակից բարեկամին Թուրքիային)» («Լիտերատուրնայա գազետա», 1990 թ. սեպտեմբերի 18, թիվ 38):

ՈՍՖՍՀ այն տարիների արտաքին գործերի ժողկոմ Գ. Վ. Չիչերինը դեմ էր Ստալինի եւ մուսավաթականների կարծիքին Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու վերաբերյալ, ինչը հավաստում է 1920 թ. հուլիսի 9-ին թվագրյալ նրա հեռագիրը Գ. Կ. Օրջոնիկիձեին.

«Մեզ բազմիցս հայտարարել են, թե իբր Ղարաբաղն ու Զանգեզուրը Ադրբեջանին հանձնելու փոխարեն մեր ժամանակավոր օկուպացիոն իշխանության տակ թողնելը կպառակտի խորհրդային իշխանությունը Բաքվում: Պարզ ու հստակ հայտնեցեք, թե բանն ինչ է: Եթե խոսքը վերաբերում է մուսուլման ազգայնականների զավթողական նկրտումներին, ապա դա վատ քաղաքականություն է, այդ ճանապարհին մենք նպաստելու ենք միայն ազգայնամոլական բնազդների զարգացմանը, սակայն... կհամեմատվենք մուսավաթականների հետ, դրանով իսկ օգնած կլինենք նրանց, իսկ եթե բանը խորհրդային իշխանության ոլորտների ընդլայնման մեջ է, ապա դա ձեռք կբերվի նաեւ ռուսական օկուպացիայի միջոցով: Եթե այստեղ թաքնված է մուսավաթական կողմնորոշման ձգտումը, ապա այն նույնպես հարկավոր է մերժել, որպես հակառակ կողմնորոշում»:

(Նախկին մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական կուսակցական արխիվ, ֆ-64, ց.2, գ.5, թ.52 եւ «Լեռնային Ղարաբաղը 1918-1923 թ.թ.» փաստաթղթերի ժողովածու, էջ 528)

Սակայն Գ. Վ. Չիչերինի սթափ ձայնը լսող չեղավ: Չնայած որ 1921 թ. հուլիսի 4-ին ՌԿ(բ)Կ ԿԿ Կովբյուրոյի պլենումի նիստը Ի. Վ. Ստալինի մասնակցությամբ ընդունեց այսպիսի որոշում. «Լեռնային Ղարաբաղը մտցնել Հայկական ՍՍՀ կազմի մեջ», ինչի օգտին քվեարկեցին Օրջոնիկիձեն, Սյասնիկովը, Ֆիգատները, Կիրովը, սակայն Ի. Վ. Ստալինի ազդեցության տակ տառացիորեն հաջորդ օրը 1921 թ. հուլիսի 5-ին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովբյուրոն վերանայեց իր որոշումը եւ ընդունեց մի նոր որոշում, որտեղ ասված է. «... ա) Ելնելով մուսուլմանների եւ հայերի միջեւ ազգային հաշտության եւ Վերին ու Ստորին Ղարաբաղի տնտեսական կապի, Ադրբեջանի հետ նրա մշտական կապի անհրաժեշտությունից Լեռնային Ղարաբաղը թողնել ԱդրՍՍՀ սահմաններում ընձեռնելով նրան լայն մարզային ինքնավարություն, ինքնավար մարզի կազմի մեջ մտնող Շուշի քաղաքի վարչական կենտրոնով»:

(Նախկին մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական կուսակցական արխիվ, ֆ. 85, ց.18, գ.58, թ.18)

Տեքստից երեւում է, որ դա Ստալինի անհիշալ ձեռագիրն է: Այստեղ որոշակի դեր է խաղացել Նարիմանովը, որը հանդես է եկել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կազմի մեջ մտցնելու Կովբյուրոյի որոշման դեմ եւ պահանջել այդ հարցը փոխադրել ՌԿ(բ)Կ Կենտկոմում, այսինքն Մոսկվայում վճռելու:

Սա արդեն բոլորովին նոր բան է տարածքային վեճերի եւ հարցերի լուծման պատմության մեջ: Նույնիսկ հավատդ չի գալիս, թե կուսակցական մարմինը կարող է երկրների ու հանրապետությունների տարածքներ բաժանել առանց հաշվի առնելու ժողովուրդների կարծիքը: Վ. Ի. Ստալինի եւ լենինյան կուսակցության Կովբյուրոյի կողմից Ղարաբաղի հարցի այսպիսի անարդարացի եւ սուբյեկտիվ լուծումը հանգեցրել է այսօրվա իրադարձություններին ու Լեռնային Ղարաբաղի հայերի արյունահեղությանը:

Բնականաբար, Լեռնային Ղարաբաղի հայերը չէին կարող համաձայնվել Կովբյուրոյի նման հակաժողովրդական որոշման հետ, որը հանգեցրեց էքսցեսների: Կովբյուրոյի որոշումը բարոգելու եւ կարգուկանոն հաստատելու համար Ադրբեջանի ԿԿ Կենտկոմը շտապ կարգով Լեռնային Ղարաբաղ ուղարկեց իր անդամ, կուսակցության Բաքվի քաղկոմի բարտուղար Լեւոն Միրզոյանին, որը ակտիվի ժողովներ անցկացրեց Շուշիում, Քենդխուրդում եւ այլ տեղերում Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում թողնելու մասին Կովբյուրոյի որոշումը պարզաբանելու եւ հավանություն տալու համար: Սակայն Լեռնային Ղարաբաղի հայերի այդ բոլոր համագումարներն ու ժողովները Լեւոն Միրզոյանի մասնակցությամբ հակահարված տվեցին նրան ու Կովկասյան բյուրոյի որոշմանը:

Որ Ղարաբաղի հայերը համաձայն չեն եղել Կովբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշման հետ, ասում է նաեւ այն փաստը, որ Ադրբեջանի ԿԿ Կենտկոմը 20-ական թվականներին բազմիցս քննարկել է «Ղարաբաղի գործը»:

Ղարաբաղի հայերի համար հատկապես ծանր են եղել ճնշումները Ստալինի ու Բագիրովի անձի պաշտամունքի տարիներին:

Վերջին տարիներին հատկապես շատ են խոսում ու գրում ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման տարիներին երկրում եւ տեղերում կատարված ճնշումների մասին, հրապարակում են ճնշումների ենթարկվածների ցուցակները: Բայց մեզ մոտ Արցախում, չգիտես ինչու, նրանց մասին քիչ են խոսում ու գրում, թեեւ մեր ժողովուրդը, հավանաբար, բոլորից շատ է տուժել: Չէ որ արցախցիների համար ողբերգական են եղել եւ 20-ական, եւ 30-ական, եւ 40-ական, եւ 50-ական, եւ 60-ական, եւ 70-ական թվականները: 20-ական թվականների սկզբին, Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին տալու մասին Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի հակաժողովրդական որոշումից հետո, որի հետ չէր կարող համաձայնել ոչ մի ողջախոհ հայ, ադրբեջանական իշխանությունները զանգվածային ճնշումներ սկսեցին Լեռնային Ղարաբաղում: Ս. Մ.Կիրովի քարտուղարության օրոք Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի 1921 թ. սեպտեմբերի 26-ի որոշմամբ (արձանագրություն թ. 30) լուծարվեց Ջավանշիրի (ներկայիս Մարտակերտի) գավառային կուսկազմակերպությունը, իսկ որոշ ժամանակ անց նաեւ Վարանդայի եւ Խաչենի կուսկազմակերպությունները: Ըստ որում մի քանի հարյուր ղարաբաղցի կոմունիստներ կուսակցությունից հեռացվեցին «ազգայնամոլ» եւ «պատահական տարր» լինելու պատրվակներով: Առանձնապես անհնազանդներին բանտային զնդաններ նետեցին:

Ստալինի անձի պաշտամունքի տարիներին էլ ավելի մեծ շեղումներ կատարվեցին, որոնք շատ թանկ նստեցին խորհրդային ժողովրդի, այդ թվում նաեւ արցախցիների վրա: Դա շատ կարեւոր է ընդգծել այն պատճառով, որ երկիրը վերածվել էր համակենտրոնացման ճամբարի: Հատկապես անտանելի էին երեսնական թվականները, երբ մարդիկ արդեն հնարավորություն չունեին ճիշտ եզրակացություններ կատարելու վերեւում եւ տեղերում ղեկավար պաշտոններում գտնվողների քաղաքականության մասին: Անզգույշ խոսքը, գործողությունն ու արարքը գնահատվում էին որպես ոտնձգություն առաջնորդի ճշմարտության մեծ նաշնորհի դեմ: Աստիճանաբար քաղաքական ասպարեզից վերացնում էին ամենաակտիվ ու խելոք ղեկավարներին: Ազգային հանրապետություններում ու ինքնավարություններում չափազանց մոդայիկ էր գործարար ղեկավարներին ազգայնամոլության ու ազգային սահմանափակության մեջ մեղադրելը, ինչը եւ պատճառ էր դառնում նրանց մեկուսացման ու դատապարտման:

Այդպիսի ճակատագիր վիճակվեց նաեւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարներին: Այսպես, 1937 թվականին ազգայնամոլության մեղադրանքով դատապարտվեցին կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Պյոտր Պողոսովը, մարզգործկոմի նախագահ Սուրեն Բաղդասյանը, հողժողկոմ Մուկուչ Արզանյանը, Հադրութի շրջգործկոմի նախագահ Հայկ Բալայանը եւ ուրիշներ: Պյոտր Պողոսովը, Մուկուչ Արզանյանը եւ Հայկ Բալայանը զոհվեցին ստալինյան զնդաններում:

Հատկապես ողբերգական էր արցախյան մտավորականության ճակատագիրը: Ինչպես քսանական ու երեսնական թվականներին, այնպես էլ հետպատերազմյան տարիներին մոդայիկ էր ղարաբաղյան մտավորականությանը ազգայնամոլության, Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու ձգտման մեջ մեղադրելը: Այսպես, 1937 թվականին կուսակցության մարզկոմի նախկին քարտուղար, հիանալի բանաստեղծ ու բարձրակիրթ մտավորական Գրիգոր Ներսիսյանին մեղադրեցին ազգայնամոլության մեջ եւ դատապարտեցին լոկ այն բանի համար, որ նա իր բանաստեղծություններից մեկում գովերգել է Շուշիի ադրբեջանցիների կողմից ավերված Ղազանչեցոց եկեղեցու ոսկեզօծ խաչը: Ավելի ուշ նույնպիսի ճակատագիր վիճակվեց նաեւ հայտնի բանաստեղծ Բոգդան Ջանյանին:

Ուսուցչական ինստիտուտը փակելու եւ մարզի հայկական դպրոցների համար ուսուցչական կադրերի պատրաստումը խոչընդոտելու համար Ստալինի կամակատարներ Բերիան ու Բագիրովը եւ նրանց ադրբեջանցի սպասավորները առանց որեւէ հիմքի նյութ թխեցին Ստեփանակերտի ուսուցչական ինստիտուտում իբր ազգայնամոլական կազմակերպություն գոյություն ունենալու մասին, որի մեջ մեղադրում էին ինստիտուտի տնօրեն Աղասի Սաֆարյանին, դասատուներ գիտությունների թեկնածուներ Ներսես Ոսկերչյանին , Խորեն Բալայանին եւ ուրիշների: Ինստիտուտի տնօրեն Աղասի Սաֆարյանը նման ստահոդ ու ծանր մեղադրանքը տանել չկարողացավ եւ ինքնասպան եղավ, իսկ Խորեն Բալայանին, Ներսես Ոսկերչյանին եւ ուրիշ դասատուների դատեցին այդ կեղծ մեղադրանքով: Նույնպիսի ճակատագիր վիճակվեց նաեւ երկրամասում հայտնի գյուղատնտես Սուրեն Սեյրանյանին, Ասկերանի շրջանի Քարագլուխ գյուղի կոլտնտեսության վարչության նախագահ Գերասիմ Համբարձումյանին եւ շատ ուրիշների:

Երկար է զոհերի ցուցակը: Օրինակ, 20-ական թվականների վերջերին եւ 30-ականի սկզբներին փակվեցին մարզի բոլոր եկեղեցիները, նրանց ունեցվածքը զավթվեց եւ հոգեւորականները ձերբակալվեցին: Կուլակության դեմ պայքարի դրոշի տակ հեռավոր երկրամասեր արտաքսվեցին մարզի բոլոր աշխատասեր ու բարեկեցիկ ապրող գյուղացիները, որոնք աքսորում էլ զոհվեցին:

Ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած մեծ հաղթանակը խորհրդային մարդկանց, այդ թվում եւ Ղարաբաղի հայերի համար, մեծ ցնծություն եւ հպարտություն լինելուց բացի, տվեց նաեւ դառն պտուղներ: Այդ հաղթանակն ավելի ամրապնդեց Ստալինի, նրա սպասյակներ Բերիայի, Բագիրովի եւ մյուս դահիճների անսխալականությունը: Խորհրդային մարդիկ, իրենց օջախները վերադառնալով, բարեբեր փոփոխություններ-

րի հույս էին տածում: Նրանք երազում էին, որ այլեւս բռնություններ, անվերջանալի կամպանիաներ չեն լինի: Բայց կյանքը ցույց տվեց, որ կենտրոնում Ստալինի եւ տեղերում նրա սպասյակների վերցրած կուրսը տոտալ բյուրոկրատիայի եւ նոր ճնշումների կուրս է: Ստալինը գտնում էր, որ առանց մեծ զոհերի սոցիալիզմ կառուցելն անհնար է, որ առանց հասարակական գիտակցությունը մշտապես լարվածության մեջ պահելու, առանց դժվարությունների եւ ներքին թշնամիների դեմ պայքարի չեն կարող լուծել իրենց խնդիրը՝ կառուցել սոցիալիզմ: Դա, մյուս տարածաշրջանների հետ միասին, իրենց վրա զգացին նաեւ արցախցիները:

1949 թ. հունիսի 13-ին գիշերը կուսակցության մարզկոմի այն ժամանակվա առաջին քարտուղար Սեդրակ Աբրահամովի ստորագրած ծանուցագրով Ստեփանակերտ քաղաքի զորամասի ակումբում հավաքվեց մարզի ամբողջ կուսակցական ակտիվը: Ակտիվի ժողովը վարում էր առաջին քարտուղարն ինքը: Նա խոսքը տվեց ՊԱԿ-ի մարզային վարչության պետ, գնդապետ Զիալովին, որը պատմեց կուսակցական ակտիվիստներին հավաքելու նպատակի մասին եւ առաջադրեց խնդիրը: Նա հայտարարեց, որ այդ գիշեր մի կարեւոր գործողություն պետք է կատարվի նախկինում դաշնակցական կուսակցության մեջ գտնված կամ նրան աջակցած անձանց եւ գերմանական գերության մեջ եղած անձանց ձերբակալումն ու մարզից՝ հեռավոր երկրամասեր աքսորումը: Ըստ որում նրանք աքսորվում են ամբողջ ընտանիքներով: Յուրաքանչյուր ակտիվիստ պետք է գիշերը մեկ սպայի եւ երկու զինվորի հետ անհապաղ ներկայանա մատնանշված հասցեներով եւ կատարի կարեւոր պետական առաջադրանքը: Ճանապարհ ընկնելուն պատրաստվելու համար ընդամենը մեկ ժամ տվեցին:

Այդ սեւ օրը՝ 1949 թ. հունիսի 13-ին, Լեռնային Ղարաբաղից Սիբիր աքսորվեցին հարյուրավոր անմեղ հայ ընտանիքներ: Նրանց թվում էին Ստեփանակերտ քաղաքի այն ժամանակ միակը հանդիսացող ռուսական միջնակարգ դպրոցի տնօրեն, հիանալի մտավորական Համազասպ Ղուկասյանը, Ղարմետաքսկոմբինատի պահեստապետ Կարապետ Ասրյանը, իմ ճակատային ընկեր, երաժիշտ Գերասիմ Խաչատրյանը, Խնածախ գյուղի շարքային կոլտնտեսական Հակոբ Ավագյանը եւ շատ ու շատ ուրիշներ:

Իսկ թե Արցախից քանիսն են զոհվել ստալինյան գնդաններում՝ դժվար է հաշվել: Կարծում ենք՝ դրանում մեզ պետք է օգնի ԼՂՀ ազգային անվտանգության վարչությունը, որը Հայաստանի Հանրապետության օրինակով պետք է թերթերում հրապարակի ստալինյան բռնակալության տարիներին Լեռնային Ղարաբաղից եղած բոլոր զոհերի ցուցակները:

Չնայած ճնշումներին, Ղարաբաղի հայերը շարունակում էին Կենտրոնը «ռմբակոծել» ղարաբաղյան հարցի լուծման մասին նամակներով

ու խնդրագրերով: Այդ հարցի վերաբերյալ իրեն ուղղված բազմաթիվ դիմումներից ելնելով, Հայաստանի ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը, Հայրենական մեծ պատերազմի ավարտից շատ չանցած՝ Հայաստանի ԿԿ Կենտկոմի եւ ԺԿԽ-ի անունից նամակով դիմեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմին՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու խնդրանքով:

Ստորեւ բերում ենք այս նամակի տեքստը.

«ՀամԿ(բ)Կ Կենտկոմ

Ընկեր Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինին

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, որը հարում է Հայաստանի տարածքին, 1923 թվականից մտնում է Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմի մեջ: Այդ մարզի բնակչությունը հիմնականում հայ է: 153 հազարից 137 հազարը հայեր են:

Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսությունը Հայաստանի հյուսիսային մասի հետ նույնանման է: Լեռնային Ղարաբաղը Հայաստանի մեջ մտնելը մեծապես կնպաստեր նրա զարգացմանը, եւ կբարելավվեր տնտեսության ղեկավարումը: Հայաստանի հանրապետական մարմինների կողմից ղեկավարման դեպքում կուժեղանար բնակչության զանգվածային-մշակութային եւ քաղաքական սպասարկումը մայրենի լեզվով:

Լեռնային Ղարաբաղի Հայաստանի կազմի մեջ մտնելը տեղական կադրերին հնարավորություն կտար մայրենի լեզվով շարունակել բարձրագույն ուսումը Հայաստանի բուհերում: Մյուս կողմից, Հայկական ԽՍՀ-ը կարող էր ազգային կադրեր ստանալ Լեռնային Ղարաբաղի մարզից, որոնք աչքի են ընկնում իրենց գործարարությամբ, սակայն ներկայումս, բնականաբար, չեն կարողանում լիովին օգտագործվել Ադրբեջանում:

Ելնելով Լեռնային Ղարաբաղի բնակչության այդ ցանկությունից, Հայաստանի Կենտկոմը եւ ժողկոմխորհը ՀամԿ(բ)Կ-ի եւ միութենական կառավարության քննարկմանն են ներկայացնում Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը որպես Ղարաբաղի մարզ՝ Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ մտցնելու հարցը:

Այդ հարցի դրական լուծման դեպքում Հայաստանի Կենտկոմը եւ ժողկոմխորհը կառավարությանը կդիմեն Ղարաբաղի նախկին կենտրոն Շուշի քաղաքի վերականգնման մասին առաջարկությամբ, որն ավերվել է խորհրդային իշխանության հաստատումից առաջ:

Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Հարությունով Գր.

Նոյեմբեր 1945 թ.»:

(տես ПААФ ИМЛ,ф. 1,оп.25, д. 42 и сборник "Карабахский вопрос",стр. 77-78)

Ստալինը Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի նամակի քննարկումը հանձնարարեց իր օգնական դահիճներ Գ. Մ. Մալենկովին, Լ. Պ. Բերիային եւ Մ. Զ. Բագիրովին:

Գ. Ա. Հարությունովին հավանաբար հայտնի չի եղել, որ հենց ուզուրպատոր Ստալինն է, լինելով ազգությունների ժողկոմ, ի հաճույս Թուրքիայի 1921 թ. հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյում որոշել Լեռնային Ղարաբաղի տեղը, այդ պատճառով էլ հազիվ թե նա փոխի իր որոշումը:

Ի պատասխան Գ. Ա. Հարությունովի նամակի, Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմի այն ժամանակվա առաջին քարտուղար Միրզաֆար Բագիրովը 1945 թ. դեկտեմբերի 10-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Գ. Մ. Մալենկովին մի նամակ հղեց, որի մեջ հեգնանքով համաձայնություն արտահայտեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանին հանձնելուն առանց Շուշիի շրջանի եւ Հայկական ԽՍՀ-ին, Վրացական ԽՍՀ-ին ու Դաղստանի ԻԽՍՀ-ին հանդիպական հայց ներկայացրեց մասնակիորեն ադրբեջանցիներով բնակեցված մի շարք շրջաններ Ադրբեջանին հանձնելու մասին:

Հրատապ հարցն այդպես էլ չուսումնասիրվեց եւ ըստ էության չլուծվեց: Ստալինի օրոք Մոսկվան, ՀամԿ(բ)Կ-Կենտկոմն այդպես արձագանքեցին Հայաստանի ղեկավարության եւ Լեռնային Ղարաբաղի հայության արդարացի պահանջին:

Սակայն շարունակում էին երկրի կենտրոնական մարմիններ՝ ԽՄԿԿ Կենտկոմ, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ հոսել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչների ու շարքային հայերի նամակները՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու, պատմական արդարությունը վերականգնելու խնդրանքով: Մայր Հայաստանի հետ վերամիավորման համար շարժումը հատկապես լայնորեն ծավալվեց 1960-ական թվականներին: 1965 թվականի հանրագրի տակ կար 50 հազար ղարաբաղցի հայերի ստորագրություն: 1965 թ. հունիսին ԽՄԿԿ Կենտկոմին դիմեցին նաեւ մարզային կազմակերպությունների 13 լիովին հարգված ղեկավարներ, որոնց ոգեշնչողներն էին արցախցիների սիրելիներ՝ կուսակցության մարզկոմի նախկին երկրորդ քարտուղար Սարգիս Աբրահամյանը եւ մարզգործկոմի նախագահի նախկին տեղակալ, գրող եւ պատմաբան Բագրատ Ուլուբաբյանը: Այդ նամակը մեծ իրարանցում գցեց ինչպես Մոսկվայում, այնպես էլ Բաքվում ու Ստեփանակերտում: Ստորեւ բերում եմ այդ պատմական փաստաթղթի տեքստը որոշ կրճատումներով.

«ԽՄԿԿ Կենտկոմի նախագահությանը

ընկ. Լ. Ի. Բրեժնեւին

Ա. Ն. Կոսիգինին

Ա. Ի. Միկոյանին

Մենք երկար ժամանակ տարակուսանքի մեջ էինք՝ գրե՞լ այս նամակը, թե՞ ոչ: Մենք կարծում էինք, թե Ադրբեջանի ԿԿ Կենտկոմն ու կառավարությունը կփոխեն իրենց վերաբերմունքը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի նկատմամբ, թե մեր մարզի ղեկավարման գործում նրանց թույլ տված սխալները բխում են գործերի, Լեռնային Ղարաբաղի աշխատավորների շահերի ու պահանջմունքների չիմացությունից: Ավա՜ղ, մենք մոլորության մեջ էինք:

Բոլորին հայտնի է, թե ինչպիսի տեմպերով են զարգանում մեր երկրի ժողովրդական տնտեսությունը, մշակույթը, գիտությունն ու տեխնիկան: Այդ զարգացումը տեղի ունի բոլոր հանրապետություններում, մարզերում, երկրամասերում ու շրջաններում: Իսկ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, չգիտես ինչու, տխուր բացառություն է կազմում:

Ո՞րն է պատճառը: Չէ՞ որ Ղարաբաղի հողը դարեր ի վեր համարվել է առատաբաշխ ու բարեբեր եւ ո՛չ իգուր տեղը: Ղարաբաղյան այգեգործները, բանջարաբույծներն ու անասնապահները, որմնադիրներն ու կահույքագործները համարվել են իրենց գործի հմուտ վարպետներ: Չէ՞ որ Լեռնային Ղարաբաղը, որ Կապանի ու Զանգեզուրյան լեռների շարունակությունն է հանդիսանում, հարուստ է պղնձի, մոլիբդենի, արճճի, իսլանդական շպատի եւ այլ հանքային թանկարժեք հանածոների վիթխարի պաշարներով, ինչպես նաեւ հանքային բուժիչ ջրերի տասնյակ աղբյուրներով: Ինչո՞ւ նրանք չեն օգտագործվում: Ինչո՞ւ գերազանցապես գյուղատնտեսական մարզ համարվող Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության 45 տարիների ընթացքում չի ձեռնարկվել ջրատնտեսական որեւէ խոշոր միջոցառում, երբ ամեն տարի երաշտի պատճառով կորցնում ենք տասնյակ հազար տոննաների բերք, իսկ մեր լեռնային գետերի ջրերը հոսում են անօգուտ կամ ոռոգում են միայն մեր հարեւանների դաշտերը:

Ինչո՞ւ գյուղատնտեսական այս մարզում մինչեւ այժմ չի կառուցվել գյուղատնտեսական մթերքներ մշակող արդյունաբերական որեւէ խոշոր ձեռնարկություն: Ինչո՞ւ այդ տիպի միակ ձեռնարկությունը, Ստեփանակերտի սենդկոմբինատը, որի շինարարությունը ձգձգվել էր ուղիղ 8 տարի, շահագործման հանձնվելուն պես էլ փակվեց, իսկ սարքավորումները քանդվեցին ու բախշվեցին հարեւան ադրբեջանական շրջաններին: Եվ դա այն ժամանակ, երբ մեր մարզում սպառման օջախների բացակայության պատճառով ամեն տարի չեն հավաքվում ու փչանում են հազարավոր տոննաների բանջարեղեն ու մրգեր:

Վերջին չորս-հինգ տարիներին նկատվում է մարզի ձեռնարկությունները ու շինարարական կազմակերպությունները հանրապետական կազմակերպություններին կամ մարզից դուրս գտնվող մարմինների կցելու տենդենց: Այս եւ ուրիշ պատճառներով 1962 թ. մեր մարզում բռնկվել են աշխատավորների դժգոհություններ ու ըմբոստացումներ: Վախենալով հետեւանքներից ԱդրԿԿ Կենտկոմն ու կառավարությունը շուտափույթ ընդունեցին ծանվալուն որոշում «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական տնտեսության զարգացման ու աշխատավորների մշակութային-կենցաղային սպասարկումը բարելավելու միջոցառումների մասին»: Այդ որոշման մեջ չկան մարզի տնտեսական վերելքն ապահովող միջոցառումներ: Եվ, այնուամենայնիվ, նախատեսված միջոցառումների 70-80 տոկոսը մնացել է թղթի վրա: Դեռ ավելին, տարեցտարի մարզի արդյունաբերությունը ետ է աճում: 1964 թ. համեմատությամբ ընթացիկ տարում համախառն արտադրանքի պլանը իջեցվել է 16,9 տոկոսով, երբ անցյալ տարվա պլանը կատարված է եղել 100,9 տոկոսով:

Ստեփանակերտում գորգագործական նոր ֆաբրիկա են կառուցել եւ ավարտելուն պես փակել: Կրճատվել են ֆաբրիկայի գործող բաժինները, որի հետեւանքով ավելի քան 100 վարպետներ մնացել են անգործ:

Մարզի խոշորագույն արդյունաբերական ձեռնարկությունում մետաքսկոմբինատում, կրճատվել են ոլորման եւ գործվածքային արտադրությունները, եւ 130 բանվորներ ազատվել են աշխատանքից: Ինչպես նշեցինք, մարզի շատ կազմակերպություններ ու ձեռնարկություններ տրվել են մարզից դուրս գտնվող կազմակերպությունների իրավասությանը, որը շատ վատ է անդրադարձել աշխատանքի կազմակերպման վրա: Մարզային շինարարական հ. 59 վարչությունում, որը տրվել է Մինգեչաուրի հ. 5 տրեստին, դա արտացոլվել է առավել ցայտուն: Այստեղ ծայրահեղ վատ է նյութատեխնիկական սպասարկումը, որի պատճառով կառույցներում պարապուրդներն ու հոսունությունը դարձել են սովորական երեւույթ: Միայն ընթացիկ տարվա հինգ ամսում 540 բանվորներից 220-ը հեռացել են մարզից:

Ստեփանակերտում հարյուրավոր անգործ մեխանիզատորներ ու վարորդներ կան: Սակայն քաղաքի ու մարզի կառույցներում, որպես վարորդներ ու մեխանիզատորներ, աշխատում են Մինգեչաուրից գործուղված մարդիկ, որոնք ստանում են գործուղման ծախսեր ու ձրի օգտվում են կոմունալ բոլոր ծառայություններից:

Մարզում տնտեսական ու մշակութային օջախներ ստեղծելու մասին մարզային կազմակերպությունների ու աշխատավորների խնդրանքներին Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարները պատասխանում են մերժումով: Պարզապես նրանք չեն ցանկանում Լեռնային Ղարաբաղում կատարել կապիտալ ներդրումներ: Սակայն կլիներ չարյաց կեսը, եթե նրանք բավարարվեին դրանով: Դժբախտաբար մեր մարզի նկատմամբ նրանց վերաբերմունքի մեջ չի կարելի չտեսնել վատագույնը. նրանք անում են ամեն ինչ մարզի տնտեսությունը խարխլելու, մշակութային ամեն մի առաջաքայլ խափանելու համար:

Դա դժվար չէ տեսնել գյուղատնտեսական օրինակի վրա:

1965 թ. նախնական պլանը հացամթերքների գծով հանրապետությունում իջեցվել է 36 տոկոսով, իսկ մեր մարզում՝ ընդամենը 18: Այդ այն դեպքում, երբ մարզում հացահատիկայինների համար չկան ոռոգվող հողեր, եւ մարզի կոլխոզներն ամեն տարի պետությունից գնում են 20-25 հազար տոննա սերմեր ու կոնցենտրատներ:

Համեմատեցեք մեր մարզի եւ նույն ԱդրԽՍՀ Նախիջեւանի ԻԽՍՀ-ի պլանները: Նախիջեւանի հանրապետությունը, որի տարածքը մեր մարզից ավել է 700 քառ.կմ-ով (իսկ ցանքատարածությունների ու ոռոգվող հողերի տեսակետից առավել եւս), պետությանը կվաճառի շուրջ 2000 տոննա հաց, իսկ մեր մարզը՝ 5000:

Խնդրում ենք ուշադրություն դարձնել հետեւյալ փաստի վրա. 1966 թ. Նախիջեւանի հանրապետությունը պետությանը պետք է վաճառի 11800 տոննա բամբակ, 1970 թ. ընդամենը 6,5 հազար տոննա: Իսկ մեր մարզի պլանը մինչեւ 1970 թ. թողնվել է նույնը, երբ հանրապետության Մինիստրների խորհրդի որոշմամբ բամբակի համար նախատեսված հողերի զգալի մասում արդեն խաղողի այգիներ են գցված:

Հանրապետությունում 1965 թ. նախնական պլանի համեմատությամբ մսի վաճառքի մակարդակը իջեցվել է 18 տոկոսով, իսկ մեր մարզում միայն 2,5 տոկոսով: Առաջիկա 5 տարում նախատեսված է հանրապետությունում մսի արտադրությունն ավելացնել 2,7-3 տոկոսով, իսկ մեր մարզում՝ 12-13 տոկոսով...

Առհասարակ մեր մարզի նկատմամբ հանրապետական կազմակերպությունների կողմից միշտ էլ կիրառվում է հետաքրքիր մի խաղ. վերադասներն ընդունում են գեղեցիկ որոշումներ, տալիս բազմախոստում կարգադրություններ եւ այլն, իսկ ստորադասներն անպատիժ կերպով չեն կատարում այդ որոշումներն ու կարգադրությունները:

Մենք լրջորեն անհանգստացած ենք մարզի բնակչության մեծ հոսունությամբ: Մարդիկ զանգվածաբար հեռանում են մարզից՝ ուրիշ վայրերում աշխատանք գտնելու հույսով:

1939 եւ 1959 թ.թ. մարդահամարների միջեւ ընկած ժամանակահատվածում մարզից հեռացել են ավելի քան 110 հազար բնակիչներ: Միայն Հադրութի շրջանում 1939 թ. ապրում էր 27,1 հազար մարդ, իսկ հիմա՝ ընդամենը 16,8 հազար:

Ցանկանում ենք ձեր ուշադրությունը հրավիրել նաեւ մի ուրիշ փաստի վրա: 1939 թ. մեր մարզում ապրում էր 150 հազար մարդ, իսկ ԱդրԽՍՀ Նախիջեւանի ինքնավար հանրապետությունում՝ 127 հազար:

4. Գրիգոր ՍՏԵՓԱՆՅԱՆ
մարզային ռադիոյի ավագ խմբագիր

5. Արամ ԲԱԲԱՅԱՆ
Ստեփանակերտի հ. 2 սովխոզի դիրեկտոր

6. Արսեն ՄՈՒՔԱՆՅԱՆ
Սոսի Շահումյանի անվան կոլխոզի նախագահ, Ադրբ. Գերագույն խորհրդի դեպուտատ

7. Գուրգեն ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
կուլտուրայի մարզային վարչության պետ

8. Բոգդան ՁԱՆՅԱՆ
բանաստեղծ

9. Միքայել ԿՈՐԳԱՆՅԱՆ
հանրապետության ժողովրդական դերասան

10. Արկադի ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Ստեփ. հ. 59 շինվարչության պետ

11. Ալբերտ ՍԵՅՐԱՆՅԱՆ
Ստեփ. էլեկտրատեխնիկական գործարանի դիրեկտոր

12. Մաքսիմ ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ստեփ. ռադիոյի ավագ խմբագիր

13. Սերգեյ ԳՐԻԳՈՐՅԱՆ
հ.59 շինվարչության գլխավոր ինժեներ»:

(Բագրատ Ուլուբաբյան, «Արցախյան գոյապայքարը», Երեւան 1994 թ., էջ 207-215)

Այդ դիմումների հիման վրա 1966 թ. օգոստոսի 8-ին ընդունած որոշմամբ ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարությունը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմին եւ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմին հանձնարարեց մեկ ամսվա ժամկետում համատեղ կերպով առաջարկություններ նախապատրաստել Լեռնային Ղարաբաղի մասին: Բայց այս անգամ եւս հարցի լուծումը խոյահարվեց Ադրբեջանի ղեկավարության կողմից (Ախունդով, Ալիխանով, Իսկենդերով), որը աջակցություն գտավ ԽՄԿԿ Կենտկոմի երկրորդ քարտուղար, հայատյաց Մ. Սուսլովի կողմից: Նրա կարգադրությամբ նշված որոշումը շտապ կերպով հետ պահանջվեց կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմից:

Սակայն դրանով գործը չավարտվեց: Ղարաբաղի հարցի շուրջ բազմաթիվ առաջարկներ էին ուղարկվում երկրի կենտրոնական մարմիններին ու Սահմանադրական հանձնաժողովին ՍՍՀՄ նոր սահմանադրության 1977 թվականի նախագծի հանրաժողովրդական քննարկման ժամանակ: Այդ առթիվ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահությունը 1977 թվականի նոյեմբերի 23-ին քննության առավ այդ առաջարկները եւ միանգամորեն օբյեկտիվորեն հավաստեց հետեւյալը.

«Մի քանի տասնամյակ առաջ պատմական մի շարք հանգամանքների բերումով Լեռնային Ղարաբաղը արհեստականորեն միացվեց Ադրբեջանին: Այդ անելիս հաշվի չեն առնվել մարզի պատմական անցյալը, նրա ազգային կազմը, ժողովրդի ցանկությունը եւ տնտեսական շահերը: Տասնամյակներ են անցել, եւ Ղարաբաղի հարցը շարունակվում է հոլովվել, անհանգստության եւ անբարյացակամության պահեր ծնել դարավոր բարեկամությամբ կապված երկու հարեւան ժողովուրդների միջեւ: Պետք է Լեռնային Ղարաբաղը (հայերեն Արցախ) միացնել Հայկական ՍՍՀ-ի հետ: Այդ դեպքում ամեն բան կընկնի իր օրինական տեղը»:

(ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահության 1977 թ. նոյեմբերի 23-ի նիստի արձանագրութուն, հ. 61, 11-4131, Հայկական ՍՍՀ-ից, Վրացական ՍՍՀ-ից, Նախիջեւանի ԻՍՍՀ-ից, ԼՂԻՄ-ից ստացված նամակներ: Աշխատավորության առաջարկներ եւ դիտողություններ)

ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահության կողմից արված հիանալի փաստագրում եւ շատ օբյեկտիվ եզրակացություններ Ղարաբաղի հարցի շուրջ. սակայն ՍՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի մոսկովյան սեւ ուժերը (Մ. Սուսլով եւ ուրիշներ), Ադրբեջանի ղեկավարությունը (Հ. Ալիեւ եւ ուրիշներ) այս անգամ էլ արգելափակոց են դնում ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահության շատ խելացի եւ օբյեկտիվ առաջարկի դիմաց:

Սակայն մարզի աշխատավորները շարունակում էին գրել միութենական կուսակցական եւ պետական մարմիններին խնդրելով ընդառաջ գնալ իրենց ձգտումներին, վերականգնել պատմական արդարությունը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը վերամիավորել Հայկական ԽՍՀ-ի հետ: Հատկապես դիմումները շատացան ՍՄԿԿ 27-րդ համագումարի օրերին, որը անցկացվեց Մոսկվայում, 1986 թ. փետրվարի 26-ից մինչեւ մարտի 6-ը: Այդ հարցով 27-րդ համագումարին դիմեցին աշխարհահռչակ այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամներ Տ. Ս. Խաչատուրովը, Ի. Լ. Կնունյանցը, Ա. Գ. Աղանբեկյանը, Մ. Խ. Չայլախյանը, մշակույթի գործիչներ, ժողովրդական արտիստներ Ջ. Ա. Դոլուխանովան, Պ. Գ. Լիսիցյանը եւ ժողովրդական նկարիչ Ն. Բ. Նիկողոսյանը:

Կարծում եմ, ընթերցողի համար հետաքրքիր կլինի իմանալ, թե այդ ակնառավոր գիտնականներն ու մշակույթի վարպետները ինչի մասին են գրել: Ուստի ստորեւ ներկայացվում է ՍՄԿԿ 27-րդ համագումարին հղված նրանց նամակի լրիվ տեքստը, որի պատճենը սիրով ինձ է տրամադրել հանգուցյալ ակադեմիկոս Տիգրան Խաչատուրովը, երբ 1988 թ. մարտի 2-ին մի խումբ գիտնականների հետ եկել է Ստեփանակերտ: Ահա այդ նամակը.

«Սովետական Միության Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար ընկ. Միխայիլ Սերգեեւիչ Գորբաչովին,
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ ընկ. Անդրեյ Անդրեեւիչ Գրոմիկոյին,
ՍՄԿԿ 27-րդ համագումարի պատգամավորներին

Հարգելի ընկերներ

Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի վաղնջական հայոց հողերը Սովետական Հայաստանի հետ վերամիավորելու մասին հարցի առնչությամբ Ղարաբաղի եւ Նախիջեւանի հայերի ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի եւ կուսակցության 27-րդ համագումարին հղված դիմումի առնչությամբ հայտնում ենք մեր նկատառումները այդ առիթով:

Սովետական Հայաստանի կազմից դուրս Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի վերջին ավելի քան 60 տարվա ընթացքում տեղի է ունենում հայ բնակչության զանգվածային արտահոսք դեպի ՍՍՀՄ այլ տարածաշրջաններ, ինչը չէր կարող բացասաբար չանդրադառնալ այդ տարածքների սոցիալ-տնտեսական եւ մշակութային զարգացման վրա: Այսպես Լեռնային Ղարաբաղը եւ Նախիջեւանը արտադրողական ուժերի զարգացման մակարդակով հետ են մնում Հայկական ՍՍՀ իրենց սահմանակից այնպիսի շրջաններից, որոնք նման են բնական եւ տրանսպորտային պայմաններով: Մինչդեռ պատմական Հայաստանի կենտրոնում գտնվող Նախիջեւանը եւ նրան սահմանակից Լեռնային Ղարաբաղը կկարողանային ավելի արագացված եւ արդյունավետ զարգացում ստանալ Հայաստանի տարածքային-արտադրական համալիրի կազմում:

Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի բնական-տնտեսական պաշարները հանդիսանում են ամբողջությամբ վերցրած Հայաստանի տարածաշրջանի բնական պաշարների տարածքային համատեղման բնական լրացումը: Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի հանքահումքային բազան կարող է առավել արդյունավետ օգտագործվել Հայկական ՍՍՀ-ի էկոնոմիկայի տնտեսական շրջանառության մեջ ներգրավվելով: Մարտակերտի շրջանի եւ Իլիչովսկի շրջանի կիսամետաղների հանքերը, Օրդուբադի շրջանի մոլիբդենի հանքը եւ գունավոր մետաղների մյուս հանքավայրերը կարող են հումքի աղբյուր հանդիսանալ Հայաստանում գունավոր մետալուրգիայի զարգացման համար: Տվյալ հանքային հումքը կարող է վերամշակվել Հայաստանի մոտակա հանքահարստացուցիչ խոշոր ձեռնարկություններում: Դա թույլ կտա նաեւ ամրապնդել Հայկական ՍՍՀ գունավոր մետալուրգիայի հումքային բազան, որը կարեւոր դիրք է գրավում երկրում: Բացի այդ, Նախիջեւանում եւ Լեռնային Ղարաբաղում գունավոր մետաղների նորաստեղծ հանքավայրերում կարող են աշխատել Հայկական ՍՍՀ համանման ձեռնարկությունների բանվորներն ու մասնագետները, որտեղ հանքի պաշարները սպառվել են:

Նախիջեւանում գտնվող հանքի քարաղը կարող է որպես քիմիական հումք օգտագործվել Երեւանի «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումում կաուստիկ սոդայի արտադրության ժամանակ:

Ագրարային-արդյունաբերական համալիրի զարգացման տեսանկյունից Հայկական ՍՍՀ-ի հետ Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի վերամիավորումը թույլ կտա ավելի ռացիոնալ օգտագործել ծայրաստիճան սահմանափակ ջրային պաշարները (ամենից առաջ Արաքսի, Արփայի, Թարթառի եւ այլն): Ըստ որում, պայմաններ կստեղծվեն միասնական ջրատնտեսական քաղաքականություն վարելու համար, հաշվի առնելով գյուղատնտեսական մասնագիտացման ճյուղերի առաջնային զարգացումը:

Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի վրա կարելի կլինի տարածել բարձրորակ պանիրների արտադրությանը կողմնորոշված կաթնամշակման մինի-համալիրների ստեղծման Հայաստանում եղած հարուստ փորձը:

Լեռնային Ղարաբաղում եւ Նախիջեւանում կապիտալ ներդրումների բավարար ծավալների դեպքում շինարարության նույնիսկ ամենայն ծավալները կարելի կլինի կազմակերպել միայն տեղական աշխատանքային ռեսուրսների ընդգրկմամբ, քանզի հայ բնակչությունը իր գերակշիռ մասով տիրապետում է շինարարական աշխատանքի հմտություններին:

Հայկական ՍՍՀ-ի հետ Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի վերամիավորումը թույլ կտա առավել արագացված լուծել փոքր Կովկասի շրջաններում տրանսպորտային համակարգի զարգացման եւ կատարելագործման հիմնահարցերը, ինչը ունի նաեւ պաշտպանական կարեւոր նշանակություն:

Ներկայումս միայն մեկ ավտոճանապարհ է, որ Արեւելյան Անդրկովկասը միացնում է Թուրքիայի հետ սահմանի անմիջական հարեւանությամբ գտնվող շրջանների հետ (Ստեփանակերտ-Գորիս-Բիչենեկի

ուղեկալ-Նախիջեւան): Ըստ որում, հիշյալ ճանապարհը ծնռան ամիսներին ոչ հազվադեպ փակ է լինում երթեւեկության համար: Այդ նույն ավտոճանապարհը Լեռնային Ղարաբաղը Հայկական ՍՍՀ-ի հետ միացնող միակ մայրուղին է: Դրա հետ մեկտեղ հնարավոր է եւ տնտեսական առումով հիմնավորված Լեռնային Ղարաբաղը Հայկական ՍՍՀ-ի հետ միացնող եւս երկու ավտոճանապարհների (Ջոդ-Քելբաջար եւ Ջերմուկ-Թարթառ գետի հովիտ) շինարարությունը:

Վարդենիս-Ջերմուկ-Սիսիան-Գորիս երկաթգծի շինարարության ավարտից հետո (շինարարությունը նախատեսված էր սկսել 1986 թվականին) հնարավոր կդառնա երկաթգծի մի ճյուղ շարունակել մինչեւ Ստեփանակերտ Անդրկովկասի հարավային հատվածը երկաթգծով կրկնակի օղակ կազմելու նպատակով, ինչը նույնպես պաշտպանական եւ ժողովրդատնտեսական կարեւոր նշանակություն ունի:

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի եւ Հայկական ՍՍՀ-ի միջեւ հուսալի տրանսպորտային հաղորդակցության ստեղծումը տեխնիկապես լուծելի եւ տնտեսապես իրագործելի խնդիր է:

Կապի համակարգերի զարգացման տեսակետից հարկ է նշել, որ մինչեւ հիմա Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը չի կարողանում Երեւանի հեռուստահաղորդումներն ընդունել անհրաժեշտ վերահաղորդչի բացակայության պատճառով:

Ներկայումս Նախիջեւանը էլեկտրաէներգիա է ստանում Հայաստանի էներգետիկ համակարգից, որը մինչեւ հարյուրամյակի ավարտը ատոմային էներգետիկայի առաջանցիկ զարգացման շնորհիվ կդառնա ավելցուկային: Լեռնային Ղարաբաղը նույնպես կարող է էլեկտրաէներգիա ստանալ Հայաստանի էներգետիկ համակարգից, եթե «Ճինուհայր» էլեկտրական ենթակայանից էլեկտրահաղորդման բարձրավոլտ գիծ հասցվի մինչեւ Ստեփանակերտ (59 կմ երկարությամբ):

Նախիջեւանի տարածքում կարող է մինչեւ դարի ավարտը կառուցվել Հայաստանի էներգետիկ համակարգի երկրորդ ատոմային էլեկտրակայանը: Դա բացատրվում է Հայկական ՍՍՀ տվյալ օբյեկտի կառուցման համար հարթակների բացակայության, ինչպես նաեւ հանրապետությունը էլեկտրաէներգիայով ինքնապահովելու անհրաժեշտությամբ, բանզի հարեւան հանրապետությունների էլեկտրահաղորդման գծերով այն փոխադրելը հղի է էլեկտրաէներգիայի զգալի կորուստներով:

Հայկական ՍՍՀ-ում մագիստրալային գազատարների եւ գազակուտակիչ տարողությունների հմուտ կառուցումը, Արեւմտյան Սիբիրից գազի մատակարարումների հուսալիության բարձրացումը նախադրյալներ կստեղծեն միասնական հայկական գազատրանսպորտային համակարգի որպես երկրի գազամատակարարման ենթահամակարգի կազմավորման համար, Հայաստանի հետ գազատարների օղակաձեւ հա-

մակարգով միացված Լեռնային Ղարաբաղի ու Նախիջեւանի հուսալի կապերով:

Ինչպես հայտնի է, Հայկական ՍՍՀ-ում կուտակված է արդյունաբերության ժամանակից ճյուղերի (ռադիոէլեկտրոնիկայի, սարքաշինության, հաստոցաշինության եւ այլն) զարգացման շատ հարուստ փորձ: Այս ճյուղերը կողմնորոշված են այն բանին, որ օգտագործվեն տեղական աշխատանքային ռեսուրսները լեռնային հեռավոր շրջաններում խոշոր ձեռնարկությունների մասնաճյուղեր եւ արտադրամասեր բացելու ճանապարհով: Տվյալ փորձը կարող է տարածվել նաեւ Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի վրա:

Ստեփանակերտում եղած երկու ոչ մեծ ձեռնարկությունները էլեկտրատեխնիկական եւ ռադիոարդյունաբերական գործարանները, կարող են հաջողությամբ ինտեգրացվել Հայկական ՍՍՀ համապատասխան արտադրական խոշոր միավորումների («Հայէլեկտրալույս», «Հրազդանմաշ» եւ այլն) հետ:

Հայկական ՍՍՀ-ի հետ Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի վերամիավորումը չի կարող բացասաբար անդրադառնալ միութենական այլ հանրապետությունների հետ այդ տարածքների արտադրական կապերի զարգացման վրա, եթե այդ կապերը տնտեսապես արդյունավետ են:

Անհրաժեշտ է նշել, որ տվյալ հողերում, տարածքներում կարող են բնակեցվել տասնյակ հազարավոր հայեր, որոնք սփռված են ամբողջ աշխարհով մեկ եւ ցանկանում են հայրենադարձվել իրենց ընդհանուր հայրենիքը Սովետական Հայաստան: Այսպիսով, այդ բանը կնպաստեր Սովետական Հայաստանի սոցիալիստական պետության շրջանակներում մեկ միասնական տարածքի վրա հայ ժողովրդի համախմբման գործընթացի արագացմանը:

Ղարաբաղի հայերը մեծ դեր են խաղացել ամբողջությամբ վերցրած համայն հայ ժողովրդի ռուսամետ կողմնորոշման հաստատման եւ ամրապնդման գործում:

Ղարաբաղի հայերը ակտիվորեն մասնակցել են Ռուսաստանի հեղափոխական շարժմանը, խորհրդային պետության հզորացմանը քաղաքացիական եւ հայրենական մեծ պատերազմի տարիներին: Ծննդով Լեռնային Ղարաբաղից են Լենինի զինակից Բ. Կնունյանցը, Սովետական Միության մարշալ Հ. Բաղրամյանը, Սովետական Միության նավատորմի ադմիրալ Ի. Իսահակյանը, ավիացիայի մարշալ Ա. Խուդյակովը (Խանփերյանց), զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Ա. Բաբաջանյանը, Սովետական Միության կրկնակի հերոս Ն. Ստեփանյանը, բազմաթիվ գեներալներ եւ ծովակալներ, քաղաքացիական եւ հայրենական մեծ պատերազմների մասնակիցներ, մետալուրգիայի ժողկոմ Ա.

Թեւոսյանը, սովետական շատ ականավոր գիտնականներ, արվեստի գործիչներ: Ղարաբաղցի հայերին հիմա կարելի է տեսնել Սիբիրի խոշոր-ագույն կառույցներում, մարտական պոստում, դիրքերում, սովետական գիտության աջթեւայինների, արտադրության առաջավորների շարքերում:

Հայ ժողովուրդը հույս է հայտնում, որ իրականություն կդառնա Սովետական Հայաստանի հետ վաղնջական հայոց հողերի Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի վերամիավորումը: Դա կդառնա Սովետական Միության եղբայրական ժողովուրդների միասնական ընտանիքում լենինյան ազգային քաղաքականության եւ համագոյակցության մեծ կենսունակության մի հիանալի դրսեւորում:

Մենք ՍՄԿԿ 27-րդ պատմական համագումարին ենք դիմում հայ ժողովրդի համար այս կենսականորեն կարեւոր հարցը քննարկելու եւ դրական լուծելու խնդրանքով:

Ակադեմիկոս Տ. Ս. ԽԱՉԱՏՈՒՐՈՎ

Ակադեմիկոս Ի. Լ. ԿՆՈՒՆՅԱՆՑ

Ակադեմիկոս Ա. Գ. ԱՂԱՆԲԵԿՅԱՆ

Ակադեմիկոս Մ. Խ. ՉԱՅԼԱԽՅԱՆ

ՌՍՖՍՀ եւ Հայկական ՍՍՀ
ժողովրդական արտիստուհի
Զ. Ա. ԴՈԼՈՒԽԱՆՈՎԱ

ՍՍՀՄ ժողովրդական արտիստ
Պ. Գ. ԼԻՍԻՑՅԱՆ

ՍՍՀՄ եւ Հայկական ՍՍՀ ժողովրդական նկարիչ
Ն. Բ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ»:

Ցավոք, ԽՄԿԿ 27-րդ համագումարը, կուսակցության եւ երկրի ղեկավարությունը այս անգամ եւս խուլ ու անհաղորդ մնացին Արցախի ժողովրդի պահանջներին, այդ ականավոր գիտնականների ու մշակույթի գործիչների ձայնին:

Ի միջի այլոց, երկրում ճանաչված գիտնականների ու մշակույթի գործիչների այդ նամակի մասին ԽՄԿԿ 27-րդ համագումարից առաջ տեղի ունեցած ԽՄԿԿ Կենտկոմի մի պլենումից հետո ինձ եւ կուսակցության մարզկոմի այն ժամանակվա քարտուղար եղիշե Սարգսյանին պատմել է կուսակցության ԼՂ մարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կեւորկովը, ասելով, որ Կենտկոմի պլենումի ընդմիջմանը ԽՄԿԿ Կենտկոմի կազմակերպական բաժնի վարիչն իր մոտ է հրավիրել Հայաստանի եւ Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունների կենտկոմների առաջին քարտուղարներ Կ. Դեմիրճյանին ու Ք. Բագիրովին, կուսակցության Նախիջեւանի մարզկոմի առաջին քարտուղար Ռահիմովին եւ իրեն: Կ. Դեմիրճյանը, բացելով դուռը եւ առանձնասենյակում տեսնելով Ք. Բագիրովին, Ռահիմովին ու Կեւորկովին, շրջվել է ու հեռացել: ԽՄԿԿ Կենտկոմի կազմբաժնի վարիչը Բագիրովին, Ռահիմովին ու իրեն Կեւորկովին, ծանոթացրել է այդ նամակին: Հետո նա հայտարարել է, թե Լեռնային Ղարաբաղն ու Նախիջեւանը Հայաստանին տալու մասին հայտնի գիտնականների ու մշակույթի գործիչների այդ նամակի մասին հավանաբար արդեն հայտնի է Հայաստանում, Ադրբեջանում, Նախիջեւանում եւ Լեռնային Ղարաբաղում: «Դուք պետք է,- ասել է նա,- ժողովրդին բացատրեք, որ մեր երկրում ազգային հարցը լուծվել է 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո եւ մեկընդմիշտ: Միութենական հանրապետությունների սահմանները խորհրդանշական են: ԽՍՀՄ-ում կա մեկ խորհրդային ժողովուրդ, եւ մենք մի պետություն ենք: Այդ պատճառով էլ սահմանների ոչ մի վերաձեւում չի լինի»: ԽՄԿԿ Կենտկոմի կազմբաժնի վարիչը դրանով եզրափակել է զրույցը:

Ահա այսպես, թանկագին ընթերցող, Մ. Գորբաչովի խումբը, ես կասեի ավազակախումբը, այսպես էր քննարկում ու լուծում ազգային հարցերը:

Կեւորկովն այնուհետեւ մեզ ասաց, թե ինքը վաղուց գիտեր եւ ԽՄԿԿ Կենտկոմում տեղի ունեցած զրույցից հետո էլ մեկ անգամ եւս համոզվեց, որ ԽՄԿԿ Կենտկոմի եւ երկրի ղեկավարները ադրբեջանցիների կողմն են եւ Լեռնային Ղարաբաղը երբեք Հայաստանին չեն տա: Մենք միայն պետք է հնարավորին չափ հայկական պահենք Լեռնային Ղարաբաղը: Ես եւ Եղիշե Սարգսյանը դրա համար առաջարկեցինք կատարել առաջին քայլը՝ մարզի բոլոր փոքր ու ծայրամասային գյուղերում հայկական դպրոցներ բացել, որպեսզի երիտասարդությունը մնա այնտեղ: Բ. Կեւորկովը պաշտպանեց մեզ եւ իսկույն խորհրդակցելու համար հրավիրեց ժողովրդական կրթության մարզային բաժնի վարիչին հիանալի մտավորական Սարգիս Արամյանին: Սարգիս Նիկոլաեւիչը խորհուրդ տվեց առայժմ հարեւան միջնակարգ դպրոցների հաշվին միացյալ դասարաններ ստեղծել այդ գյուղերում, այնուհետեւ դրանց բազայի վրա ոչ լրիվ միջնակարգ դպրոցներ բացել: Բայց Ադրբեջանի լուսավորության նախարարությունը, ասաց նա, մեզ թույլ չի տա այդպիսի բան անել: Բ. Կեւորկովն ի պատասխան նրան ասաց. «Ես ձեզ ցուցում եմ տալիս մարզի բոլոր փոքր հայկական գյուղերում, որտեղ կա թեկուզեւ 3-4 դպրոցահասակ երեխա, բացել դպրոցներ կամ, ինչպես որ դուք եք ասում, տարրական դասարաններ, իսկ եթե Ադրբեջանի լուսավորության նախարարությունն առարկի, ասացեք, որ դուք դա անում եք կուսակցության մարզկոմի առաջին քարտուղարի ցուցումով: Եթե կցանկանան

թող դիմեն ինձ: Ես նրանց կպատասխանեմ»: Տեղնուտեղն էլ պայմանավորվեցինք այդպիսի դասարաններ բացել Մարտակերտի շրջանի Կիչան եւ Ասկերանի շրջանի Դաշուշեն գյուղերում: Նոր ուսումնական տարվանից նույնպիսի դասարաններ բացվեցին մարզի մի շարք այլ գյուղերում:

Այդ տարիներին սկսեցին Լեռնային Ղարաբաղից ավելի հաճախակի պատվիրակություններ ուղարկվել Մոսկվա երկրի ղեկավար մարմիններ: Այսպես, շարժման ակտիվիստների առաջին պատվիրակությունը Մոսկվայում եղավ 1987 թ. դեկտեմբերին: Պատվիրակությանն ընդունեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Պ. Ն. Դեմիչեւը, որը խոստացավ ուսումնասիրել եւ քննարկել հարցը:

ԼՂԻՄ աշխատավորների երկրորդ պատվիրակությունը, որի կազմի մեջ էին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Վազգեն Բալայանը, Քրիստափոր Խաչատրյանը (ք. Ստեփանակերտ), Արթուր Մկրտչյանը (Հադրութի շրջան), Սլավիկ Առուշանյանը (Ասկերանի շրջան), Գուրգեն Շահրամանյանը (Մարտունու շրջան) եւ ուրիշներ, Մոսկվայում եղավ 1988 թ. հունվարի սկզբին: 1988 թ. հունվարի 8-ին պատվիրակությանն ընդունեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության առաջին փոխնախագահ Պ. Ն. Դեմիչեւը, հունվարի 11-ին ԽՄԿԿ Կենտկոմի ազգամիջյան հարցերի ենթաբաժնի վարիչ Վ. Ա. Միխայլովը:

1988 թ. փետրվարի սկզբին Մոսկվա ժամանեց Լեռնային Ղարաբաղի ժողովրդի երրորդ պատվիրակությունը: Նրա կազմում էին թատերական գործիչ Վաչե Սարուխանյանը, բանաստեղծներ Գուրգեն Գաբրիելյանը, Վարդան Հակոբյանը, Հրաչյա Բեգլարյանը, կոմպոզիտոր Էդուարդ Ղազարյանցը, Ղարմետաքսկոմբինատի կարժողուհի, սոցիալիստական աշխատանքի հերոս Գոհարիկ Սարինյանը, ժողովրդական արտիստ Բենիկ Օվչյանը, վաստակավոր արտիստուհի Ժաննա Գալստյանը, քանդակագործ Արմեն Հակոբյանը: Պատվիրակությանն ընդունեց ԽՄԿԿ Կենտկոմի ազգամիջյան հարցերի ենթաբաժնի վարիչ Մ. Ա. Միխայլովը, որը, պատվիրակության անդամներին հուսադրելով, հայտարարեց, թե հարցը դրականորեն կլուծվի:

Նույն թվականի մարտի սկզբին Մոսկվայում եղավ արդեն չորրորդ պատվիրակությունը: Նրա կազմի մեջ էին Լեռնային Ղարաբաղի նշանավոր կանայք: Պատվիրակությունը գլխավորում էր ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Սահդա Օրբելյանը: Կանանց պատվիրակությանն ընդունեց նույն Վ. Ա. Միխայլովը՝ ԽՄԿԿ Կենտկոմի ազգամիջյան հարցերի ենթաբաժնի վարիչը, իսկ այնուհետեւ ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Եգոր Լիգաչովը: Ինչպես պատմել է մեզ Սահդա Օրբելյանը, Եգոր Լիգաչովը նրանց ընդունել է ջերմորեն եւ, լսելով պատվիրակության բոլոր անդամների կարծիքը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի վերաբերյալ, հայտարարել է, թե դա բարդ հարց է, ԽՄԿԿ Կենտկոմն ուսումնասիրում է այն եւ կընդունի համապատասխան որոշում:

Լեռնային Ղարաբաղից հինգերորդ պատվիրակությունը ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, սոցիալիստական աշխատանքի հերոս Լեւոն Մամունցի գլխավորությամբ, Մոսկվա գնաց 1988 թ. ապրիլի 5-ին: Պատվիրակությունը կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Գենրիխ Պողոսյանի ցուցումով ԽՄԿԿ Կենտկոմ տարավ կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի բյուրոյի անդամների 1988 թ. ապրիլի 4-ի նամակը, որում տրվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում տեղի ունեցող իրադարձությունների վերլուծությունը եւ առաջարկվում դրականորեն լուծել Հայաստանի հետ ԼՂԻՄ-ի վերամիավորման հարցը: Պատվիրակությունը եղավ ԽՄԿԿ Կենտկոմում, ԽՍՀՄ Գերագույն խորհրդում եւ «Իզվեստիա» թերթի խմբագրությունում:

Բայց, ինչպես ցույց տվեց ժամանակը, այդ ամենն իզուր անցավ: Երկրի ղեկավարությունը խուլ մնաց արցախահայության պահանջների նկատմամբ: Չնայած երկրի ու Ադրբեջանի ղեկավարության դավերին, նոր թափ էր առնում արցախահայության ազգային-ազատագրական պայքարը:

ԽՄԿԿ Կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենումից հետո ԽՍՀՄ-ում սկսված գորբաչովյան վերակառուցումն, այնուամենայնիվ, դարաբադյան հիմնահարցի ժողովրդավարական ու արդարացի լուծման հույս էր ներշնչում արցախցիներին: Արցախյան շարժման նոր փուլը սկսվեց 1988 թվականին տեղի ունեցած միտինգներով ու ցույցերով, կոլեկտիվների ժողովներով, ժողովրդական պատգամավորների գյուղական, ապանային եւ շրջանային խորհուրդների նստաշրջաններով, ինչպես նաեւ Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի միավորում պահանջող հանրագրերով, հեռագրերով ու նամակներով, որոնք ուղարկվում էին երկրի ղեկավար մարմիններ, ԽՄԿԿ Կենտկոմ եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահություն: Ժողովրդական շարժման այդ նոր փուլի գլուխ կանգնած հայրենասիրական ուժերն ի վերջո կազմավորեցին «Կռունկ» եւ «Միացում» կազմակերպությունները, իսկ այնուհետեւ Ազգային խորհուրդը, Գերագույն խորհուրդը եւ Պաշտպանության պետական կոմիտեն: Եվ այդ դժվարին պայմաններում ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի նստաշրջանը 1988 թվականի փետրվարի 20-ին որոշում ընդունեց ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից հանելու եւ Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ մտցնելու վերաբերյալ Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի առաջ միջնորդության մասին: Սակայն ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոն, առանց հարցն ուսումնասիրելու, տառացիորեն հաջորդ օրը 1988 թ. փետրվարի 21-ին, Ադրբեջանի ղեկավարության եւ նրա ապաստյակների ստահոդ տեղեկատվությունների ազդեցության տակ Ղարաբաղցի հայերի պահանջը դատապարտող եւ նրանց ազգային

զգացմունքները վիրավորող որոշում ընդունեց, որը վրդովեցրեց Արցախի ժողովրդին: Երկրի բարձրագույն քաղաքական մարմնի այդպիսի հակահայկական քաղաքականությունից ու սխալ կողմնորոշումից օգտվեցին Ադրբեջանի ղեկավար շրջանակները, որոնք խաղաղ, ժողովրդավարական լուծում պահանջող հարցը փոխադրեցին ազգամիջյան արյունալի բախումների ոլորտը: Ահա թե ինչու Լեռնային Ղարաբաղի հայության ազգային-ազատագրական շարժումը ահա արդեն մի քանի տարի իր վրա է հրավիրել համաշխարհային հանրության սեւեռուն ուշադրությունը: Այն դարձել է համաշխարհային հանրությանն անհանգստացնող գլխավոր հիմնահարցերից մեկը, հատկապես վերջին տարիներին, երբ այն հայտնվել է ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի ուշադրության կենտրոնում: Բանն այն է, որ Ստալինի անձի պաշտամունքի, խրուշչովյան որոշակի «ձնհալի» եւ բրեժնեյան լճացման շրջանում լայն հասարակայնությունը զրկված էր այդ հարցի էության վերաբերյալ ճշմարտացի տեղեկատվությունից: Իսկ այսպես կոչված վերակառուցման շրջանում հայ ժողովրդի թշնամի Գորբաչովի թեթեւ ձեռքով, որը անարդարացի եւ անսկզբունք քաղաքականություն էր վարում Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների գնահատման գործում, երբ նրա լուսաբանման ժամանակ հաճախ դիտավորյալ խեղաթյուրումներ ու նենգափոխումներ էին թույլ տրվում, այդ հարցն էլ ավելի խճճվեց եւ անլուծելի հիմնահարցերի բարդ ու խառնաշփոթ մի կույտի վերածվեց: Այնինչ Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին ճշմարտության իմացումը ծայրաստիճան կարեւոր է ԽՍՀՄ-ում ազգային հարցի սրման ակունքներն ու պատճառները հասկանալու համար, որը, ցավոք, հասկանալ չեն ուզում այս աշխարհի ուժեղներն ու ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ՆԱՏՕ-ի ղեկավարները: Այդ պարոնայք եւ նրանք, ովքեր իրենց ծառայության բերումով ղարաբաղյան հարցով են զբաղվում, չպետք է մոռանան, որ նախկին ԽՍՀՄ-ում, այդ թվում նաեւ Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող ազգամիջյան երկպառակություններն ու բախումները, որոնք այդչափ դրամատիկ ու արյունալի բնույթ են ստացել, իրենց արմատներով կապված են նախկինում ԽՄԿԿ-ի եւ երկրի ղեկավարության կողմից ազգային հարցում թույլ տված խեղաթյուրումների ու խախտումների, նրանց գծած ներքին արհեստական սահմանների հետ: Ասվածի վառ հաստատումն է հանդիսանում ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի 1988 թվականի փետրվարի 29-ի նիստը, որտեղ քննարկվեց ղարաբաղյան հարցը:

Որքան դեմագոգիա, քաղաքական փչոց, սպեկուլյացիա, դավագրգռություն, սադրանք, անամոթ ու անսահման ստորություն կա ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի 1988 թ. վետրվարի 29-ին, այսինքն սումգայիթյան արյունալի իրադարձությունների հաջորդ օրը տեղի ունեցած փակ նիստի ելույթներում: Մերկապարանոց չլինելու համար ստորեւ բերում

ենք այդ քաղաքական թատրոնի սղագրությունը, որը հրապարակվել է «Ռոդինա» հանդեսի 1993 թվականի թիվ 4-ում եւ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի 1994 թվականի մայիսի 19, 20, 21-ի համարներում:

«Խիստ գաղտնի
Միակ օրինակը (աշխատանքային գրառում)

ԽՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՂԲՅՈՒՐՈՅԻ ՆԻՍՏԸ

29 փետրվարի 1988 թվական

Նախագահել է ընկ. Մ. Ս. ԳՈՐԲԱՉՈՎԸ:

Ներկա էին ընկ. ընկ. Ա. Ա. Գրոմիկոն, Ե. Կ. Լիգաչովը, Վ. Պ. Նիկոնովը, Ն. Ն. Սլյունկովը, Մ. Ս. Սոլոմենցեւը, Վ. Մ. Չեբրիկովը, Է. Ա. Շեւարդնաձեն, Ա. Ն. Յակովլեւը, Յու. Դ. Մասլյուկովը, Ն. Վ. Տալիզինը, Դ. Տ. Յազովը, Օ. Դ. Բակլանովը, Ա. Պ. Բիրյուկովան, Ի. Վ. Կապիտոնովը:

1. Ադրբեջանական եւ Հայկական ԽՍՀ-ներում իրադարձությունների առնչությամբ լրացուցիչ միջոցառումների մասին

ԳՈՐԲԱՉՈՎ. Այն միջոցները, որ մենք ձեռնարկել ենք, այդ թվում նաեւ ուղղակի Հայաստան ու Ադրբեջան հղված դիմումը, իրենց դերն են կատարել: Մարդիկ արձագանքել են դիմումին: Այն, լրամշակումից հետո, ծածկագրակապով այնտեղ է հղվել գիշերը, իսկ արդեն ցերեկը սկսել են նրանով աշխատել:

Վերջին պահին Երեւանի փողոցներում առնվազն կես միլիոն մարդ է եղել: Ամեն ինչ խաթարված, ամեն ինչ կանգնեցված է եղել: Մերձակա գյուղերից նույնպես սկսել են հավաքվել մարդիկ: Շարասյուներով էին գնում:

ԳՐՈՄԻԿՈ: Վերջին պահը դա այսո՞ր է:

ԳՈՐԲԱՉՈՎ: Ոչ, դիմումից առաջ, հինգշաբթի օրը: Մարդկանց այդպիսի զանգված... Ղարաբաղում ադրբեջանցիներն ընդհարվել են հայերի հետ: Երկու հոգի զոհվել են: Երեւանով մեկ թռուցիկներ են տարածվել հայեր, միտինգ անելուն վերջ տվեք, գենք վերցրեք ու ջարդեցեք թուրքերին: Հեռու տարածությունից ատրճանակով կրակել են բանակի շտաբի վրա: Գնդակը կպել է շտաբի պետի առանձնասենյակի պատուհանին: Բայց խրվել-մնացել է շրջանակների միջեւ, քանի որ թուլացած է եղել: Ահա այսպիսի պահեր են երեւան գալիս: Մենք գիտենք, որ այնտեղ ծայրահեղական տարրեր կան:

Բայց ես պետք է ասեմ, որ նույնիսկ այն ժամանակ, երբ Երեւանի փողոցներում կես միլիոն մարդ կար, հայերի կարգապահությունը բարձր է եղել, հակախորհրդային ոչինչ չի եղել: Առանձին խմբերից բացի, որոնք դուրս են եկել ու միտինգել (ես ավելի ուշ կասեմ, թե ինչի մասին են խոսել), այնուամենայնիվ ամբողջ ամբոխը գնում էր մեր դրոշնե-

ոի ներքո, Քաղբյուրոյի անդամների դիմակարներով: Միայն ծայրահեղականներն էին ինքնորոշման կարգախոս նետում: Բայց ոչ մի ելույթում բանը չի հասել ոչ հակախորհրդայնության, ոչ թշնամական արարքների եւ այլն:

Այդպես է իրեն պահել այդ ամբողջ զանգվածը: Բայց դրանից բխում է նաեւ այն, որ այդ ամենն, ընկերներ, լավ կազմակերպված է եղել: Այդ ամենը հենց այնպես չես անի. եւ հերթափոխեր էին գնում, եւ սնունդ էր տրվում, եւ մեկը մյուսին են փոխարինել: Վլասովն է այդ ամենը պատմել: Նրանք ուսումնասիրել են դա:

Բոլոր ելույթներում Ղարաբաղի, Հայաստանի հետ նրա միացման թեման է եղել: Ասվում է, որ այդ հարցը Ստալինի օրոք ճիշտ չի լուծվել, որ այդ որոշումը ժողովրդին է պարտադրվել հայտնի հանգամանքներում, որ այն ճիշտ չէ եւ որ այդ հարցը պետք է լուծել հիմա, ժողովրդավարության եւ վերակառուցման շրջանակներում:

Վլասովն ինձ փակ խցիկով նկարահանված մի տեսաժապավեն է տվել, որտեղ այդ երեք օրվա իրադարձություններն են: Ես դիտել եմ բոլոր ելույթները, տեսել այդ ամբողջ զանգվածը: Հետագայում ձեզ ցույց կտամ. միլիոն մարդ կանգնած է գլուխ-գլխի որքան տեսախցիկը կարող է վերցնել: Նրանց մեջ են երիտասարդներ, ծերեր: Հանդես են եկել անվանի մարդիկ ժողովրդական արտիստներ, նկարիչներ, մի խոսքով խոշոր մեծություններ: Ամեն ինչ կենտրոնացվում էր Լեռնային Ղարաբաղում տիրող դրության շուրջը: Խոսվել է հայկական մշակույթի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մասին, այն մասին, թե հայերը, հայկական ինքնավարությունը իրավազուրկ են, առանց հայրենիքի հետ կապերի եւ այլն: Ամբողջ լարվածությունը եղել է հայկական թեւի վրա: Որովհետեւ այն որոշումով, որ մենք ընդունել ենք Քաղբյուրոյում, մենք Ադրբեջանին ենք պաշտպանել, անկեղծ ասած: Եթե մենք այդ որոշումը չընդունեինք, ապա կլիներ այն, ինչի մասին ես ձեզ հետո կասեմ:

Երբ ես այստեղ Կենտկոմում, զրուցում էի Կապուտիկյանի եւ Բալայանի հետ, նրանց ասել եմ, որ այդ հարցի ամբողջ պատմությունը գիտենք, որ դա դժվար պատմություն է: Նրա պատճառները, արմատները արտասահմանում են, մեր սահմաններից դուրս: Այն, որ պատմությունը, ճակատագիրը ցաքուցրիվ է արել հայ ժողովրդին, այդ ամենը մենք գիտենք ու հասկանում ենք: Իսկն ասած, ես երկու պատճառ եմ տեսնում. մի կողմից շատ բացթողումները հենց իսկ Ղարաբաղում, եւ գումարած զգացմունքային սկզբնակունքը, նա նստած է ժողովրդում եւ այդ պատճառով էլ այն ամենը, ինչ դիպչում է նրան, այդպիսի վերաբերմունք է առաջ բերում:

Իսկ թե ինչից կառչել դա այնտեղ կար ու հիմա էլ կա: Պարզվում է, որ Ստեփանակերտի մարզկոմի քարտուղարը 14 տարում ոչ մի անգամ Հայաստանում չի եղել, թեեւ Լեռնային Ղարաբաղը հայկական ինքնավարություն է: Դե ուրիշ շատ բաներ էլ են սկսում թվարկել: Նույնիսկ Հայաստան տանող ճանապարհներն են բարձիթող արել: Մշակութային կապը խախտված էր: Դա գիտակցաբար է արվել: Թուրքական հեռուստատեսության հաղորդումները Լեռնային Ղարաբաղում ընդունվում են, հայկականը ոչ: Իսկ չէ որ այդ ամենը մարդկանց զգացմունքներն են վիրավորում:

Ես հարցնում եմ Վիկտոր Միխայլովիչին. դու այնտեղ ի՞նչ ես արել սահմանային գոտու հարցում: Նա ինձ ասաց, որ Նախիջեւանում, որտեղով սահմանն է անցնում, սահմանապահներն իրենց շերտն ունեն, որտեղ տեղակայված են ուղեկալները եւ այլն: Իսկ սահմանային գոտու ամբողջ խորությունը որոշում են տեղական մարմինները, տվյալ դեպքում հանրապետական մարմինները: Եվ ի՞նչ որոշում են ընդունել նրանք: Ամբողջ Նախիջեւանը մտցվել է սահմանային գոտու մեջ, արգելվել է ազատ մուտքն այնտեղ: Իսկ չէ որ այնտեղ թաղված են ցեղասպանության զոհերը, այնտեղ են գտնվում նրանց բոլոր գերեզմանները: Այնտեղ հայկական մշակույթի 90 հուշարձաններ են եղել, որոնցից մեկն է մնացել: Եվ վերջ: Ոչ ոքի բաց չեն թողնում այն պատրվակով, թե դա սահմանային գոտի է, եւ այնտեղ տանող ճանապարհը, ինչպես ասում են, 70 տարի է չի նորոգվում: Ախր դա, գիտեք, թե ինչպես է ընկալվում:

Կարճ նրանք վարպետորեն են շիկացնում զգացմունքները, բայց ես կասեմ, որ այդ ամենը ուսումնասիրություն է պահանջում, ըստ երեւույթին, նրանք իզուր չեն այնտեղի դռները ծեծում:

Այդ լրատվությունն, իհարկե, մի կողմից է գալիս: Բայց ստուգելի բաներ են ասում: Դեռեւս նախօրյակին չորեքշաբթի, հանձնարարել եմ Ալեքսանդր Նիկոլաեւիչին իմ անունից խոսել Կապուտիկյանի հետ եւ նրա ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ նրանք պետք է հասունություն ցուցաբերեն, իրենց ծանրակշիռ խոսքն ասեն, կանգնեցնեն իրադարձությունների անցանկալի ծավալումը: Նա խոսել է նրա հետ: Զրույցը երկար է եղել, լսափողի մեջ լացով, հեկեկանքով: Բայցեւայնպես նա խոստացել է դա անել, կանգնեցնել անբարենպաստ գործընթացը, հետո հարցը պարզել: Բայց միեւնույն ժամանակ մեղադրել է, որ մենք ադրբեջանցիների կողմն ենք բռնել, հայտարարել է, որ իրենք էքստրեմիստներ չեն, սադրիչներ չեն:

Մինչ մենք հինգշաբթի օրը նիստ էինք անում, նա ինքնաթիռ է նստել ու թռել Երեւան: Այստեղ միացել է գրող, «Լիտերատուրնայա գազետայի» թղթակից Բալայանի հետ: Սա ազգայնամոլ, ըստ որում թունդ ազգայնամոլ դեմք է: Տաղանդավոր դեմք: 33 գիրք է գրել: Շատ հայտնի է նրանց մոտ եւ քիչ էլ սանձարձակ, ինքնավստահ ու շատ կարիերիստ: Շատ:

Դեռեւս Մոսկվայում Կապուտիկյանն իր հետ նրան էլ է քաշել-բերել: Խնդրել է, որ գոնե հինգ րոպեով ընդունեմ: Մտածեցի՝ իսկ ինչո՞ւ խուսա-

փել, այստեղ ամեն ինչ պետք է օգտագործել: Ես կասեմ այն, ինչ մտածում եմ, իսկ նրանց համար դրանից հետո դժվար կլինի նրանք իմ կողմից կապված կլինեն: Իսկ ձեզ արդեն ասել եմ, որ գրել ձեռնարկել եմ գիշերը, վերհիշել եմ, թե Լենինն ինչպես է գործել, երբ սուր վիճակ է եղել, կամ ինքն է դիմել, հեռագրեր ուղարկել եւ այլն: Եվ հանդիպել է ամենատիաճ անձանց հետ: Նա Կապուտիկյանը, այնտեղ նրանց մոտ Կոմիտեի պատվավոր նախագահ է, ի՞նչ է: Հա:

Հանդիպեցինք: Ես ասում եմ Ադրբեջանում լարված է: Դուք հասկանո՞ւմ եք, դա պետք է կանգնեցնել: Այնտեղ նույնպես մարդիկ լարված են: Իսկ նա ինձ ասում է. ինչո՞ւ են լարված: Դուք նրանց օգտին եք որոշում ընդունել: Ես ասում եմ. ոչ, ես Ձեզ հետ չեմ համաձայնվի: Մենք որոշում ենք ընդունել Հայաստանի, Ադրբեջանի, ամբողջ երկրի օգտին: Զրույցը եղել է անչափ դժվարին, զգացմունքային, լարված: Մեզ, ասում է Կապուտիկյանը, ասել են, որ Ձեր ստորագրությունն է դիմումի տակ, մենք շատ ենք հույս դնում Ձեզ վրա եւ այլն: Ես էլ եմ գտնում, պատասխանեցի ես, որ դուք հույս եք դնում Քաղբյուրոյի վրա, ինձ վրա, որպես գլխավոր քարտուղարի, եւ այդ պատճառով էլ ես դրել եմ իմ ստորագրությունը:

Ես ձեզ հավատացնում եմ, որ կհորդեն-կանցնեն իրադարձությունները, ամեն ինչ իր տեղը կընկնի, եւ դուք շնորհակալություն կասեք, որ ձեզ կանգնեցրինք: Շնորհակալություն կասեք, որ Միխայիլ Սերգեեւիչը ստորագրել է դիմումը: Այժմ պետք է գնալ այն հոսանքին հակառակ, որ ձեզ մոտ է սկսվել, պետք է կանգնեցնել այն: Հարցեր կա՞ն: Բայց եթե մենք հիմա կանգ չառնենք, իրողությունները հաշվի չառնենք, ապա այն ժամանակ շարժում կսկսվի այն կողմից: Այն ժամանակ ո՞վ, ընդհանրապես, իրադրությունն իր ձեռքը կառնի: Պետք է ասել, որ նա դեմ է եղել, հաստատապես հայտարարել է, թե տարածքային հարցը պետք է քննել հիմա: Ախր ինչո՞ւ, հարցնում է նա, հանձնաժողով ստեղծել չեք ցանկանում: Թաթարների համար ստեղծել եք, իսկ այստեղ ի՞նչ հարց կա. երկու հանրապետություններ են: Ինչո՞ւ դուք հանձնաժողով չեք ուզում: Ես ասում եմ՝ լսեցեք, ի՞նչ հանձնաժողով է պետք, երբ դուք ինձ մոտ ընդունելության եք նստած, երբ հարցի լուծմամբ Քաղբյուրոն ու կառավարությունն են զբաղվում: Ես ձեզ բացարձակ եմ ասում, որ դուք իմանաք, հանձնաժողով մենք ստեղծել ենք, բայց թաթարական ինքնավարությունը չենք վերականգնելու: Իսկ այն հարցերը, որ կյանքն է առաջադրել, լուծելու ենք:

Բալայանը (նրա ուղեղը շատ արագ է աշխատում, պինդ երիտասարդ է) հարցնում է՝ ի՞նչ ասենք մարդկանց: Ես պատասխանեցի, թե ինչ պիտի ասել. որ մենք՝ Կենտկոմը, կառավարությունը հայ ժողովրդի դեմ քեն չունենք, որ Կենտկոմը տեսադաշտում կպահի այն հարցերը, խնդիրները, որոնք ծագել են Լեռնային Ղարաբաղում ես լուծում են պա-

հանջում: Բալայանն իսկույն վրա է բերում. դե, ուրեմն հանձնաժողով ստեղծեք, եթե Քաղբյուրոն է այդ հարցով զբաղվելու: Պետք է ուղղակի ասել, որ հենց էն գլխից էր պարզ, թե նրանք ինչու են այստեղ քշվում: Նրանք իրենց համար հեղինակություն էին վաստակում, որպեսզի իրենց ազդեցությունն ամրապնդեն: Անկեղծ ասած եւ մենք էլ չէինք կարող խուսափել նրանց հետ հանդիպելուց: Նրանք մտավորականության խոշոր ներկայացուցիչներ են, որոնց ժողովուրդը լսում է:

Ի դեպ, նրանք երկուսն էլ կոմունիստներ են: Այ, հայկական այդ թեմն պետք էր, պարզ ասած, զսպել, հանդարտեցնել, որպեսզի ամբողջ «բանակը» չշարժվի: Նրանք ինչպե՞ս են արձագանքել դիմումին: Ամենեին ոչ այնպես, ասենք, ինչպես պահանջվում էր. կարդացել են, ելույթներ ունեցել... Ամեն մեկն իր ձեւով: Ես, երբ լսում էի ժապավենը, ուշադրություն եմ դարձրել. մեկը ելույթ է ունենում եւ ասում. «Եվ փոխարենը, որ միութենական ռադիոն ու հեռուստատեսությունը ցույց տան իրոք այն, ինչ ժողովուրդն է ասում, ինչը որ հուզում է, նրանք մեզ սադրիչներ են անվանում...» եւ այլն:

Ես, ի դեպ, Կապուտիկյանի հետ զրույցի ժամանակ ասացի. որոշման մեջ հայ ժողովուրդը սադրիչ չի անվանվել: Մենք ասում ենք, որ հայ եւ ադրբեջանական ժողովրդի մի մասը Լեռնային Ղարաբաղում գնացել է սադրիչների հետեւից: Ահա թե ում մասին է խոսքը: Դա կա: Այնպես որ կան սադրիչներ, կա եւ ժողովուրդ: Մենք նրանց չենք նույնացնում եւ մեր վերաբերմունքը չի փոխվել հայ ժողովրդի նկատմամբ: Երբ դիմումն ընթերցել են, մարդկանց այդ հսկայական ծովում սկսել են խմբակներ գոյանալ, սկսվել է քննարկումը: Հետո սկսել են երգեր երգել, ապա «ուռա» գոչել: Ոմանք ցրվել են, ուրիշներն են եկել: Սկսել են այն եզրակացությանն գալ, որ պետք է դիմումից հետո հանդարտվել: Իսկ հետո՞: Ես նրանց տրամադրությունից զգացի, որ մենք ճիշտ ենք գնահատել ժամանակը: Այդ մարդկանց վիճակն ու տպավորությունն այնպիսին է եղել, որ ահա մոտ կես միլիոն հոգի են հավաքվել, իսկ ոչ ոք դրան, ասես, չի արձագանքում: Ղեկավարությունն, ինչպես ասում են, մի բարի խոսք էլ չի ասի: Եվ ահա նամակն է ստացվել: Նա իր դերն է խաղացել: Շաբաթ օրն արդեն աշխատում էին: Նույնիսկ ուրբաթ օրն արդեն մարդկանց մի մասն արդեն աշխատում էր: Շաբաթ օրը գործնականում բոլորն աշխատում էին, մեծ մասը նաեւ երեկ է աշխատել: Հայկական ռադիոն հաղորդել է, որ աշխատավորները պարտավորություն են ստանձնում աշխատել բաց թողած օրերի փոխարեն եւ վերականգնել կորցրածը: Ահա գործն այսպես է ընթացել:

Բայց կան Հայաստանից ադրբեջանական ընտանիքների փախչելու փաստեր: Ճիշտ է, թվերը հակասական են: Վլադիմիր Իվանովիչը գեկուցում է, որ արդեն 55 հոգի են գնացել, իսկ Ռազումովսկին ասում է, թե [illegible]: Ինչ վերաբերում է Ադրբեջանի հայերին, ապա հալածանքներից

զգուշացող 200 ընտանիքներ տեղավորել են դպրոցում, եւ էլի 500-ն է հավաքվում:

ՌԱԶՈՒՄՈՎ (ԽՄԿԿ Կենտկոմի կազմակերպական-կուսակցական աշխատանքի բաժնի վարիչի տեղակալ). Երբ ադրբեջանցին մեկնում է Հայաստանից, չի ասում, թե փախչում է, այլ հայտարարում է, թե իբր հյուր է գնում: Այդ պատճառով պետք է հաշվարկել ըստ Ադրբեջանի տվյալների: Նա այստեղ է գալիս եւ ուղղակի ասում. ես էլ Հայաստան չեմ գնա:

ԳՈՐԲԱՉՈՎ. Այժմ հենց Լեռնային Ղարաբաղի իրադրության մասին: Այնտեղ կուսակցության մարզկոմի նոր առաջին քարտուղար են ընտրել, նա այնտեղ խմբային-կամերային աշխատանք է տանում, ամեն ինչ վերափոխում է իր շուրջը: Նա, ըստ երեւույթին, իրական հեղինակություն է եղել եւ այդ պատճառով, երբ ծագեց այդ հարցը, եւ Եգոր Կուզմինը այդ մասին զանգեց ինձ, ես ասացի, որ այդ իրադրությունում պետք է առաջ քաշել այն մարդկանց, որոնք իրական հեղինակություն են վայելում: Նա մարզկոմի անդամ է, մարզգործկոմի նախագահի տեղակալ է եղել, ագրոարդն է ղեկավարել: Երբ Ռազումովսկին նրան ասել է՝ ձեռքներդ վերցրեք, մենք կատարենք, հիմնահարցեր կան, դրանք լուծել է պետք, նա գիրկ չի նետվել, բայց համաձայնել է՝ դե որ Կենտկոմը կպաշտպանի...: Որովհետեւ իրոք շատ հիմնահարցեր են կուտակվել: Նրան ընտրել են, եւ իսկույն իրավիճակի փոփոխություններ են տեղի ունեցել: Բայց բարդություն դեռ կա: Հայաստանից զանգում են. դուք էդ ինչ եք անում ախր, էդտեղ... Ձեր պատճառով ամբողջ Հայաստանն ենք ոտքի հանել...

ՉԵԲՐԻԿՈՎ. Կոլխոզներից մարդիկ են Ստեփանակերտ գնում:

ԳՈՐԲԱՉՈՎ. Այսօր Ալեքսանդր Վլադիմիրովիչն ինձ պատմել է. խորոված են անում Ստեփանակերտում, այնտեղ խարույկներ են վառվում: Ընդհանուր առմամբ կարգուկանոնի խախտումներ չկան այնտեղ, բայց հրապարակից ժողովուրդը չի հեռանում: Կես հազար՝ թե հազար հոգի:

ՎԼԱՍՈՎ (ԽՍՀՄ ներքին գործերի նախարար). Հազարից ավելի:

ԳՈՐԲԱՉՈՎ. Հազարից ավելի: Ահա այդպես էլ մնում են, որպեսզի «խարույկը չմարի»: Այսինքն՝ այստեղ ակնհայտորեն գործում են ըստ Հայաստանից տրվող հրահանգների ու կապի:

Իսկ հիմա էլ Ադրբեջանում են սկսել արձագանք տալ: Նախ՝ որ այն տեղ սպանվող է եղել: Ասեկոսություններն էլ ուռճացրել են դա: Ադրբեջանցիներն սկսել են փախչել՝ վախենալով հաշվեհարդարից եւ հայտարարելով, թե Հայաստանում իրենց կյանք չեն տալիս: Ահա դա էլ որպես խթան է ծառայել: Դրան գումարած՝ Ստեփանակերտը չի հանդարտվում: Շարժում է սկսվել Ադրբեջանում: Ինձ թվում է, թե այն էլ է կարգավորված, կազմակերպված: Դա հատկապես վառ արտահայտվեց Նախիջեւանում:

Այնտեղ էլ է մարդկանց բազմություն հավաքվել, բայց եկել է քարտուղարը, նույնը ունեցել, եւ մինչեւ 30 րոպեն բոլորը ցրվել են:

Հիմա Դմիտրի Տիմոֆեեւիչը հաղորդեց Սումգայիթից մի գեներալի գնալուցման մասին: Զինվորականն այսպիսի պատկեր է տեսել. խուժանը վայրագություններ էր անում, նրանց կլանել են, բայց նրանք ոչ մեծ խմբերով գնացել են այստեղ-այնտեղ վայրագություններ անելու, ավտոբուսներ վառելու, սպանելու. արդեն 14 սպանված կա: Շատ մարդիկ հոսպիտալներում են:

ՉԵԲՐԻԿՈՎ. 110 վիրավորներ:

ԳՈՐԲԱՉՈՎ. Այստեղ մոլեգնում են արդեն ավազակաբարո տարրերը, նրանց մեջ են հայտնվել ռեցիդիվիստներ, ամբողջ փրփուրը երես է բարձրացել, իսկ սումգայիթյան միլիցիան այստեղ էլ կանգնած՝ ոչինչ չի անում: Նշանակում է՝ այդ գործողությունը մտածված է ի պատասխան հայերի, որպեսզի «սուր պատասխան» տան:

Մի խոսքով, եթե մենք միջոցներ չձեռնարկեինք, ապա ցանկացած պահի կարող էր կոտորած լինել:

Երեկ երեկոյան Վիկտոր Միխայլովիչն ինձ զանգեց ու հաղորդեց, որ միտինգները վերացել են, ամեն ինչ վերջացել է: Բայց իրականում ոչինչ է ստացվել: Միտինգներն իրոք ցրվել են, բայց միավորվել են ոչ մեծ խմբերի մեջ՝ 10-15-30, ամենաշատը՝ 50-100 հոգի, եւ ճանապարհվել հսկական կամայականություններ, հրկիզումներ, բռնություններ կատարելու, հայ ընտանիքների կահույքը տներից դուրս նետելու: Ինչպիսի՞ք են վերջին տվյալները:

ՎԼԱՍՈՎ. 14 սպանված, այդ թվում 3 կին, 3 ադրբեջանցի, 6 հայ, մնացածները պարզվում են, մարմնական վնասվածքներից տուժել է 71 մարդ, այդ թվում 48 հայ: Հրկիզվել է 6 ավտոմեքենա, 13 տներում կատարվել է 19 հրկիզում, տուժել են քաղաքաստունը, ավտոկայանը: Տեղի է ունեցել բռնաբարության փաստ: Տուժել են միլիցիայի 54 աշխատակիցներ, ներբակալվել՝ 47 մարդ, այդ թվում 5 դիակապտիչներ:

ԳՈՐԲԱՉՈՎ. Ձերբակալվածներից երկուսը խոստովանել են, որ իրենցից մեկը սպանել է հինգ, մյուսը՝ երեք հոգու: Դիակապտիչներից հանել են ոսկի, թանկարժեք իրեր:

Դմիտրի Տիմոֆեեւիչը կարգադրել է եւ արագորեն Սումգայիթ են մուտք գործել ռազմական ուսումնարանի կուրսանտներին եւ ուրիշ զինվորականների: Նա նաեւ օգնել է ինքնաթիռներով այնտեղ տեղափոխելու միլիցիայի 3-հազարանոց ուժեր: Նրանց մտցրել են գործողության մեջ, եւ մինչեւ 5-ի վրա նրանք ամեն ինչ վերջացրել են: Ես Ռազումովսկուն ասել եմ՝ այդ ամենը ճիշտ է, բայց եկեք անենք այն, ինչ որ արել ենք Ալմա Ատայում՝ քաղաքացիական մարդկանց ներգրավենք կարգուկանոն հաստատելու գործում, հատկապես բանվոր դասակարգին: Այնտեղ են մեկ-

նել Բոբկովը եւ ընկ. Ռազումովսկու տեղակալը, որպեսզի ահա այդ աշխատանքը կազմակերպեն տեղում:

ՉԵԲՐԻԿՈՎ. Քաղաքը ալեկոծվում է:

ԳՈՐԲԱՉՈՎ. Այո, այո: Ճոճ է տալիս, տենդում է: Հիմա նրանք, ասում են, ավելի հեռուներում ծայրամասերում են շարունակում այդ բաներն անել: Այդ պատճառով ավելի վաղ տրված հրահանգները պետք է ուժի մեջ թողնել: Թող ՆԳՆ-ն գործի, եթե պետք է ինչ-որ բան ավելացնել, թող ավելացնի, բայց իր ձեռքը վերցնի իրադրությունը: Որովհետեւ, ինչպես տեսնում եք, միայն մեկ գիշեր եւ 14 մահ: Դա Հայաստան կհասնի, կսկսվեն թաղումները: Եվ այնտեղից կարող է արձագանք գալ: Ահա այսպիսի իրադրություն:

ՎԼԱՍՈՎ. Սումգայիթում 200 հազար բնակչություն կա:

ԳՈՐԲԱՉՈՎ. 200 հազար: Ըստ որում միջին տարիքը 22 կամ 24 տարեկան:

ՎԼԱՍՈՎ. 25 տարեկան:

ԳՈՐԲԱՉՈՎ. 25 տարեկան: Երիտասարդ քաղաք է: Բայց ամեն տեսակ եկվոր ժողովուրդ, ասում են, այնքան շատ է:

ՎԼԱՍՈՎ. Յուրաքանչյուր հինգերորդը դատված է:

ԳՈՐԲԱՉՈՎ. Հավանաբար, նրանք են կառուցել, հետո նրանց ազատել են , եւ նրանք այստեղ են մնացել: Բայց, ինչպես ասվում է, այդպիսի փորձ նրանք ունեն:

Կարճ ասած հիմա պետք է Հայաստանը զսպել, որպեսզի նա արձագանք չտա: Մենք համարել ենք, թե Ադրբեջան ու Հայաստան ուղարկված մեր ընկերները երկուշաբթի օրը կարող են վերադառնալ եւ հինգշաբթի կարելի է կարծիքներ փոխանակել: Բայց ես կարծում եմ, որ հիմա նրանք պետք է մնան այնտեղ եւ շարունակեն աշխատանքն այդ ուղղությամբ, ուժեղացնեն այն: Ահա Հայաստանում գործը գնաց այդ հարթության վրա, բայց, հավանաբար, ոչ ամենուրեք, հատկապես այնտեղ, որտեղ սահմաններն են, եւ այնտեղ շարունակվում է:

Հիմա ժողովրդին ու հասարակայնությանը պետք է ընդգրկել: Լրատվություն է անհրաժեշտ, իսկ այն ստանալ չես կարող, թաքցնում են եւ նրանք, եւ մյուսները: Բոլորը կապակցված են: Անգործության են մատնված, դրանում խառն են Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի եւ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի ընկերները. եւ այն, եւ մյուս ընկերները: Նրանք բոլորը գիտեն:

ԳՐՈՄԻԿՈ. Մի խոսքով, աշխատում են ոչ լրիվ հզորությամբ:

ԳՈՐԲԱՉՈՎ. Ոչ: Ամբողջ հզորությամբ են աշխատում միայն մյուս կողմի վրա: Խաղարկվում են այդ տրամադրությունները, նրանց գերի են դարձել, նրանց համար արդեն նահանջել դժվար է:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պլենումը պաշտպանել է դիմումը, բայց լրացում է արել հանձնաժողով ստեղծելու մասին: Նրանք հիմա

հեռուն են գնացել եւ ժողովրդի դուդուկով են պարում: Դա փաստ է: Բայց մենք էլ պետք է դա հասկանանք եւ հնարավորություն տանք, ինչպես ասում են նահանջել, վերակառուցել իրենց դիրքորոշումը, բայց պահպանել իրադրությունը:

Ես, իսկն ասած, այդ խոսակցության համար եմ ձեզ հավաքել, որպեսզի բոլորն իրազեկ լինեն: Կարծում եմ, որ թող մեր ընկերներն աշխատեն, նրա մեջ ներգրավեն կուսակցական եւ տեղական այլ մարմինների: Հիմա գլխավորն է պետք է ժողովրդին ավելի ուժգին ներգրավել իրադրության նորմալացման գործընթացի մեջ, դա անել հիմա, քանի դեռ այն չի տարածվել, թե չէ այն ժամանակ շատ ուժեր պետք կլինեն այդ ամենը կանգնեցնելու համար: Դա առաջին ամեն ինչ պետք է այնտեղ անել:

Երկրորդ: Հավանաբար հարկ կլինի, երբ մեր ընկերները վերադառնան, հատուկ լսել այդ հարցը: Դա ավելի ամբողջական ինֆորմացիա կլինի: Այն հնարավորություն կտա մեզ ինչ-որ կոնկրետ հանձնարարությունների հանգել: Ընդհանրապես իրադրությունն ուրվագծվում է, իրադարձությունների պատճառներն էլ կարծես թե պարզ են, բայց դրանք ուսումնասիրության հստակեցում են պահանջում: Չի կարելի դա անուշադրության մատնել, որովհետեւ այն, ինչ տեղի է ունենում այդ հանրապետությունների փոխհարաբերություններում, բաճալի է, որ կարելի է կիրառել շատ հարցերի նկատմամբ: Այդպիսի բախումներ ամենուրեք կան, եւ եթե դրանք չկանգնեցնենք (մենք այստեղ ճիշտ դիրք ենք բռնել), ապա այդ ժամանակ երկպառակությունը կտարածվի ամբողջ երկրով մեկ: Այդ պատճառով մեր դիրքորոշումը ճիշտ է: Այն պետք է հաստատել մեկ անգամ եւս: Դրանում ոչ մի կասկած ես չունեմ:

Երրորդ: Տեսեք, թե ինչ է ստացվում. հանրապետությունների ղեկավարներից ոչ մեկը ոչ մի անգամ մեկը մյուսի մոտ չի եղել, բացի հոբելյաններից, ոչ մեկը հարեւան հանրապետություն չի գնում, չի հանդիպում, մտքեր չի փոխանակում: Նման դեպքում ինչպե՞ս կարելի է խոսել բարեկամական, ինտերնացիոնալ կապերի մասին: Դա ապշեցուցիչ է: Ըստ որում ոչ միայն չի խրախուսվում, այլեւ կասկած է հարուցում, երբ որեւէ մեկը Ադրբեջանից Հայաստան կամ ընդհակառակը Հայաստանից Ադրբեջան է մեկնում:

Վլադիմիր Իվանովիչը երեկ զրուցել է Վազգենի հետ: Նա խոստացել է իր ամբողջ հեղինակությունն օգտագործել հակախորհրդայնություն թույլ չտալու համար: Նրան շատ են զանգել արտասահմանից: Նրա խոսքերով, բոլորին էլ այսպիսի պատասխան է տվել. այդ գործերին մի խառնվեք, ոչ մի հակախորհրդայնություն չպետք է լինի, միայն այստեղ Խորհրդային Միության շրջանակներում է հայ ժողովուրդը զարգանում: Միեւնույն ժամանակ նա ասել է, որ կան իրական հիմնահարցեր, որ այդ իրադարձությունները դատարկ տեղում չեն ծագել: Ըստ որում

նա վկայակոչել է մի օրինակ իր փորձից: Այ, ասում է, ես Բաքվում եղել եմ Ալիեւի մոտ: Բաքվում հայկական եկեղեցի կա: Այդ քաղաքում 200 հազարից ավելի հայեր են ապրում: Վազգենը խնդրել է թույլ տալ եկեղեցում արարողություն կատարել. բայց ահա արդեն 12 տարի է հրավերի է սպասում, սակայն այդպես էլ այն չի ստացել: Նա անցանկալի անձ է, չեն ուզում, որ նա երեւա այդտեղ: Իսկ այդ ամենը նստվածք է տալիս զգացմունքների վրա, շիկացնում դրանք:

Հասկանում եք, ոչ մի շփում: Եվ դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ արդեն ժողովուրդն սկսել է խոսել, երբ նրան խոսափող են տալիս: Թող մարդիկ խոսեն ժողովրդական մակարդակով. ահա թե ինչպես ենք աշխատում մենք տասնյակ ազգությունների ներկայացուցիչներս: Թող դրան հետեւեն բոլոր ուժերը, առաջին հերթին մտավորականությունը:

Բայց կան իրական փաստեր, որոնցից կառչելու հնարավորություն այդ մտավորականությունն ունի: Դրա համար էլ չի կարելի երես թեքել դրանց ուսումնասիրությունից: Ես կարծում եմ՝ ոչ թե ինչ-որ հանձնաժողով պիտի ուսումնասիրի դրանք, այլ ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարությունը: Գխ նախագահության եւ մյուս մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ: Հարկավոր է այստեղ մտցնել ռուսական մշակույթի հեղինակավոր ներկայացուցիչների, որպեսզի նրանք՝ լինեն Հայաստանում եւ Ադրբեջանում: Եվ դա, գիտեք, խաղաղեցնող ազդեցություն է ունենում: Եվ, ըստ երեւույթին, այնուամենայնիվ այնտեղ մի կողմից օգնություն կպահանջվի սոցիալ-տնտեսական հարցերի լուծման գործում, մյուս կողմից նրանց միասին պետք է նստեցնել այստեղ Կենտկոմում, եւ այնտեղ էլ տեղ կա: Նրանք թող գնան-գան մեկը մյուսի մոտ: Պետք է գտնել ձեւերն ու զարգացնել մշակութային, մարդկային կապերը ժողովուրդների միջեւ: Եվ ընդհանրապես մենք արդեն խոսել ենք այն մասին, որ մեզ մոտ ուղեւորություններ են իրականացվում միայն հոբելյանների առիթով, իսկ կենդանի կապերը հանրապետությունների միջեւ բավարար չեն: Դա արդեն առավել խոր հարց է:

Երեկ Եգոր Կուզմիչի հետ խոսելիս մեր մեջ հարց ծագեց. գո՞ւցե ընկերներ, չսպասելով կուսակցական կոնֆերանսին, խորհրդակցություն անցկացնենք ժամանակակից պայմաններում ազգային քաղաքականության բնագավառում մեր խնդիրների մասին:

ՅԱԶՈՎ. Գեորգի Պետրովիչը խնդրում է երեկոյան Սումգայիթում պարետային ժամ մտցնել: Դա նշանակում է, որ պետք է զորքեր մտցնել եւ նրա մի մասը զինել, բայց ոչ կրակելու համար: Իսկ քանի որ պարետային ժամ է, ուրեմն պետք է ամեն ինչ անել:

ԳՈՐԲԱՉՈՎ. Իսկ պարետային ժամը պե՞տք է:

ՅԱԶՈՎ. Ես գտնում եմ, որ պետք է:

ԳՈՐԲԱՉՈՎ. Զենքը պատրաստ ունենալ, բայց չկրակել: Թե չէ կսկսեն խփել այդ թափառողներին:

ՅԱԶՈՎ. Զենքը կտանք առանց փամփուշտների, հետո զրահատրանսպորտյորը փամփուշտներով կընթանա մեկուսացված: Դա կանենք, կկազմակերպենք:

ԳՈՐԲԱՉՈՎ. Փամփուշտներն առանձին:

ՅԱԶՈՎ. Եթե թույլ կտաք, այդ դեպքում ես այդպիսի ցուցում եմ տալիս:

ԲԱՂԲՅՈՒՐՈՅԻ ԱՆԴԱՄՆԵՐ. Համաձայն ենք:

ԳՈՐԲԱՉՈՎ. Ես կարծում եմ, դա անհրաժեշտ է անել, որպեսզի կասկածներ չլինեն:

Առջեւում կոնֆերանսն է: Կոնֆերանսին վերաբերող նյութեր ավելի ու ավելի շատ են գալիս ինձ մոտ: Այդ հարցն, իհարկե, պահանջում է ավելի խոր ուսումնասիրություն, գուցե նույնիսկ վերադառնալ այն անցյալ փորձին, երբ այդ ամենն սկսել է սաղմնավորվել: Այն ժամանակ, պարզվում է, հետաքրքիր շատ բաներ են եղել: Նույնիսկ ինտերնացիոնալ գյուղխորհուրդներ:

ՅԱԿՈՎԼԵՎ. Ազգային գյուղխորհուրդներ, շրջաններ: Հետո դրանք վերացել են: Դուռը բախում են նաեւ ուրիշ հարցեր թաթարները, գերմանացիները:

ԳՈՐԲԱՉՈՎ. Ազգային գյուղխորհուրդներում էլ մի որեւէ ազգություն կենտրոնացնել: Իսկ ազգային շրջանները 5200-ն են եղել, կարծեմ: Այնինքն առավել ճկուն է եղել այն համակարգը, որն ամբողջ բազմազանությունն է ընդգրկել այն հաշվով, որպեսզի համախմբվելու, մշակութային շփման հնարավորություններ տա: Շատ ճկուն:

Իհարկե, այդ բոլոր հարցերը մեր դուռն են բախում: Վաղուց են դիմում թաթարները, գերմանացիները: Եգոր Կուզմիչին խնդրել եմ դոսիե հավաքել այդ հարցերի վերաբերյալ: Մենք գերմանացիներին արդեն բազմիցս ենք անդրադարձել, եւ այդ հարցի վերաբերյալ Քաղբյուրոյի վճռաբաշխված որոշում ունենք, նաեւ զանազան գրություններ եւ այլն: Դարձյալ, ես ձեզ կասեմ, հետաքրքիր է: Այս պլենումի նախօրյակին ես զրուցել եմ Պուպովի հետ Ալթայի երկրկոմի քարտուղարի: Խոսք գնաց Կուլունդայի մասին: Ես ասում եմ, լսիր, գո՞ւցե այնտեղ բոլոր պայմանները հասունացել են, որ գերմանական ինքնավարություն ստեղծենք: Իսկ դա ինչի՞ է պետք, ասում է նա միանգամից, ուղղակի, առանց մտածելու եւ խորհելու: Ես ասում եմ, դե սպասիր, չէ որ դու նրանց գովում ես լավ մարդիկ են: Իսկ նա թե դե թող աշխատեն, նրանց ի՞նչ է խանգարում: Բայց չէ որ նրանք իրենց ինչ-ինչ պրոբլեմներն ունեն, ասում եմ, չէ որ դա Կուլունդան է, չէ որ այնտեղ ոչ ոք չի ուզում ապրել: Ահա այսպես, նրանց խորհելու էլ ասաց ինձ. ինչի՞ է դա պետք:

ՍՈԼՈՄԵՆՑԵՎ. Նրանց մոտ եղած գերմանացիները Վոլգայից չեն:

ՉԵԲՐԻԿՈՎ. Նրանք այդ վայրերից ոչ մի տեղ չեն գնա, նրանք այդ տեղ հիանալի են ապրում:

ԼԻԳԱՉՈՎ. Գերմանացիները սկսել են վերաբնակվել Եկատերինա 2-րդի օրոք: Հարյուր տարի ի վեր նրանք օգտվել են բանակ չգորակոչվելու իրավունքից: Հետո Ալեքսանդր 2-րդի օրոք այդ բանը վերացրել են: Ընդամենը 400 հազար հոգի են վերաբնակվել:

ԳՈՐԲԱՉՈՎ. Կուլունդայում նրանք լավ են ապրում: Ես տեսել եմ, եւ փողոցներն էլ այնպես խնամված են: Յուրաքանչյուր տան կողքին փոքրիկ պարտեզ... Ամեն ինչ հիանալի է: Եվ բերք էլ ունեն:

Պետք է իրար հետեւից լուծել այդ բոլոր հարցերը: Բայց հիմա պետք է ամենից առաջ վերջացնել այդ իրադրությունը Հայաստանում:

Քարտուղարությանը հանձնարարություն գրի առնենք, սկսել այն պատճառների ուսումնասիրությունը, որոնք հանգեցրել են այդ իրադարձություններին: Պետք է հանգիստ պարզել, ոչ այնքան մերկացնել, որքան որ պարզել, ըստ որում իրենց մասնակցությամբ, մեր մտավորականության մասնակցությամբ: Պետք է ներկայացուցչական հանձնաժողով ստեղծել, գիտնականներ, մտավորականություն, ոչ միայն կուսաշխատողներ: Կուսաշխատողներից շատերը տրամադրված են, որ հավաքեն եւ դրական, եւ բացասական փաստեր: Այստեղ պետք է առավել ժողովրդավարական հանձնաժողով ունենալ, ղեկավար մարդ նշանակել, եւ թող ամեն տեղ գնան, խոսեն:

ԳՐՈՄԻԿՈ. Այդ դեպքում, երեւի, ոչ թե հանձնաժողով, այլ պատվիրակություն, որպեսզի չշփոթեն այն հանձնաժողովի հետ, որը պարտադրում են:

ԳՈՐԲԱՉՈՎ. Այո: Թող քարտուղարությունը գտնի հարմար ձեւերը, նա եւ նյութերը կպահանջի, եւ վիճակագրությունը կպահանջի, եւ ուղեւորություններն ու փոխանակումները կկազմակերպի, եւ մարդիկ կգնան: Արդեն իսկ նախապատրաստությունը պետք է նպաստի մերձեցմանը: Մենք պետք է նույնպես յուրացնենք աշխատանքի նոր մեթոդներ, առանձնապես այս նուրբ հարցում:

Երբ նրանք այնտեղ սկսում են,- ես կոպիտ խոսք թույլ կտամ,- շան պես «գզվռտվել», նրանց պետք է կանգնեցնել, համոզել մտածել գլխավորի մասին, այն մասին, որ իրենք հարեւաններ են, այն մասին, որ իրենք դարեր ի վեր միասին են ապրում:

Երբ խորամուխ ես լինում որեւէ գաղափարի մեջ, ապա որսում ես բոլոր նրբությունները: Մի ադրբեջանցի կոմպոզիտոր ասում է իմ Շուշան: Նա այնտեղ Ղարաբաղում է ծնվել եւ ասում է, որ դա արեւելյան արվեստի կենտրոնն է եւ այլն, դա իրենց ընդհանուր օրրանն է: Ինչպե՞ս կարող ես նրան կտրել դրանից: Իսկ Հայաստանն էլ մի բան է ասում մերն է: Դա միջից կես չես անի, դարեդար ամեն ինչ միասին է եղել:

Հայկական ինքնավարություն Ադրբեջանում դիալեկտիկա էլ կա դրանում, բայց պետք է, որ այն իրոք ինքնավարություն լինի եւ օգտվի բոլոր հնարավորություններից: Ահա այստեղ պետք է որեւէ տեղ գտնել լուծումը: Բայց թող առանց մեր օգնության դա ըմբռնեն, թե չէ նրանք կարվեն: Դա առաջինն է, որ պետք է անել իրադրությունը կարգավորելու:

Երկրորդ: Երեկ մեզ մոտ խոսակցություն ծագեց: Գո՞ւցե, չսպասելով կուսակցական կոնֆերանսին ու ազգային հարցերի վերաբերյալ պլենումին (իսկ այն մեզ մոտ այս տարվա վերջից շուտ լինել չի կարող, քանի որ աշնանը պլենում կլինի ագրարային հարցերի վերաբերյալ), երբ այդ կրքերը կխաղաղվեն, խորհրդակցություն հավաքենք ու աշխատանքային խոսակցություն անցկացնենք: Այնտեղ հավաքենք առաջին քարտուղարներին, գերագույն խորհուրդների նախագահությունների նախագահներին, մարզգործկոմների նախագահներին: Ըստ որում բյուրոկրատական շրջանակների մեջ չփակվել, ինչպես ասում են, հրավիրել մտավորականության ներկայացուցիչների, որպեսզի խոսակցությունը վստահելի լինի մեր ընտանիքում: Էլ որտեղ, եթե ոչ Կենտկոմում կարելի է այդ ամենն ասել:

ԳՐՈՄԻԿՈ. Համամիութենական խորհրդակցություն:

ԳՈՐԲԱՉՈՎ. Այո, համամիութենական խորհրդակցություն Կենտկոմում, բայց ղեկավար մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ եւ մեր հանրապետությունների խոշոր մտավորականության մասնակցությամբ, որպեսզի նրանք նույնպես հանդես գան եւ գրողներ, եւ գիտնականներ: Պետք է, որ այդ խորհրդակցությունը բյուրոկրատական չլինի: Դրա համար, իհարկե, մեկ ամիս, առնվազն, կպահանջվի, ոչ պակաս, եթե, իհարկե, այդ մասին մենք պայմանավորվենք: Հավանաբար, մենք, ընկերներ, յոլա չենք գնա առանց այդպիսի խոսակցության: Ի դեպ, այդ աշխատանքի ընթացքում նաեւ հարցեր կկուտակվեն պլենումի պրոբլեմատիկայի վերաբերյալ: Առավել հասկանալի կլինի որն է դա: Դա նպատակահարմար է անել ապրիլի երկրորդ կեսին: Ինչ վերաբերում է պլենումի անցկացման ժամկետներին, ապա 1988 թվականի սահմաններից չպետք է դուրս գա:

Իմ հանձնարարությամբ օգնականներս արդեն այդ հարցի վերաբերյալ պատվիրել են ակադեմիկոս Բրոմլեյին: Նա մեզ մոտ էթնիկական եւ դրա հետ կապված այլ հիմնահարցերի ուսումնասիրության հարցերով է զբաղվում: Նա ինձ միանգամից ասաց, որ այդ հիմնահարցերով, դատ երեւույթին, ոչ ոք չի զբաղվում, անկեղծորեն ասած: Մենք հենց նոր ենք մեզ մոտ ենթաբաժին ստեղծել: Դա պահանջում է ամեն ինչ կշռադատել: Պլենումը կվճռի: Խորհրդակցությունն ինչ-որ բան կհուշի: Դա հայկական պետական կարեւորություն ունեցող հարց է: Երբ ես այդ

հարցի վերաբերյալ մի թուղթ կարդացի, տեսա, թե այդ ասպարեզում ինչքան հիմնահարցեր են կուտակվել:

Իհարկե, պլենումը հեշտ չի լինի: Մենք պլենում տանելու շատ բան ունենք: Ազգային ոլորտում մեր նվաճումները հսկայական են: Դրանք գերակշռում են ամեն ինչին: Դա այն բազան է, որի վրա կարելի է լուծել սուր հարցեր, օգտագործելով վերակառուցման, ժողովրդավարության մեր փուլը:

Ըստ երեւույթին, այդպես պետք է կառուցել մեր աշխատանքը: Հիմա պետք է վերջ դնել Ադրբեջանի ու Հայաստանի ահա այդ իրադարձություններին: Զբաղվել դրանց պատճառներով եւ այլն: Եթե հարկ լինի Ղարաբաղի վերաբերյալ որեւէ որոշում ընդունել կենտրոնում, ապա դա անել այն բանից հետո, երբ հանրապետությունն ինքը մեզ կդիմի սոցիալ-տնտեսական հիմնահարցերի վերաբերյալ խնդրանքով:

Ապրիլի վրա պատրաստել խորհրդակցությունը: Մի խոսքով, գործը եռանդուն ձեռնարկել, որպեսզի այդ հարցը դուրս չպրծնի մեր ձեռքից:

ԳՈՐՄԻԿՈ. Ես կարծում եմ՝ դուք բացարձակապես ճիշտ ասացիք: Հիշո՞ւմ եք, դուք այստեղ կարդում էիք Լենինի կողմից ոնց որ անցողակի, հարեւանցիորեն կատարված դիտողությունները: Նա գտնում էր, որ այնուամենայնիվ այնտեղ կան հարցեր: Նա ասել է՝ լավ կլինի կանգնեցնել դա: Կանգնեցնել: Չի ասել, թե այ սրանք իրավացի են, սրանք՝ անիրավացի: Ըստ երեւույթին, այն ժամանակ նրա հոգսը դա չի եղել: Այդ պատճառով էլ ինչ-որ հարցեր կան:

ԳՈՐԲԱՉՈՎ. Մենք ձեզ հետ միասին այժմ գիտենք, որ այն ժամանակ հիվանդության պատճառով Լենինն արդեն ընդհանրապես հեռացել էր գործերից: Բայց հիմա մենք պետք է ելնենք ներկայիս իրողություններից:

ԳՈՐՄԻԿՈ. Ինձ ճիշտ է թվում այդ գաղափարը. ավելի խորը ուսումնասիրել իրադարձությունների պատճառները, խմբեր, պատվիրակություններ ուղարկել եւ գործը տանել այն ուղղությամբ, որի մասին դուք ասացիք: Բացասական, համատարածական վերաբերմունք չպետք է լինի՝ միայն հուպ տուր եւ վերջ: Այդ հանրապետությունների ղեկավարությունն իր բարձրության վրա չգտնվեց: Ի՞նչ աստիճանի է նրա մասնակցությունը դրան: Պատկառելի աստիճանի:

ԳՈՐԲԱՉՈՎ. Ի դեպ, Եգոր Կուզմիչ Լիգաչովը եւ Ալեքսանդր Իվանովիչ Յակովլեւը գիտեին, որ երբ ես զրուցել եմ Կապուտիկյանի ու Բալայանի հետ, այդ հարցը ծագել է:

Միխայիլ Սերգեեւիչ, հայտարարեցին նրանք, մեզ լուրեր են հասնում, թե ցանկանում եք Դեմիրճյանին ազատել: Ես պատասխանեցի. դրանք լուրեր են, որոնք ես հաստատել չեմ կարող: Բալայանն իսկույն խոսակցության մեջ մտավ ու ասաց. եթե դա իրականացվի հիմա, այդ ի-

նադարձություններից անմիջապես հետո, ապա մենք նրան տառապյալ-հերոս կդարձնենք: Իսկ դա թույլ տալ չի կարելի: Ըստ որում նրանք երկուսն էլ նրա նկատմամբ քննադատաբար են տրամադրված: Ասում են, թե եղել է ժամանակ, երբ նա աշխատել եւ շատ բան է արել: Բայց վերջին ժամանակների մասին դա ասել չի կարելի: Ես հայտարարեցի, որ մենք հիմա նրան հանել չենք պատրաստվում: Երբ ես դա ասացի, Բալայանն իսկույն պատասխանեց. բայց այդ հարցի լուծումը ձգձգել նույնպես պետք չէ: Չափազանց հաճախ Ալիեւի ազգանունը հոլովվում է, կրկնվում է նրա հայտարարությունը, թե Ղարաբաղը եղել եւ միշտ կլինի ադրբեջանական:

Մենք մեր որոշմամբ նույնպես հաստատում ենք դա, բայց ոչ այդքան հիմարաբար, սադրիչ ձեւակերպումով:

ԳՈՐՄԻԿՈ. Ինչպես կարողացավ ղեկավարությունը թույլ տալ այդպիսի վիճակ:

ԳՈՐԲԱՉՈՎ. Եգոր Կուզմիչ, պետք է բրիգադ կազմել, մարդիկ ուղարկել: Հետո նրանց հանդիպել, զրուցել, բայց մինչ այդ պլանավորել այս հարցը, տալով այսպիսի հանձնարարություն: Ասում են, թե այստեղ մեզ մոտ էլ շատ նամակներ ու դիմումներ են եկել: Դրանք ու՞ր են կորել: Ասում են՝ դրանց ոչ ոք չի արձագանքում: Դե եթե ոչ ոք չի արձագանքում, այդ դեպքում պետք է փողոց դուրս գան եւ ստիպեն, որ արձագանքեն:

ԼԻԳԱՉՈՎ. Ես Դեմիրճյանին առնչվող քիչ նամակներ չեմ կարդացել: Լավ տպավորություն չի ստեղծվում:

ԳՈՐԲԱՉՈՎ. Իսկ ահա այս թեմայո՞վ:

ԼԻԳԱՉՈՎ. Այս թեմայով ես չեմ կարդացել: Մենք Դեմիրճյանի վերաբերյալ պայմանավորվել ենք, փաստորեն կանխորոշել ենք:

ԳՈՐԲԱՉՈՎ. Այս մեկը պետք է ուսումնասիրել վերջին տարիների առումով: Հիմա պարզ է, երբ արդեն իրադարձություններն սկսվել են, բայց ի՞նչ է եղել դրանից առաջ:

ԼԻԳԱՉՈՎ. Ադրբեջանում եւ Հայաստանում, հա՞:

ԳՈՐԲԱՉՈՎ. Այո: Մոտավորապես երկու, երեք տարվա ընթացքում, եկեք՝ երեք տարվանը վերցնենք: Ապրիլից հետո:

ԼԻԳԱՉՈՎ. Լեռնային Ղարաբաղի վերաբերյա՞լ:

ԳՈՐԲԱՉՈՎ. Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ: Եվ պետք է տեղեկանալ եւ նախագահությունում, եւ կառավարությունում, ամեն տեղ ստուգել, Վիկտոր Միխայլովիչ, ձեզ մոտ էլ նայեցեք: Որովհետեւ հայերը բողոքում են, ասում են, թե իրենց դիմումներին ոչ ոք չի արձագանքում: Բայց դա այդպես է, թե չէ՝ ես չգիտեմ, որովհետեւ ինձ ոչինչ չի հասել, ես չեմ կարդացել:

ԼԻԳԱՉՈՎ. Ես էլ չեմ կարդացել:

ԳՈՐԲԱՉՈՎ. Չես կարդացե՞լ: Թե՞ մեզ չեն զեկուցում:

ԼԻԳԱՉՈՎ. Թեեւ ես հաճախ եմ նամակների տեսություններ կարդում: Դեմիրճյանի վերաբերյալ նամակներ շատ են եղել:

ԳՈՐԲԱՉՈՎ. Դեմիրճյանի վերաբերյալ այո:

Եգոր Կուզմիչ, այդ դեպքում գու՞ցե մենք այսպես բաշխենք աշխատանքը: Այդ ամբողջ հարցի ուսումնասիրությունը հարկ կլինի, որ քեզ վրա վերցնես, բոլոր պատճառները փորփրիր: Ես էլ պատրաստ եմ մասնակցել, երբ կորոշենք ում որտեղ ուղարկել, ում ղեկավար դնել: Բայց պետք է ընտրել մտածող, ծանրակշիռ մարդկանց:

Ալեքսանդր Նիկոլաեւիչ, քեզ կհանձնարարենք նյութերի նախապատրաստումը այդ խորհրդակցությանը: Նաեւ Ռազումովսկուն, Լուկյանովին:

Եկեք, ուրեմն, դրանով զբաղվենք:

ՅԱԶՈՎ. Բայց, Միխայիլ Սերգեեւիչ, Սումգայիթում պետք է, եթե ուզում եք, գուցե այն բառը չէ, ռազմական դրություն մտցնել:

ԳՈՐԲԱՉՈՎ. Պարետային ժամ:

ՅԱԶՈՎ. Պետք է հաստատակամորեն վարել այդ գիծը: Միխայիլ Սերգեեւիչ, քանի դեռ ավելի հեռուն չի գնացել: Պետք է զորքեր մտցնել այնտեղ եւ կարգ հաստատել: Քաղաքը մեկուսացված է, այնուամենայնիվ: Դա Հայաստանը չէ, որտեղ միլիոնավոր մարդիկ են: Ի դեպ, դա անշուշտ սթափեցնող ազդեցություն կունենա մյուսների վրա:

ԳՈՐԲԱՉՈՎ. Ալեքսանդր Վլադիմիրովիչ եւ Դմիտրի Տիմոֆեեւիչ, դուք նկատի ունեցեք հնարավոր իրադրությունը Բաքվում եւ Լենինականում, եւ այն քաղաքում, որտեղ հայկական շրջան կա:

ՎԼԱՍՈՎ. Կիրովաբադը:

ԳՈՐԲԱՉՈՎ. Կիրովաբադը:

ՎԼԱՍՈՎ. Մի քիչ պատուհաններ են ջարդել եւ վերջ:

ԳՈՐԲԱՉՈՎ. Պետք է հաշվի առնել, որ դեռեւս չգիտեն, թե ինչ է եղել Սումգայիթում, իսկ նման լուրը տեղ է հասնում այնպես, ինչպես ձնագունդն է մեծանում:

ՇԵՎԱՐԴՆԱՉԵ. Դա նման է հաղորդակից անոթի: Եթե Հայաստանում իմանան զոհերի մասին, ապա դա կարող է այնտեղ բարդություններ առաջ բերել:

ՅԱԿՈՎԼԵՎ. Պետք է շուտ հաղորդել, որ Սումգայիթում տեղի ունեցածի կապակցությամբ քրեական գործեր են հարուցված, հանցագործները ձերբակալված են: Դա անհրաժեշտ է կրքերը սառեցնելու համար: Սումգայիթում էլ քաղաքային թերթը պետք է դա ասի հաստատորեն ու արագ:

ԳՈՐԲԱՉՈՎ. Գլխավորը պետք է հիմա անհապաղ հասարակական կարգը խախտողների դեմ պայքարում ներգրավել բանվոր դասակարգին, մարդկանց, դրուժիննիկներին: Դա, ես ձեզ կասեմ, կանգնեցնում է ամեն տեսակ խուլիգաններին ու էքստրեմիստներին: Ինչպես որ այն ժամանակ Ալմա Աթայում էր: Դա շատ կարեւոր է: Զինվորականներն ավելի են չարացնում:

ՍՈԼՈՄԵՆՑԵՎ. Ռեակցիան ուրիշ է լինում, երբ, Միխայիլ Սերգեեւիչ, զինվորականների շարք է կանգնած, իսկ այստեղ բանվոր դասակարգի մեկ-երկու շարք, գիտեք, բոլորովին այլ իրադրություն է: Ալմա Աթայում էքստրեմիստներին ու խուլիգաններին զսպել է բանվոր դասակարգը: Դիշերը, երբ ես ձեր հանձնարարությամբ թռել էի Ալմա Աթա, ժամը երեքին հավաքեցինք հանրապետական ակտիվին, իսկ առավոտյան ժամը հինգի վրա բանվորական ջոկատներ կազմավորեցինք, եւ նրանք զսպեցին այդ ազգայնամոլներին:

ԳՈՐԲԱՉՈՎ. Այդ մասին ես ասել եմ երեկ երեկոյան, երբ զինվորականների մասին այդ հարցերն էինք վճռում, Վիկտոր Միխայլովիչի զանգից հետո: Հետո ես երկու անգամ կանչեցի Ռազումովսկուն եւ մի անգամ եւս նրա ուշադրությունը հրավիրեցի պետք է ժողովրդին ոտքի հանել, ժողովրդին: Առավել եւս տեսնու՞մ եք, թե ինչ է ստացվում: Միլիցիան կանգնած է, իսկ հասարակական կարգի այդ խախտողները նրանց թիկունքում: Պետք է որ ժողովուրդը հասկանա, թե գործը դեպի ուր է թեքվում:

ՈԱԶՈՒՄՈՎ. Ալմա Աթայում ամեն ինչ վճռեց բանվոր դասակարգը: Այնտեղ ուրիշ իրադրություն էր, ամբոխին զսպեցին բանվորների ջոկատները, հիմնականում ռուս բանվորների:

ԳՈՐԲԱՉՈՎ. Այն ամենը, ինչ մենք անում ենք զորքերի գծով, ՆԳՆ-ի գծով անարժեք համարել չի կարելի: Կիրովաբադում հենց որ պարաշյուտիստները երեւացին բոլորը հեռացան: Հետո էլ պարաշյուտիստները, որպես կանոն, նույնպես ռուսներ են:

ՅԱԶՈՎ. Պետք է կոմբինացնել այդ աղբյուրները եւ մտցնել գոնե մեկ պարաշյուտային կամ դեսանտային գումարտակ, ինչպես նաեւ միլիցիայի մեկ գումարտակ Ստեփանակերտ, որպեսզի այնտեղ այդպիսի խառնաժողովներ չլինեն: Այդ 500 հոգին հրապարակում մի գեներատոր են, որը տրամադրություններն է շիկացնում:

ԳՈՐԲԱՉՈՎ. Ես այսպիսի մի խնդրանք ունեմ. խոսել Ռազումովսկու, Բագիրովի եւ Պողոսյանի հետ: Պետք է իմանալ նրանց կարծիքը:

Երեկ Վիկտոր Միխայլովիչն այդ կարծիքին էր, Ռազումովսկին էլ: Այստեղ էլ ճիշտ պետք է գործել եւ ժամանակ չկորցնել, եւ հակառակ արդյունքը չստանալ: Պողոսյանը Ռազումովսկուն խնդրել է մեկնել այնտեղից: Ես զգում եմ, որ ազդակները Հայաստանից են գալիս, որ Ստեփանակերտում «մխա»: Չէ որ կարելի է խոսել Պողոսյանի հետ եւ ուղղակի հարցնել. դուք ինքնե՞րդ կարող եք այդ ամենին վերջ դնել, թե՞ ձեզ օգնել է պետք:

ՉԵԲՐԻԿՈՎ. Երեւանից խնդիր է դրվում Ստեփանակերտում պլենում անցկացնել: Պատճառաբանությունն այսպիսին է. Երեւանում պլե-

նում է եղել, իսկ Ստեփանակերտում ոչ: Այստեղից էլ «մինչեւ որ Ստեփանակերտում պլենում չանցկացվի, չցրվել» գաղափարը: Այդ պատճառով էլ նրանք դեռեւս 10 օր, 15 օր էլ են մնալու: Պետք է այնպես անել, որ այդ մարդիկ չլինեն Ստեփանակերտի հրապարակում: Ամեն ինչ կազմակերպված է: Կոլտնտեսություններից սննդամթերքներ են բերում, ճաշարաններում ուտելիք է պատրաստվում հրապարակում գտնվողների համար: Այդ մարդիկ գիշերելու տեղ ունեն եւ մշտապես փոխվում են:

ԳՈՐԲԱՉՈՎ. Վիկտոր Միխայլովիչ, այնուամենայնիվ, երբ մարդիկ հասարակական կարգը չեն խախտում, պետք է քաղաքական աշխատանք տանել նրանց հետ, այլ ոչ թե զորքերով ցրել նրանց:

ՉԵԲՐԻԿՈՎ. Ոչ թե ցրել, այլ մի ոչ մեծ հերթապահ շրջափակում կատարել:

ԳՈՐԲԱՉՈՎ. Եթե մարդիկ իրենց հանդարտ են պահում, պետք է մինչեւ վերջ քաղաքականապես ազդել: Էլ ինչու՞ զորքեր մտցնենք:

ՅԱԿՈՎԼԵՎ. Իսկ, այ, Սումգայիթում պետք է զորքեր մտցնել: Այնտեղ պետք է ցույց տալ «իշխանության ձեռքը»:

ԳՈՐԲԱՉՈՎ. Եթե չցրվեն, միեւնույն է, պետք է աշխատել, այլ ոչ թե ցրել: Եթե մարդիկ իրենց հանդարտ են պահում եւ խուլիգանություն չեն անում, ապա զորքերով նրանց չես ցրի: Այստեղ շրջափակում է պետք: Որպեսզի խառնաժողովներ չլինեն:

ՅԱԶՈՎ. Վարորդներն աշխատանքի են գալիս, բայց ուղերթի չեն գնում, վախենում են, բայց ահա բնակավայրերից սննդամթերքները քաղաք են բերում: Դրանց չպետք է թույլ տալ Ստեփանակերտ մտնել:

ՌԱԶՈՒՄՈՎ. Դպրոցները չեն աշխատում: Նրանք հրապարակում հերթապահություն են կազմակերպել:

ԳՈՐԲԱՉՈՎ. Ուրեմն, թող Ռազումովսկին մնա Բաքվում, իսկ Դեմիչեւն այնտեղ մեկնի, այ, դրանով զբաղվի ամենից առաջ: Բայց, ընկերներ, եթե ժողովուրդն իրեն զուսպ ու հանդարտ է պահում, ապա պետք չէ սկսել նրանց զինվորականներով տրորել: Դա բանի նման չէ: Եկեք այդ կանոնը անխախտ պահենք:

Հայաստանում երբ զորքերն ընտրել են եւ երբ նրանք դա տեսել են, դա մարդկանց լրջացրել է: Նրանք հասկանում են, որ իշխանությունն իշխանություն է: Բայց դրա հետ միասին այն, որ ոչ ոք մատով նրանց չի դիպել, նրանք դա նույնպես գնահատել են:

ՅԱԶՈՎ. Ակադեմիկոս Համբարձումյանը, Միխայիլ Սերգեեւիչ, զանգել է Կոչետովին, ասել, դու ինչո՞ւ ես այստեղ եկել: Նա պատասխանել է, դե, ինչպես թե ինչու, չէ որ սա Անդրկովկասյան օկրուգն է: Այդ ժամանակ Համբարձումյանը հարց է տվել. իսկ դու ի՞նչ ցուցումներ ես ստացել:

ԳՈՐԲԱՉՈՎ. Տես, տես...

ՅԱԶՈՎ. Փորձեր են արվել զինվորների շրջանում թռուցիկներ տարածել:

ԳՈՐԲԱՉՈՎ. Եթե սկսվի այն, ինչ եղել է Սումգայիթում, պետք է գործել վճռականորեն եւ մինչեւ վերջ:

ԼԻԳԱՉՈՎ. Միխայիլ Սերգեեւիչ, ախր չէ որ այնտեղ յուրաքանչյուր հինգերորդը դատված է, նշանակում է այնտեղ կան հարյուր, երկու կամ երեք հարյուր անուղղելի մարդիկ, դրանց պետք է անհապաղ արտաքսել Սումգայիթից:

ԳՈՐԲԱՉՈՎ. Ճիշտ է: Ձերբակալել: Պատմիր, Դմիտրի Տիմոֆեեւիչ, թե ինչպես են սպանում:

ՅԱԶՈՎ. Երկու կանանց կրծքերն են կտրել, իսկ մի աղջնակի կաշին քերթել են: Ահա այսպիսի վայրենություն: Մի քանի կուրսանտներ դա տեսնելով ուշաթափվել են:

ՉԵԲՐԻԿՈՎ. Հայերի բնակարաններում ամբողջ կահույքը վառել են:

ԳՈՐԲԱՉՈՎ. Բանդիտներ, դիակապտիչներ: Շատերի մոտ թանկարժեք իրեր են գտնվել, ձերբակալության ժամանակ ոմանցից թանկարժեք իրեր են խլվել:

ԼԻԳԱՉՈՎ. Պետք է շտապ նրանց հանդեպ դատավարություն անցկացնել: Հետաքննությունը չձգել: Ինչպես որ դա երբեմն արվում է՝ շաբաթներով, ամիսներով, նույնիսկ տարիներով: Այստեղ պետք է շատ վճռականորեն գործել:

ԳՈՐԲԱՉՈՎ. Նույնիսկ ինչ-որ չափով, ընդհանրապես ասած, ժամանակը մի քիչ բաց ենք թողել:

ԼԻԳԱՉՈՎ. Ես վերհիշում եմ, ճիշտ է աղոտ, Նովոչերկասկի իրադարձությունները: Այնտեղ մի դիվիզիա մտցրինք: Ես այնտեղ եմ եղել Վլադիմիր Իլիչ Ստեպանկովի հետ: Այնտեղ Կենտկոմի քարտուղարներն են եղել: Ես այն ժամանակ բաժնի վարիչի տեղակալ էի: Ահագին ազդեց: Ամեն ինչ տառացիորեն մի ակնթարթում վերջացավ: Երբ իշխանությունն անօգնական է, ընդունակ չէ կարգ ու կանոն հաստատել եւ մարդկանց պաշտպանել, դա բացասաբար է անդրադառնում, մարդկանց պաշտպանել էր պետք: Այստե՞ղ ինչ կարող ենք անել: Ես համոզված եմ, որ բանվորներին էլ կկլանի այդ աղմուկը: Եվ եթե դեռ պատմվի այն, ինչ հաղորդեց Դմիտրի Տիմոֆեեւիչը, ապա առավել եւս: Պետք է վճռել այդ հմաստով:

ԳՈՐԲԱՉՈՎ. Ամեն ինչ պետք է գործի դնել եւ մեր ձեռքն առնել այդ բաղաքը: Ինչ վերաբերում է պատիժ կրածներին, ապա նրանք երեւի ձեզ մոտ այնտեղ հաշվառքի մեջ են այդ «առանձահատուկ անուղղելիները»...

ԳՐՈՄԻԿՈ. Պետք է նրանց ձերբակալել:

ՅԱԶՈՎ. Միխայիլ Սերգեեւիչ, հանցագործները ձերբակալվել են բայց օրվա ընթացքում 20-ից 16-ին բաց են թողել, մնացել են 4-ը: Արդեն զինվորականներ մտցնելուց հետո ձերբակալել են առանձնապես վտանգավոր հանցագործներին:

ԳՈՐԲԱՉՈՎ. Ալեքսանդր Վլադիմիրովիչ, միլիցիայի պետին անգործունության համար պետք է հեռացնել: Անհապաղ հեռացնել: Առանց երկարատեւ ծառայողական հետաքննության, ինչպես որ դա սովորաբար անում են: Քանի որ այդպիսի բան է թույլ տվել, անհապաղ հեռացնել եւ ուրիշի նշանակել: Գուցե Բաքվից մի օրինավոր մարդու:

ՅԱԿՈՎԼԵՎ. Իսկ չի կարելի՞ այդ երկու մարդասպանների նկատմամբ, որոնք խոստովանել են, արագորեն հրապարակային դատ անց կացնել:

ԳՈՐԲԱՉՈՎ. Պետք է: Հենց այդ մասին է խոսում եգոր Կուզմիչը:

Պետք է փակել մատույցները, որպեսզի տրանսպորտ չանցնի, որպեսզի ինքնաթիռներ չթռչեն Երեւանից եւ այլն:

Վլադիմիր Իվանովիչից եւ Անատոլի Իվանովիչից կխնդրենք մանուլի համար մի տեղեկություն այն մասին, որ հայկական ձեռնարկությունները սկսել են աշխատել: Ի դեպ, նրանք երեկ հիանալի հաղորդումներ են տվել տեղական հեռուստատեսությամբ: Ցույց են տվել մարդկանց իրենց աշխատատեղերում, նրանց լավ տրամադրությունը:

ՍՈԼՈՄԵՆՑԵՎ. «Ժամանակ» ծրագրում էլ են ցույց տվել: Ստեփանակերտում մի գործարան են ցույց տվել: Երեւանցի բանվորների ելույթներ են տվել, որոնք դատապարտում են տեղի ունեցածը, ասում են, որ աշխատում են բաց թողնված օրերի փոխարեն:

ԳՈՐԲԱՉՈՎ. Պայմանավորվեցի՞նք, ընկերներ:

ՔԱՂԲՅՈՒՐՈՅԻ ԱՆԴԱՄՆԵՐ. Այո:

ԳՈՐԲԱՉՈՎ. Ես հիմա մեր ընկերների հետ կխոսակցեմ ժողովրդի մեջ աշխատանքի հաշվով. ահա բաղան:

Որոշումն ընդունվում է:

Կատարվում են արձանագրային հանձնարարություններ Սումգայիթում պարետային ժամ մտցնելու եւ վերջին 3 տարում Լեռնային Ղարաբաղին վերաբերող նամակների հավաքածուի մասին:

ԳՓԿՊ, գատնազերծված փաստաթղթերի հավաքածու («Ոդդինա» հանդես, թ.4, Մոսկվա, 1993 թ.)

Տեսնո՞ւմ եք, թե ինչքան ստորություն, ցինիզմ ու փարիսեցիություն կա ԽՍՀԿ Կենտկոմի Քաղբյուրոյի այդ բարձրաստիճան երեւելիների ելույթներում, ինչպես էին նրանք «անհանգստանում» ժողովուրդների համար եւ ինչպես էին վճռում նրանց ճակատագրերը, լուծում ազգային հարցեր ու ազգամիջյան բախումները, թե ինչպես է ցինիկ Մ. Գորբաչովը մանեւրում, ինչպես է պահպանողական Ա. Գրոմիկոն ի չիք դարձնում սումգայիթյան իրադարձությունները ստուգելու համար հանձնաժողով ստեղծելու մասին առաջարկությունը, ինչպես է հետադիմական ու հայատյաց Ե. Լիգաչովը նենգափոխում տվյալներն ու իր շեֆ Գորբաչովին ու Քաղբյուրոյի անդամներին խաբում, թե իբր Լեռնային Ղարաբաղից նամակներ ու բողոքներ չեն մտել ԽՍՀԿ Կենտկոմ, թեեւ միայն 1987 թվականին ու 1988 թ. սկզբներին այնտեղ են մտել հազարավոր դիմումներ, նամակներ, հեռագրեր եւ ձեռնարկությունների, կազմակերպությունների, կոլտնտեսությունների, պետտնտեսությունների կոլեկտիվների ընդհանուր ժողովների, ժողովրդական պատգամավորների տեղական, շրջանային ու մարզային խորհուրդների նստաշրջանների, սկզբնական կուսակցական կազմակերպությունների ժողովների եւ կուսակցական կոմիտեների պլենումների արձանագրություններ, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայաստանի հետ վերամիավորելու խնդրանքով այնտեղ են այցելել բազմաթիվ պատվիրակություններ: Եվ թե ինչպես է ԽՍՀՄ ներքին գործերի նախարար ճիզվիտ Ա. Վլասովը տասնյակ անգամ նվազեցնում Սումգայիթում սպանված հայերի թիվը, թե ինչպես է համաշխարհային հասարակայնությանն ու խորհրդային ժողովրդին խաբում գորբաչովյան այդ ավազակախումբը, որը հայերի ջարդերից հետո է միայն Սումգայիթ զորք մտցրել, այն էլ անգեն:

Հենց այդպիսի ճիզվիտները, ցինիկները, փարիսեցիներն ու բթամիտներն էին ղեկավարում ԽՍՀՄ կոչվող մեծ երկիրը: Այդ իսկ պատճառով այդքան էլ դժբախտություններ ունեինք մենք: Այդ իսկ պատճառով էլ փլուզվեց «մեր մեծ» երկիրը: Բայց մի՞թե միայն գորբաչովյան ավազակախումբն էր այդչափ անտարբեր ղարաբաղյան հիմնահարցի նկատմամբ: Ոչ, թանկագին ընթերցող:

Ղարաբաղյան սուր հարցի նկատմամբ այս աշխարհի տերերի անտարբեր վերաբերմունքը 1918-1920 եւ 1980-1990 թվականներին հանգեցրել է անցանկալի բարդությունների եւ այս տարածաշրջանի ժողովուրդներին ծանր փորձությունների մատնել: Նրանք եւ այն ժամանակ չեն հաշվի առել, եւ մեր ժամանակներում չեն հաշվի առնում մշակութային-պատմական, ազգագրական, տնտեսական ու աշխարհագրական այն պայմանները, որոնց հենվելով կարելի էր խաղաղ լուծում տալ այդ սուր հարցին: Ընդհակառակը, մեծ տերությունները, ՄԱԿ-ը, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, ԵԱՀԿ-ն Լեռնային Ղարաբաղի անպաշտպան հայ բնակչությանը ամբողջապես թողել են ադրբեջանական իշխանությունների եւ թուրք էմիսարների արյունարբու բնազդներին, եւ նա էլ ավելի ահավոր ու անխուսափելի կոտորածի, սպառնալիքի առջեւ է հայտնվել:

Ակնբախ է, որ 1918-1920 թվականներին եւ մեր ժամանակներում Ադրբեջանի նկրտումները կամայականություն ու կոպիտ ոտնձգություն

են Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության սրբազան իրավունքների նկատմամբ եւ ոչինչ չի արդարացնում Ադրբեջանի ոտնձգությունները. ոչ երկրի բնությունը, ոչ բնակչության ազգային կազմը, ոչ ապրելակերպը, ոչ ժողովուրդների ինքնորոշման մեծ սկզբունքը, ոչ էլ, առավել եւս, Արցախի ավելի քան երկուհազարամյա պատմությունը, որը ժողովրդի տառապանքների ու արյան գնով է ստեղծել հարազատ տարածքի նկատմամբ սեփականատիրոջ նրա անկապտելի իրավունքը որպես անթիվ սերունդների սեփականություն: Այդ գիտակցությունը միշտ ապրել է եւ հիմա էլ կենդանի ու գործուն է Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի հոգում: Այդ գիտակցությունը նրա հոգուց դուրս մղել անհնար է նաեւ այժմ, երբ ամբողջ մարդկությունն անցնում է մի դպրոց, որի անունն է ժողովրդավարություն, անհնարին է, ինչքան էլ որ ջանք թափեն ալիեւներն ու բագիրովները, վեզիրովներն ու մութալիբովները, հասանովներն ու էլչիբեյները, դեմիրելներն ու չիլլերները, չեթիններն ու նրանց ամեն տեսակ պաշտպանները գորբաչովներն ու լիգաչովները...

Այս դեպքում ի՞նչ էր մնում անել Արցախի լավագույն զավակներին, եթե ոչ զենք վերցնել ու պաշտպանել իրենց բզկտված պատմական հայրենիքը, իրենց օջախն ու ընտանիքը: Ինչը եւ նրանք ի հեճուկս համաշխարհային հասարակության արել են 1918-1920 թվականներին եւ անում են նաեւ այսօր:

Իմ հայրենակիցները լավ են յուրացրել 18-րդ դարի վերջի ֆրանսիական հեղափոխության առաջնորդ, յակոբինյան դիկտատուրայի հեղափոխական կառավարության ղեկավար Մաքսիմիլիան Ռոբեսպիերի խոսքերն այն մասին, որ «... եթե ոտքի չելնի համայն ժողովուրդն ամբողջովին, ազատությունը կկործանվի...»: Այդ պատճառով էլ արցախցիներն ազգովի պայքարի ելան հանուն իրենց ազատության:

ԱՄՆ-ի եւ եվրոպական երկրների, ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի եւ ՆԱՏՕ-ի ներկայիս ղեկավարները համառորեն չեն ուզում հասկանալ, որ ղարաբաղյան հակամարտության ծագման պատճառների վերլուծությունն ու վավերագրական տվյալները ցույց են տալիս 1921 թվականին ղարաբաղյան հարցի լուծման ժամանակ հատկապես Ի. Վ. Ստալինի դավաճանական գործողությունները Ադրբեջանի ու Թուրքիայի այն ժամանակվա ղեկավարների հետ համատեղ: Այդ նրա Ստալինի ցուցումով էր, որ բոլշեւիկների կուսակցական Կովկասյան բյուրոն 1921 թ. հուլիսի 5-ին Լեռնային Ղարաբաղը հանձնեց Ադրբեջանին, թեեւ մեկ օր առաջ գտել էր, որ նա Հայաստանին է պատկանում: Բայց չէ որ Եվրոպայի ու ԱՄՆ-ի այդ վայքաղաքագետներին, հավանաբար, վաղուց է հայտնի, որ տարածքային հարցերի ու վեճերի լուծումը կուսակցական մարմինների իրավասության մեջ չի մտնում եւ որ այդ հակամարդասիրական գործողությունը կատարվել է ազգերի ինքնորոշման հանրաճանաչ սկզբունքին հակառակ ու հաշվի չառնելով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության կամքը: Բայց

նրանք լռում են, ձեւացնելով, թե այդ մասին ոչինչ չգիտեն, իբր չգիտեն, որ հենց Ստալինի ու Ադրբեջանի ղեկավարության քաղաքականությունն է հետագայում հանգեցրել ոչ միայն Նախիջեւանի ԻԽՍՀ-ի, Շահումյանի, Խանլարի, Դաշքեսանի, Շամխորի, Գետաբեկի եւ Ադրբեջանին տրված վաղեմի հայկական մյուս շրջանների, այլեւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ադրբեջանականացմանը, ինչպես որ դա ինքը Հեյդար Ալիեւն է խոստովանել Ադրբեջանի Միլլի մեջլիսի 1992 թ. փետրվարի 7-ի նստաշրջանում: Իհարկե, այդ ամենը չէր կարող Արցախում զայրույթ չառաջացնել խտրական քաղաքականության, գաղութային լուծը նոր ձեւերով վերածնելու փորձերի դեմ: Դրան հատկապես նպաստում էր նաեւ ԽՍՀՄ նախագահ Մ. Ս. Գորբաչովի ակնհայտորեն հակահայկական քաղաքականությունը, որն Ադրբեջանի ղեկավարությանը հնարավորություն տվեց ապերասան ծաղրանքով, ուժի դիրքից վերաբերվել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը, որի հետեւանքով ժողովուրդը, չտանելով 1988-ի փետրվարին տեղի ունեցած վանդալիզմը, ազգային-ազատագրական պայքարի ելավ: Եվ ոչ ոք դրանում նրան մեղադրելու բարոյական իրավունք չունի: Մի խոսքով, արյունալի պայքար սկսվեց մի կողմից Արցախի ժողովրդի եւ մյուս կողմից ԽՍՀՄ-ի ու Ադրբեջանական ԽՍՀ-ի հետադիմական ղեկավարության միջեւ, որոնք ձգտում էին խորհրդային բանակի ու ադրբեջանական օմոնի ջոկատների ուժով ճնշել Լեռնային Ղարաբաղի հայության ազգային- ազատագրական շարժումը:

Իմ «Իրադարձությունները Լեռնային Ղարաբաղում» աշխատության առաջին չորս գրքերում ես ձգտել եմ տալ հարցի պատմությունն ու մինչեւ 1993 թվականի հունվարը երկրամասում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակագրությունը: Սակայն որոշ կարեւոր փաստաթղթեր ու փաստեր իմ ուշադրությունից դուրս են մնացել: Այդ պատճառով որոշեցի դրանք լուսաբանել իմ այս գրքում: Այդպիսի կարեւոր փաստաթղթերի ու փաստերի շարքին կարելի է դասել վերը բերվածները եւ այն, որ ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի նահանգապետ, հայազգի Ջորջ Թոքմեջյանը 1988 թ. մարտի 25-ին ղարաբաղյան հարցի վերաբերյալ նամակով դիմել է ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին, որի մասին նա հեռագրով հաղորդել է նաեւ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին: Ստորեւ բերում ենք այդ նամակի լրիվ տեքստը.

«Հեռագիր Սաքրամենթոյից, Կալիֆոռնիա, ԱՄՆ
Կաթողիկոս Վազգեն Առաջինին, Էջմիածին, Հայաստան, ԽՍՀՄ

Սա Թոքմեջյանի նամակի տեքստն է ուղղված ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին, Կրեմլ, Մոսկվա, Խորհրդային Միություն:

25 մարտի 1988 թ.

Թանկագին պարոն գլխավոր քարտուղար

Ես անսովոր քայլ եմ կատարում եւ դիմում եմ ձեզ, որպեսզի անմիջականորեն արտահայտեմ իմ խոր հիասթափությունը Գերագույն խորհրդի նախագահության եւ Քաղբյուրոյի որոշման առթիվ, որը Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ պատմական անարդարացիությունն ուղղելու մասին արդարացի եւ անաչառ վճիռ ընդունելու նպատակ չի հետապնդում:

Այդ որոշումը, որն իր մեջ նաեւ դրական տարրեր է պարունակում, այնպիսիք, ինչպես աշխատանքի ու կյանքի պայմանների բարելավումը եւ Ղարաբաղի ու Հայաստանի միջեւ մշակութային կապերի ամրապնդումը, սակայն, ստալինյան շրջանում թույլ տրված լուրջ սխալի վերջնական ուղղում չի հանդիսանում: Ես հուսով եմ, որ առաջիկա մի քանի շաբթում, հարցի էությունը ձեր կողմից ուսումնասիրվելուց հետո, հնարավոր կդառնա լիովին վերացնել հայերը հայերից արհեստականորեն տարանջատելը: Ղարաբաղի եւ Հայաստանի քաղաքացիները խաղաղ եւ օրինական ճանապարհով վերամիավորման իրենց անսասան կամքն են արտահայտել: Նրանք կիրառել են ձեր կողմից հռչակված հրապարակայնության եւ վերակառուցման սկզբունքները: Համայն աշխարհի հայերը միացել են խորհրդային Միությունում արդարության եւ բարեփոխումների այդ կոչին: Ձեր կողմից անցկացված միջոցառումները ուղղված հայերի անվտանգության ապահովմանը, հանգեցրել են հազարավոր մարդկանց կյանքի փրկությանը: Եվ ես ողջունում եմ ձեր կարգադրությունը վերականգնել հասարակական կարգուկանոնը եւ դատական կարգով հետապնդել նրանց, ովքեր պատասխանատվություն են կրում հայերի նկատմամբ բռնության համար:

Դուք արդեն ցուցադրել եք ձեր անձնական անհանգստությունն ու շահագրգռվածությունն այդ հարցում, կատարելով մի քանի աննախադեպ քայլեր:

Ես ձեզ խնդրում եմ մշտական ուշադրություն ցուցաբերել այնպիսի ազգային քաղաքականության զարգացման նկատմամբ, որը գոհացուցիչ կերպով կլուծեր այդ վաղեմի անարդարությունը:

Անկեղծորեն Ձեր

ՋՈՐՋ ԹՈՔՄԵՋՅԱՆ

Կալիֆոռնիա նահանգի նահանգապետ»:

Սակայն Մ. Ս. Գորբաչովը քամահրեց ԱՄՆ-ի այդ հանրաճանաչ քաղաքագետի խնդրանքը:

Այդ նույն օրերին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղարին նամակ հղեցին երկու ականավոր լենինգրադցիներ՝ հայտնի բանաստեղծ, սոցիալիստական աշխատանքի հերոս Միխայիլ Դուդինը եւ ԽՍՀՄ ԳԱ

իսկական անդամ, խոշորագույն բուսաբան, սոցիալիստական աշխատանքի հերոս Արմեն Թախտաջյանը:

Ահա այդ նամակի տեքստը.

«ԽՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԸՆԿ. Մ. Ս. ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

Մեծարգո Միխայիլ Սերգեեւիչ

Վերջին օրերի իրադարձությունները ցույց տվեցին, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը անհապաղ լուծում է պահանջում: Այդ հիմնահարցն այսօր չի ծնվել, այն ունի երկար պատմություն եւ ճիշտ լուծում կարող է ընդունվել շատ գործոնների հաշվառումով: Կատարելապես ակնհայտ է, որ այդ հարցը հարյուր-հազարավոր մարդկանց զգացմունքներին է դիպել եւ դրա հետ հաշվի չնստելն անթույլատրելի է: Մինչդեռ այն հաղորդագրությունները, որոնք տրվել են հեռուստատեսությամբ եւ հրապարակվել մամուլում, համարյա կատարելապես քամահրում են հասարակական լայն ռեզոնանսը, դարաբաղյան հիմնահարցի նշանակությունը: Պե՞տք է, արդյոք, ասել, որ դա մեր ոչ վաղեմի անցյալն է հիշեցնում, երբ հիմնահարցի արմատական լուծման փոխարեն այն հանվել է որպես այդպիսին, ինչի հետեւանքով իրադրությունն ավելի է բարդացել:

Մենք խնդրում ենք ամենալուրջ կերպով բարձր մակարդակով քննարկել Լեռնային Ղարաբաղի վարչական կարգավիճակի հարցը, քննարկել հեղինակավոր փորձագետ-պատմաբանների, տնտեսագետների, ազգագրագետների մակարդակով, հրաժարվել հապճեպ եզրակացություններից եւ որոշում ընդունել այն հանգամանքի հաշվառումով, որ Լեռնային Ղարաբաղը հայերի աչքում իրենց պատմական հայրենիքի անկապտելի մասն է կազմում եւ որ ինքնավար մարզի հիմնական բնակչությունը՝ այն նախանշանը, ըստ որի այն ստեղծվել է, հայերն են:

Ձեզ հետ միասին մենք գտնում ենք, որ վերակառուցումը եւ մեր հասարակության ժողովրդավարացումը թելադրված է ժամանակի կողմից, նրա հետ է կապված մեր առաջընթացը:

Մենք սպասում ենք, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը եւս ճիշտ լուծում կստանա այն հեղափոխական վերափոխությունների համածայն, որոնք նշանավորում են մեր դարաշրջանը:

ԽՍՀՄ ԳԱ եւ Հայկական ԽՍՀ ԳԱ իսկական անդամ
Հ. Ն. ԹԱԽՏԱՋՅԱՆ

Բանաստեղծ, սոցիալիստական աշխատանքի հերոս
Մ. Ա. ԴՈՒԴԻՆ

25 փետրվարի 1988»:

Մեծապես ցավալի է, որ այս նամակը եւս ներգործություն չունեցավ Մ. Գորբաչովի վրա:

Միխայիլ Գորբաչովի եւ նրա ավագակախմբի համար հեղինակություններ չեն ոչ Կալիֆոռնիայի նահանգի նահանգապետ Թոքմեջյանը, ոչ ականավոր բանաստեղծ Դուդինը, ոչ մեծ գիտնական Թախտաջյանը, ոչ Լեռնային Ղարաբաղից, Հայաստանից ու աշխարհի մյուս երկրներից ստացված բազմահազար նամակներն ու հեռագրերը, որոնցում պահանջվում է քննարկել եւ լուծել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Այդ սուր հիմնահարցն ուսումնասիրելու եւ լուծելու փոխարեն ԽՄԿԿ Կենտկոմի Գորբաչովի ղեկավարած քարտուղարությունը 1989 թվականի դեկտեմբերին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմ, Հայաստանի կոմկուսի Կենտկոմ եւ ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտե ուղարկեց ստորեւ բերվող, ոչ ոքի ոչինչ չպարտավորեցնող նամակը, ըստ որում անթվագիր.

«Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմ
Հայաստանի կոմկուսի Կենտկոմ
ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտե
Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմին, Հայաստանի կոմկուսի Կենտկոմին, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարգի կոմունիստներին

ԽՄԿԿ Կենտկոմը պաշտպանում է «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարգում իրադրության նորմալացման միջոցառումների մասին» ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը: Ստեղծված սուր իրադրությունում, որը չարդարացված կերպով ձգձգվեց, այդ որոշումը հնարավորություններ է բացում տարածաշրջանում իրադրության քաղաքական կարգավորման համար:

Սակայն այն տպավորությունն է ստեղծվում, թե երկու հանրապետություններում էլ, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարգում ակտիվորեն գործում են լիովին որոշակի ուժեր, որոնք շահագրգիռ են հակամարտության շարունակման մեջ, շարունակում են արհեստականորեն բորբոքել կրքերը, նպատակ հետապնդելով քաղաքական ճնշում գործադրելու ժողովրդական պատգամավորների երկրորդ համագումարի վրա հանուն իրենց հեռագնա նպատակների: Դա վտանգավոր խաղ է, որը կարող է ամենալուրջ հետեւանքներ ունենալ:

Այդ պայմաններում, երբ բացահայտ հակագդեցություն է ցույց տրվում իշխանության սահմանադրական մարմիններին, հանրապետությունների, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարգի կուսակցական կոմիտեները հարձակողական ինտերնացիոնալիստական դիրք չեն բռնել: Ավելին, շատ դեպքերում նրանք ազգայնամոլական պահանջների հետեւից են գնում, անսկզբունքայնություն, համաձայնողականություն ու երկչոտություն դրսեւորում, ինչը տանում է դեպի կուսակցական բարոյականության ու կարգապահության քայքայման, լրջորեն խաթարում հանրապետությունների կոմկուսների հեղինակությունը:

Երկու հանրապետություններից ԽՄԿԿ Կենտկոմում ստացվող բազմաթիվ նամակներում աշխատավորները պահանջում են պատշաճ կարգուկանոն հաստատել, հանգիստ ապրելու եւ աշխատելու հնարավորություն տալ մարդկանց, նրանց պաշտպանել շանտաժից ու սպառնալիքներից:

ԽՄԿԿ Կենտկոմն անհրաժեշտ է համարում, որ Ադրբեջանի եւ Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարգի կուսակցական կոմիտեները նպատակասետ աշխատանք տանեն առողջ ուժերի համախմբման, ազգային հաշտության ուղղությամբ, իրագործեն ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումների հետեւողական կենսագործումն ապահովող արդյունավետ կուսակցական-քաղաքական միջոցներ:

ԽՄԿԿ Կենտկոմն ընդգծում է, որ Ադրբեջանի, Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի կուսակցական կազմակերպությունները, կոմունիստները, բոլոր ղեկավարները լիակատար կուսակցական պատասխանատվություն են կրում քաղաքականանապես շիկացած այդ տարածաշրջանի դրության համար: Հասել է գործերի համար պատասխան տալու ժամը:

ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարություն»:

Քանի գնում, Կրեմլի ղեկավարությունն ավելի էր ուժեղացնում ճնշումը արցախյան ժողովրդի վրա: Լեռնային Ղարաբաղում դիվային ռեժիմ էր հաստատվել: Այստեղ ամեն քայլափոխի կոպտորեն խախտվում էին մարդու տարրական իրավունքները:

Այն մասին, որ Լեռնային Ղարաբաղում միութենական ու ադրբեջանական իշխանությունները կոպտորեն խախտում էին արցախահայերի իրավունքները, ես արդեն բազմաթիվ օրինակներ եմ բերել նախորդ գրքերում: Սակայն ցանկանում եմ բերել մի աղաղակող փաստ եւս, որը տեղի է ունեցել 1990 թվականի մայիսի 8-ին եւ որի մասին նույնիսկ «Նովոյե վրեմյա» մոսկովյան հանդեսն է գրել: Այդ դեպքը կատարվել է Լեռնային Ղարաբաղի մարզային խմբագրական-արտադրական միավորման գլխավոր տնօրեն Յուրի Բախշիի Ներսիսյանի հետ, որը մտնում է կուսակցության մարզկոմի, մարզգործկոմի եւ միութենական նախարարության անվանակարգի մեջ, «Կռունկ» կոմիտեի անդամ էր եւ արցախյան շարժման ակտիվ ղեկավարներից մեկը, համարձակորեն հանդես էր գալիս Լեռնային Ղարաբաղում միութենական ու հանրապետական իշխանությունների կողմից կատարվող կամայականության դեմ: Ահա թե այդ փաստի մասին ինչ են գրել «Նովոյե վրեմյա» հանդեսի 1990 թվականի թիվ 38-ում մոսկովյան «Մեմորիալի» համանախագահ Օլեգ Օբլո-

վը եւ «Մեմորիալ» համամիութենական ընկերության իրավապաշտպան հանձնաժողովի նախագահ Դմիտրի Լեոնովը. «Սկսենք ԼՂԻՄ-ում ամենատովորական բանից՝ վարչական պատիժներից: Գեներալ-մայոր Վ. Ն. Սաֆոնովի որոշմամբ, մարդկանց 500-1000 ռուբլով տուգանել են միայն նրա համար, որ նրանք կատարվող անօրինությունների մասին հեռագրեր են ուղարկել ԽՍՀՄ եւ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդներ: Ամեն օր տասնյակ մարդիկ են կալանավորվում, ամենաչնչին խախտումների համար՝ որպես կանոն, առնվազն 15 օր ձերբակալություն, հսկայական, հազարավոր ռուբլու տուգանքներ: Վարչական ձերբակալության մասին միակ գործը, որին ծանոթանալ թույլատրվել է իրավաբանին, բացահայտել է օրենքի նկատմամբ աղաղակող անտարբերության պատկեր:

Լեռնային Ղարաբաղի խմբագրական-արտադրական միավորման գլխավոր տնօրեն Յուրի Բախշիի Ներսիսյանը ԼՂԻՄ հատուկ շրջանի պարետության շտաբի պետ, գնդապետ Օվչիննիկովի հրամանով մայիսի 25-ին ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Այդպիսի հրամանն ինքը հակաիրավական է, քանի որ նման ազատումը պետական կառավարչության մարմնի առանձնաշնորհն է: Հրամանին ծանոթացնելու համար Ներսիսյանին կանչել են պարետություն: Ներսիսյանը հրաժարվել է իր ստորագրությունը դնել հրամանին եւ տեղնուտեղը ձերբակալվել է 30 օր: Այն զեկուցագրերից, որոնց հիման վրա Ներսիսյանը կալանվել է, հետեւում է, որ նա մեղավոր է միայն հրամանին համաձայն չլինելու համար: Գործի մեջ բացակայում են Ներսիսյանի գրավոր բացատրությունը եւ, որ ամենազարմանալին է, վարչական կալանքի մասին որոշումը: Ձերբակալության հիմքերը հանելուկ մնացին փաստաբանի համար, որին, ի դեպ, հակառակ օրենքի, թույլ չեն տվել ծանոթանալ գործի բոլոր նյութերին:

Յուրի Բախշիեւիչը լուրջ հիվանդ է: Երկու օր կալանքի տակ պահվելուց հետո նա հոսպիտալացվել է մարզային հիվանդանոցում, որտեղ մնացել է մի ամբողջ ամիս: Ախտորոշումը՝ սրտի իշեմիկ հիվանդություն, հետինֆարկտային կարդիոսկլերոզ, ստենոկարդիա: Բժշկական հանձնաժողովը նրան, բուժումը շարունակելու համար, ուղեգրել է Հայկական ԽՍՀ սրտաբանության ԳՀԻ: Բայց հենց որ Ներսիսյանը անձնագրի համար դիմել է պարետատուն՝ բուժման մեկնելու, նորից է ձերբակալվել եւ նետվել քննչական մեկուսարան: Չորս օր մեկուսարանում՝ նոպա եւ նորից հիվանդանոց: Արտակարգ դրության շրջանից դուրս մեկնել նա կարող է միայն 30 օր նստելուց հետո, ըստ որում հիվանդանոցում գտնված ժամանակը չի հաշվվում»...

Կարծում եմ՝ ընթերցողը կների աշխարհում հայտնի մոսկովյան ամսագրից երկար մեջբերման համար, բայց պետք է որ մարդիկ իմանան, թե ինչ էր կատարվում Լեռնային Ղարաբաղում:

Պոլյանիչկո-Սաֆոնովի ավազակախումբը ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովի եւ Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի հրամանով ահա այսպես է վերաբերվել հազարավոր հայերի հետ, ահա այսպես են նրանք «պահպանել» մարդու իրավունքները Լեռնային Ղարաբաղում:

Այազ Մութալիբովը ԽՍՀՄ-ի ղեկավարներ Միխայիլ Գորբաչովի, Եգոր Լիգաչովի, Անատոլի Լուկյանովի օգնությամբ ատրճանակը դեմ էր արել հեղափոխական ու ազատասեր Արցախի ճակատին եւ պահանջում էր նվաստացուցիչ խաղաղություն կնքել: Սակայն Լեռնային Ղարաբաղի հայերը հասկանում էին, որ դա վտանգավոր ուղի է, որը կարող է հանգեցնել նրան, որ իրենք կփրկեն իրենց կյանքը՝ հրաժարվելով նրա իմաստից: Էլ ինչպե՞ս կարող են ղարաբաղցիներն այդ ամենից հետո չզայրանալ եւ պայքարի չելնել հանուն իրենց իրավունքների: Եվ այն ո՞ր սրիկան այդ ամենից հետո բարոյական իրավունք ունի մեղադրելու մեզ:

Սակայն ԽՍՀՄ եւ Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարները քանի գնում, ավելի էին ուժեղացնում ճնշումը Արցախի ժողովրդի վրա: Ադրբեջանական ՕՄՕՆ-ը՝ (հատուկ նշանակության միլիցիայի ջոկատները) խորհրդային բանակի եւ ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի օգնությամբ սկսեց հայ բնակչության ջարդեր ու բռնագաղթ կազմակերպել: Նրանք 1991 թ. հունվարի 14-ին ամբողջ Լեռնային Ղարաբաղում տարածեցին հետեւյալ բովանդակությամբ թռուցիկներ.

«Ստեփանակերտի եւ մարզի հարգելի բնակիչներ: Երեւանցի գրոհայիններն իրենց սեւ գործերն են կատարում ԼՂԻՄ-ում: Նախազգուշացնում ենք, որ եթե երեք օրվա ընթացքում նրանք չհեռանան Լեռնային Ղարաբաղից, ապա նրանք կոչնչացվեն ՕՄՕՆ-ի կողմից: Այն բնակավայրերը, որտեղ թաքնվում են գրոհայինները, կիրկիզվեն:

Մինչեւ սույն թվականի հունվարի 20-ը կտեղահանվեն Չայբենդը (այսինքն՝ Գետաշենը) եւ Մարտունաշենը: Կփակվեն գազն ու երկաթուղին դեպի Հայաստան ու Ստեփանակերտ, օդանավակայանը եւս կմնա փակ:

Վճռեցեք, խոսքը ձերն է:

Ժամկետը՝ 72 ժամ:

Ձեր բարեկամներ

14.1.1991 թ.»

Թուրք-ազերիները լավ գիտեին, որ Լեռնային Ղարաբաղում երեւանյան գրոհայիններ չկան, այլ միայն արցախցիներն են պաշտպանում իրենց տները, եւ նրանցից պահանջում էին, որ երեք օրվա ընթացքում թողնեն իրենց տները ու հեռանան, թե չէ՝ կիրկիզեն: Ահա ձեզ 20-րդ դա-

րի բարբարոսների լեզուն:

Ադրբեջանի պետական շատ գործիչներ ու զանգվածային լրատվության միջոցների աշխատողներ այդ օրերին իրենց դիմումներում, հայտարարություններում ու հոդվածներում ոչ միայն պատկերում էին ադրբեջանական ՕՄՕՆ-ի Լեռնային Ղարաբաղ բերած սարսափներն ու այստեղ իշխանության զավթման հաղթանակով ցնծացող բռի Պոլյանիչկոյին, այլեւ կանխագուշակում էին տեղական հայկական իշխանության վերջը: Այդ բռնատիրողները չէին մտածել այն մասին, թե ինչքան խելահեղ կրքեր են բռնկում Լեռնային Ղարաբաղի քաղաքներում ու գյուղերում, որոնք ուղիղ իրենց սրտի մոտ զգում էին ադրբեջանական բանակի շեղբը եւ թե ինչպիսի ատելություն վաղը կբռնկի տեղի հայերի սրտերում: Բայց արցախցիները դեռեւս չէին համարձակվում զենք վերցնել, քանի որ միամտորեն հավատում էին, թե ճշմարտությունն ու արդարությունը խորհրդային երկրում կհաղթեն ստին ու անարդարությանը: Նրանք դեռեւս միայն բազմաթիվ բողոքներ ու նամակներ էին կենտրոն ուղարկում օգնության մասին հոգու ճիչով, բայց եւ գաղտնի պատրաստվում հակահարված տալու թշնամուն:

Երկրի ղեկավարությանն են դիմել նաեւ Լեռնային Ղարաբաղից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորները, որոնք պահանջում էին դադարեցնել կամայականությունը, սպանությունը, բռնությունն ու Լեռնային Ղարաբաղի հայերի տեղահանությունը: Ահա ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների այդպիսի նամակներից մեկը, որը 1991 թվականի հունիսի 2-ին ուղարկվել է ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովին նախորդների պես մնալով անարձագանք:

«Մոսկվա, Կրեմլ

Հարգելի Միխայիլ Սերգեեւիչ

Հասնելով ներքին զորքերի հեռացմանը ԽՍՀՄ ԳԽ 1989 թ. դեկտեմբերի 28-ի որոշմամբ նրանց վրա դրված պարտականությունների կատարումից, Մութալիբովն ու Պոլյանիչկոն, սպեկուլյացիա անելով Ձեր անունով ու ԽՍՀՄ Անվտանգության խորհրդի հեղինակությամբ, ներկայումս ադրբեջանական օմոնականների օգնությամբ անցկացնում են ԼՂԻՄ-ի բնիկ հայ բնակչության ջարդեր ու բռնագաղթեցում: Անձնագրային ռեժիմի ստուգման եւ նախագահի 1990 թ. հուլիսի 20-ի հրամանագրի կատարման պատրվակով միակողմանի կարգով կողոպտում ու հրկիզում են հայերի տները, ձգտելով բռնագաղթեցնել, հարկադրում են շուտափույթ կերպով լքել հարազատ հողը: Հարկ չկա Ձեզ հիշեցնել այն մասին, որ այսօր ամբողջ աշխարհի աչքի առաջ ռուսաստանյան ռազմավարության ապագայի դեմ ծանրագույն հանցագործություն է կատարվում Ղարաբաղի ոչնչացման հենց փաստով, որը երեք հարյուր տարի առաջ իր բախտը կապել է Ռուսաստանի հետ:

Կանգնեցրեք ջարդերը, սպանությունները, բռնությունները, բռնի տեղահանությունը: Պոլյանիչկոյի կամ նրա հետ միասին այլոց պատճառով Ղարաբաղում կատարվող ոճրագործությունները կամա թե ակամա կապում են ռուս ժողովրդի հետ, Կենտրոնի հետ, Ձեր անվան հետ: Եթե դուք չկանգնեցնեք մահվան ծեռքը, պատմությունը Ձեզ չի ների: Ավելին, նա հայ ժողովրդի նոր ողբերգությունը կկապի Ձեր անվան հետ: Ողբերգություն, որը համընդհանուր դժբախտություն կծնի ամբողջ երկրի համար: Եվ երկիրը կկործանվի: Եվ դա նույնպես կապված կլինի Ձեր անվան հետ: Հապաղելն անբարոյական է, անմարդկային: Գետաշենի եւ Մարտունաշենի կործանումը, հայերի ողբերգական տեղահանությունը, որը կանխել չհաջողվեց՝ չնայած Ձեր հավատիացումներին, հաստատում են մեր երկյուղները:

ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ
Զորի ԲԱԼԱՅԱՆ
Վահան ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Բորիս ԴԱԴԱՍՅԱՆ
Հենրիխ ՊՈՂՈՍՅԱՆ

2 հունիսի 1991 թ.»

Լեռնային Ղարաբաղից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների այդ նամակին հետեւեց ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի նախագահի պաշտոնակատար Լ. Գ. Պետրոսյանի նոր նամակը ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովին, որի տեքստը բերում ենք ստորեւ:

«Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական պատգամավորների խորհրդի գործկոմ

թ. 03. 18-240, 23 հուլիսի 1991 թ.

ԽՍՀՄ նախագահ Մ. Ս. Գորբաչովին

Հարգելի Միխայիլ Սերգեեւիչ

Լեռնային Ղարաբաղում ու նրա շուրջ ստեղծված արտակարգ իրադրությունից ելնելու ղարաբաղյան հիմնահարցի լուծման ուղիների մշտական որոնումը մեզ բերել է այն համոզման, որ դրա համար առավել ընդունելի ուղին է հանդիսանում առճակատման քաղաքականությունից հրաժարումը եւ անցումը միութենական մարմինների ու Ադրբեջանական Հանրապետության իշխանությունների հետ երկխոսության ուղուն:

Վերջին ժամանակներս ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի գործկոմը բազմիցս վերլուծել է ներկայիս իրադրությու-

նը ինքնավար մարզում եւ հաստատել մեր կողմից ընտրված նոր կուրսի ճշտությունը:

Հավանություն տալով բոլոր հարցերը խաղաղ, սահմանադրական միջոցներով լուծելու կուրսին, մարզգործկոմը նշել է, որ կորցված յուրաքանչյուր օր խորացնում է ճգնաժամը, կասկածի տակ դնում առաջիկա երկխոսության ընթացքում դրական արդյունքների ձեռքբերումը:

ԼՂԻՄ-ում իրադրության նորմալացման, ադրբեջանական եւ հայ ժողովուրդների միջեւ բարիդրացիության վերականգնման շահերը պահանջում են հակամարտության կարգավորման միջոցների անհետաձգելի համատեղ որոնում:

Մենք հիմքեր ունենք Ձեզ հայտարարելու, որ մեր կողմից վարվող նոր կուրսը համապատասխանում է Լեռնային Ղարաբաղի բնակչության մեծ մասի՝ վերջին ժամանակներս ձեւավորված տրամադրություններին:

Ելնելով վերը շարադրվածից, ս. թ. հուլիսի 20-ին, երկկողմ պայմանավորվածությունների ձեռքբերումից հետո, տեղի ունեցավ Ադրբեջանական Հանրապետության նախագահի հանդիպումը ԼՂԻՄ-ի լիազոր պատգամավորության հետ՝ կազմված ժողովրդական պատգամավորների մարզային եւ շրջանային խորհուրդների գործկոմների նախագահներից:

Մեր կարծիքով, հանդիպումն անցել է կառուցողական հունի մեջ, հանդիպմանը ձեռք է բերվել փոխադարձ ըմբռնում եւ կողմերի համաձայնություն երկխոսությունը շարունակելու անհրաժեշտության մասին: Դրա համար, ինչպես որ մեր կողմից նշվել է հանդիպման ժամանակ, պահանջվում է արագացնել սահմանադրական նորմերի վերականգնումը ինքնավար մարզում, ճանաչել մարզային խորհրդի եւ նրա գործկոմի լիազորությունները, քանի որ միայն նրանք կամ նրանց կողմից լիազորված անձինք կարող են ինքնավար մարզի բնակչության անունից մասնակցել բանակցություններին:

Մեր կողմից նույնպես մատնանշվել է այն, որ բանակցությունները արդյունավետ վարելու համար դրանց պետք է անմիջական մասնակցություն ունենան Կենտրոնի ներկայացուցիչները, եւ որ բանակցությունները պետք է անցկացվեն ԽՍՀՄ եւ Ադրբեջանական ԽՍՀ սահմանադրությունների, Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ միութենական փաստաթղթերի հիման վրա:

Հանդիպումների եւ բանակցությունների հաջող անցկացման պարտադիր պայման է հանդիսանում մեկը մյուսի նկատմամբ ուժի գործադրման բացառումը, քաղաքական շարժառիթներով կամ ազգային պատկանելության պատրվակով չհիմնավորված ձերբակալությունների փաստեր թույլ չտալը, ապօրինի ձերբակալվածների ազատումը:

Մեր կարծիքով բանակցությունների ընթացքում առաջնահերթ կարգով պետք է քննարկվեն հետեւյալ հարցերը.

1. Բոլոր մակարդակների ժողովրդական պատգամավորների ընտրությունների անցկացման ժամկետների եւ մեխանիզմի որոշումը եւ Ադրբեջանի ԿԿ մարզային ու քաղ(շրջ)կոմների վերականգնումը

Վերջին երեքուկես տարում իրար փոխարինած ոչ սահմանադրական մարմինները կամ դրանց զուգահեռ գործելը ցույց են տվել այդ մարմինների անընդունակությունը լուծել ծագած հիմնահարցը, մարզը դուրս բերել ճգնաժամից:

2. Բոլոր գինված կազմավորումների դուրսբերումը ԼՂԻՄ-ի տարածքից, ներքին գործերի տեղական մարմինների անձնակազմից բացի ԽՍՀՄ ՆԳՆ ներքին գործերի վերատեղաբաշխումը մարզի սահմաններում

Կողմերից մեկի գինված կազմավորումների առկայությունը ազգամիջյան բախման գոտում, ինչպիսիք են Ադրբեջանի ՆԳՆ հատուկ նշանակության միլիցիայի ջոկատները, խիստ անկայունացնում է իրադրությունը, հատկապես եթե հաշվի առնենք նրանց կողմից թույլ տրվող հակաիրավական գործողությունները: Հենց նման գործողություններն են դարձել արտաքին աշխարհի հետ ԼՂԻՄ-ի կապի միակ ուղու Ստեփանակերտի օդանավակայանի գործունեության դադարեցման պատճառը: Այդ կազմավորումները օդանավակայանից հանելը եւ այնտեղ համընդհանուր կերպով ընդունված վերահսկողության նորմերի վերականգնումը հանդիսանում է անհետաձգելի խնդիր:

3. Մարզի եւ Շահումյանի շրջանի տրանսպորտային եւ տնտեսական շրջափակումը վերացնելը

Շարունակվող շրջափակումը լրիվ քայքայման եզրին է հասցրել ինքնավար մարզի եւ Շահումյանի շրջանի տնտեսությունը: Զգացվում է պարենի, վառելիքի, շինանյութերի ուժեղ պակասություն: Անշուշտ, այդ ամենը բացասաբար է անդրադառնում մարդկանց տրամադրությունների վրա, հանգեցնում սոցիալական անցանկալի հետեւանքների:

4. Բռնի տեղահանված բնակչության վերադարձը մշտական բնակության վայրերը

Այժմ Ստեփանակերտ քաղաքում, Հադրութ շրջկենտրոնում, Հայաստանի մի շարք բնակավայրերում են գտնվում հազարավոր ընտանիքներ, որոնք իրենց օջախներից զրկվել են 1991 թվականի ապրիլ-հուլիս ամիսներին Շուշիի, Հադրութի եւ Շահումյանի շրջաններում զինվորական ստորաբաժանումների եւ Ադրբեջանի ՕՄՕՆ-ի ապօրինի գործողությունների հետեւանքով: Այդ մարդկանց վերադարձը իրենց բնակության վայրերը էապես կլիցքաթափի իրադրությունը:

5. Շահումյանի շրջանի վարչատարածքային կարգավիճակի վերականգնումը

Այդ շրջանի վերացումը, որտեղ հայ բնակչությունը կազմում է 80 տոկոս, եւ նրա տարածքը հարեւան ադրբեջանական շրջանի կազմի մեջ

մտցնելը ոչ մի կերպ չի նպաստում տարածաշրջանում իրադրության նորմալացմանն ուղղված մեր համատեղ ջանքերին: Անհրաժեշտ է շտապ կերպով դադարեցնել այդ շրջանի խաղաղ բնակչության բռնատեղահանման բոլոր գործողությունները:

6. ԼՂԻՄ-ի մասին նոր օրենքի մշակումը եւ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի բարձրացումը որպես ազգային-տարածքային կազմավորում

ԼՂԻՄ-ի կազմավորման ժամանակից ի վեր անցած 70 տարիները ցույց են տվել, որ ինքնավար մարզի կարգավիճակը պատշաճ կերպով չի ապահովում այդ յուրօրինակ երկրամասի ամբողջ բնակչության սոցիալ-տնտեսական ու հոգեւոր զարգացումը:

Լեռնային Ղարաբաղի մարզգործկոմի
նախագահի պաշտոնակատար Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ»

(Լեռնային Ղարաբաղի մարզգործկոմի 1991 թ. արխիվ)

Այս նամակը եւս անարձագանք է մնացել:

Չի կարելի չհիանալ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, միութենական «Ռազմիկները ժողովրդավարության կողմնակից են» կոորդինացիոն խորհրդի նախագահ, գնդապետ Վլադիմիր Սերգեեւիչ Սմիռնովի քաղաքացիական դիրքորոշմամբ, որն արցախցիների կանչով ժամանեց Լեռնային Ղարաբաղ, շրջագայեց ամբողջ երկրամասում եւ իր աչքով տեսավ խորհրդային բանակի, ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի զորամասերի եւ ադրբեջանական ՕՄՕՆ-ի վայրագությունները Շահումյանի եւ Լեռնային Ղարաբաղի մյուս շրջաններում եւ SOS կանչեց աշխարհով մեկ: Շնորհակալություն այն ռուս կնոջը, որն այդպիսի սքանչելի որդի է ծնել:

Ստորեւ բերում եմ արցախյան ժողովրդին օգնության հասնելու կանչով, Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչության դեմ բռնությունները դադարեցնելու պահանջով զանազան մարմիններ հղած նրա նամակներից ու հեռագրերից մի քանիսը:

«Ժողովրդական պատգամավոր, ԽՍՀՄ ՁՈՒ գնդապետ, «Ռազմիկները ժողովրդավարության կողմնակից են» կոորդինացիոն խորհրդի նախագահ Վլադիմիր Սերգեեւիչ Սմիռնովի դիմումը

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՈՕ-Ի ՕԴԱՉՈՒԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ

Անդրկովկասյան ՈՕ-ի հարգելի օդաչուներ եւ ուղղաթիռայիններ

Շահումյանի շրջանի ավանները գրոհելու ձեր մարտական թռիչքները սարսափի են մատնում այդ գյուղերի բնակիչներին ծերերին, կանանց ու երեխաներին, այդ գյուղերի պաշտպանների ատելությունը հարուցում:

Ուղղաթիռայիններ: Ձեր մեջ արիություն գտեք չկատարելու հանցավոր հրամանները:

Շահումյանի շրջան, մարտական գործողությունների վայր գյուղ Վերինշեն

ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր
Սմիռնով Վ. Ս.

ժամը 14.00, 26.07.91 թ.»

***

«Մոսկվա, Կրեմլ
ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Սերգեեւիչ Գորբաչովին

Հայտնում ենք ձեզ ի գիտություն, որ տեղեկություններն այն մասին, թե Ադրբեջանի տարածքում տեղաբաշխված Անդրկովկասյան ռազմական օկրուգի 4-րդ համազորային բանակը դադարեցրել է Ադրբեջանի Շահումյանի շրջանի գյուղերից բնակչության բռնատեղահանման իր գործողությունները, իրականությանը չեն համապատասխանում: Վերինշենի (Վերխնի Հաջիքենդի) բարբարոսական գնդակոծությունները, որոնք տեւել են 4 օր եւ հանգեցրել մարդկային զոհերի ու բնակիչների զանգվածային փախուստի, իրականում դադարեցված են եւ արդեն երկրորդ օրն է չեն վերսկսվում: Զորքերը, սակայն, գյուղից հետ չեն քաշված: Դրա փոխարեն զրահատանկային տեխնիկան, որը հուլիսի 24-ին մտցվել է գյուղի վրա իշխող բարձունքները, ամրանում է դրանց վրա, պահպանելով ուղիղ նշանառությամբ գյուղի վրա կրակ բացելու հնարավորությունը: Զորքերը գյուղ ներխուժելու սպառնալիքը չի նվազում: Գյուղատնտեսական աշխատանքներ կատարելն անհնարին է: Բռնատեղահանումը դադարեցված համարել չի կարելի, չնայած բազմիցս տրված խոստումներին, չնայած նրան, որ հայերը ռազմական ուժի ճնշման տակ մտել են Նովոգարեւսկի գործընթացի մեջ: Մենք ստիպված ենք հիշեցնել ձեզ, որ անկախ այն բանից ստորադաս ֆունկցիաները ձեր նկատմամբ լռյալ են թե ոչ, պատասխանատվությունը մեր ժամանակներում օրինակը չունեցող ցեղասպանության համար, որն Ադրբեջանում իրականացվում է հայ ժողովրդի դեմ, ընկնում է ձեզ վրա որպես երկրի նախագահի եւ նրա զինված ուժերի գլխավոր հրամանատարի:

Գյուղ Վերինշեն, 26.07.91 թ.

Մոսկվայի ժամանակով ժամը 16.50

ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր,
գնդապետ ՍՄԻՌՆՈՎ Վլադիմիր Սերգեեւիչ
ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավոր,
պրոֆեսոր ՇԱԲԱԴ Անատոլի Եֆրեմովիչ»

***

«ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավոր
27 հուլիսի 1991 թ.
Հեռագիր
Մոսկվա Կ-160 Պաշտպանության նախարար
Խորհրդային Միության մարշալ
Դ. Տ. ՅԱԶՈՎԻՆ

Լրատվություն է ստացվել հեռախոսով ինձ հետ կապվելու Ձեր ցանկության մասին, ես պատրաստ եմ կապի մեջ մտնել ցանկացած րոպեի: Խնդրում եմ Ձեզ օժանդակել Շահումյանովսկ քաղաքի հետ հեռագրային եւ հեռախոսային կապի վերականգնմանը:

Լրացուցիչ կերպով հաղորդում եմ Ձեզ, որ Վերին Շեն (Վերխնի Հաջիքենդ) գյուղի առջեւի բարձունքներում տեղակայված են լրացուցիչ կրակակետեր: Կրակն ուղղված է բնակավայրի կողմը: Պահանջում եմ Ձեր միջամտությունը կրակը դադարեցնելու համար:

ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավոր
ՍՄԻՐՆՈՎ Վլադիմիր Սերգեեւիչ

18.00, 27.07 1991 թ.»

***

«ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավոր
27 հուլիսի 1991 թ.
Շտապ
Մոսկվա, ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ. Տ. ՅԱԶՈՎԻՆ
Պատգամավորական հարցապնդում

Ըստ ստացված տեղեկությունների, որոնցում վկայակոչում են Ձեզ, իբր զորքերը հետքաշված են Շահումյանի (Գերանբոյի) շրջանի Մանաշիդ, Բուզլուխ, Էրքեջ, Վերին Շեն գյուղերից: Ես վկայում եմ, որ դա ճիշտ չէ. զորքերը խրամատավորվում են, նրանք գրավել են բոլոր բարձունքները, չի դադարեցվում գնդացրային կրակը:

Ես խնդրում եմ Ձեզ, պաշտպանության նախարար, ժամանել իրադարձությունների վայրը, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ցեղասպանությունը կանխելու եւ բռնատեղահանված հայերին իրենց գյուղերը վերադարձնելու համար:

ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավոր
գնդապետ ՍՄԻՐՆՈՎ»

***

«ԴԻՄՈՒՄ
Ադրբեջանական Հանրապետությունում ծառայող խորհրդային սպաներին եւ զինվորներին
Հարգելի զինվորներ եւ սպաներ

Ձեզ օգտագործում են սեփական ժողովրդի դեմ հանցավոր, չհայտարարված պատերազմի մեջ: Ադրբեջանի կառավարությունը կենտրոնի թողտվությամբ ու օժանդակությամբ ձեզ գործիք է դարձրել այն քաղաքական պայքարում, որը տարվում է միջնադարյան մեթոդներով: Ձեզ օգտագործում են խաղաղ բնակիչներին գյուղերից արտաքսելու համար եւ ձեզնով քողարկում են դիակապտությունն ու ձեր օգնությամբ նվաճված գյուղերի կողոպտումը: Ձեզ դրեք արտաքսված բնակիչների տեղը եւ դուք կհասկանաք, թե ինչու են նրանք զենք վերցնում եւ ինքնապաշտպանության ջոկատներ ստեղծում իրենց ընտանիքները, հողի նկատմամբ իրենց իրավունքը պաշտպանելու համար: Բնակիչները, որոնց մեջ կան Հայրենական մեծ պատերազմի շատ վետերաններ, գլխում տեղավորել չեն կարողանում, թե ինչու է խորհրդային բանակը կռվում իրենց հետ: Դա բարի եւ աշխատասեր ժողովուրդ է, բայց հուսալքության հասցված, նա ստիպված է պաշտպանվել:

Զինվորներ եւ սպաներ: Ժողովներ անցկացրեք, պարզեցեք, թե ձեզ ուր են տանում եւ ովքեր են տանում: Պաշտպանեցեք: Դուք երդվել եք ծառայել ժողովրդին, այլ ոչ թե նրա հետ պատերազմել ի շահ կուսակցության: Հիշեցեք, որ ձեր ձեռքերով կատարված պատերազմական հանցագործությունների համար պատասխանատվությունն ընկնում է ոչ միայն հանցագործությունների հեղինակների վրա, այլեւ կատարողների վրա:

ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավոր, «Ռազմիկները ժողովրդավարության կողմնակից են» կոորդինացիոն խորհրդի նախագահ,
գնդապետ Վլադիմիր ՍՄԻՐՆՈՎ

29.07.91թ. 21.00 ժամ, Վերին Շեն

(«Ռոսիա» ռադիոյի համար)»

«Վիեննա, Ավստրիա
Ռուդոլֆ Հարդտհասե,
Մարդու իրավունքների Միջազգային հելսինկյան ֆեդերացիա
Գործադիր տնօրեն
Իազիա Զալմանին,
Վաշինգտոն, Պետդեպարտամենտ
Մարդու իրավունքների հանձնաժողով
պրն Ռիչարդ Շիֆթերին

Նյու Յորք, ՄԱԿ Փախստականների գործերի կոմիտե, Գործադիր տնօրեն

Սադակո Օսատային,

Նյու Յորք, ՄԱԿ Մարդու իրավունքների կոմիտե, Ֆիլիպ Հաէրին

Ադրբեջանի Շահումյանի շրջանում եւ Լեռնային Ղարաբաղում բնիկ հայ բնակչության ցեղասպանության պետական քաղաքականություն է իրականացվում: ԽՍՀՄ զինված ուժերի եւ ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի օգտագործումով ադրբեջանական միլիցիայի կազմավորումները ՕՄՕՆ-ը, վաղեմի հայկական գյուղերից հայերի բռնի տեղահանում են կատարում: Վերջերս նույնանման հետեւությունների է հանգել Մարդու իրավունքների գծով Առաջին միջազգային սախարովյան կոնգրեսի հանձնաժողովը, որը գլխավորում է Անգլիայի լորդերի պալատի պատգամավոր, բարոնուհի Քոքսը: Խորհրդային բանակը, ՆԳՆ ներքին զորքերը ադրբեջանական օմօնականներին աջակցում են թալանելու, սպանելու, զբաղվելու դիակապտությամբ, անասունները քշելով: Արգելում են բերքը հավաքել, ըստ որում այրում են հասունացած արտերը, արմատի վրա ոչնչացնում են գյուղատնտեսական մթերքները, ստեղծում կյանքի անտանելի պայմաններ: Հայկական բնակավայրերը գտնվում են դաժան շրջապատման մեջ, դադարեցված են օդային ուղերթերը, անջատված է էլեկտրաէներգիան, պայթեցված է ջրատարը, վերացվել է կենսապահովման ծառայությունը:

Մեր պետության ղեկավարների խելամտության ու խղճին ուղղված մեր դիմումները արդյունք չեն տալիս: Առանց Ձեր միջամտության ու ազդեցության մենք վանդալիզմն ու ցեղասպանությունը կանգնեցնելու հնարավորություն չենք տեսնում, որոնք բարձրացված են ԽՍՀՄ պետական քաղաքականության մակարդակի:

Մենք դիմում ենք Ձեզ, խնդրելով Մարդու իրավունքների հանձնաժողովն ուղարկել Շահումյանի շրջանում եւ ԼՂԻՄ-ում հայկական բնակչության բռնատեղահանման շրջանները:

ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Վլադիմիր ՍՄԻՈՆՈՎ
Գանձասարի վանքի վանահայր Գրիգոր ՄԱՐԿՈՍՅԱՆ
Լենխորհրդի պատգամավոր Ալեքսանդր ՎԻՆՆԻԿՈՎ
Շահումյանի շրջխորհրդի նախագահ Շահեն ՄԵՂՐՅԱՆ

29.07.91 թ. Վերինշեն»:

***

«Մեծարգո բարոնուհի Քոքս

Շահումյանի շրջանի հայկական գյուղերի ծայրաստիճան ծանր ողբերգական դրությունը մեզ ստիպեց դիմել Ձեզ: Ինչպես հայտնի է, Ձեզ թույլ չտվեցին այցելել Բուզլուխ, Մանաշիդ, Երքեջ հայկական գյուղերը:

Ձեր մեկնելուց անմիջապես հետո բոլոր երեք գյուղերն էլ ոչնչացվել, բնակչությունը բռնագաղթեցվել, ունեցվածքը թալանվել է: Կործանման եզրին են գտնվում Վերինշեն, Կարաչինար եւ Հայ Բորիս հայկական գյուղերը: Այդ գյուղերի անմիջական մոտակայքում կենտրոնացված են խորհրդային բանակի եւ ադրբեջանական ՕՄՕՆ-ի զգալի ուժեր, որոնք պարբերաբար գնդակոծությունների են ենթարկում այդ գյուղերը, դաշտերում վառում են հասունացած հացահատիկը, պայթեցնում ջրատարը, անջատում լույսը: Տեղական բնակիչների մեջ առանձնահատուկ տագնապ է առաջ բերում շրջանից ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի դուրսբերումը, որոնք, թվում է, կոչված են պաշտպանելու եւ ապահովելու հայերի անվտանգությունը: Հույս չդնելով ԽՍՀՄ կառավարության օգնության վրա, հայերը ստիպված կազմակերպել են ինքնապաշտպանության ջոկատներ, որոնք անկասկած դիմադրություն ցույց կտան հերթական բռնագաղթեցման ընթացքում: Բնականաբար, դա կհանգեցնի բազմաթիվ զոհերի:

Ձեր ազդեցությունը եւ ակտիվ խաղաղարար գործունեությունը կարող են նպաստել գյուղացիների կյանքի փրկության գործին, որոնք խաղաղ աշխատանք են ցանկանում հարազատ հողում, ուր թաղված են իրենց նախնիները եւ հազարամյա քրիստոնեական տաճարներ են կառուցված:

Հարգանքներով

ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, գնդապետ ՍՄԻՈՆՈՎ
Գանձասարի վանքի վանահայր Գրիգոր ՄԱՐԿՈՍՅԱՆ

29.07.91 թ. Վերինշեն»:

***

«ԱՄՆ-ի նախագահ պարոն Ջ. Բուշին
պատճենը՝ ԽՍՀՄ նախագահ Մ. Ս. Գորբաչովին

Հարգելի պարոն նախագահ

Ձեզ դիմել են ստիպում մարդու իրավունքների չդադարող զանգվածային խախտումները Ադրբեջանական ԽՍՀ Շահումյանի հայաբնակ շրջանում: Միայն վերջին շաբաթների ընթացքում բռնագաղթեցվել է Բուզլուխ, Երքեջ, Մանաշիդ գյուղերի բնակչությունը: Խորհրդային զորքերով ու զրահամեքենաներով շրջապատված նույն ճակատագրին է սպասում վեցհազարանոց բնակչություն ունեցող Վերինշեն գյուղը: Խաղաղ բնակչության դեմ ռազմագործողությանը մասնակցում են խորհրդային բանակի զորքերը, ԽՍՀՄ ներքին զորքերը եւ ադրբեջանական ՕՄՕՆ-ը: Ռազմական շրջափակման օղակում գտնվող շրջանում մարդկանց կյանքի անտանելի պայմաններ են ստեղծում: Անջատված է էլեկտ-

ռաէներգիան, դադարեցված է պարենի մատակարարումը, չկա վառելիք: Զորքերը գնդակոծում են գյուղերը, խոչընդոտում են գյուղատնտեսական աշխատանքներին: Այդ պայմաններում տեղական բնակիչները հարկադրված են ինքնապաշտպանության ջոկատներ ստեղծել իրենց ընտանիքները, կյանքն ու ունեցվածքը պաշտպանելու համար:

Հազիվ թե նրանք կարողանան տեւական դիմադրություն ցույց տալ կանոնավոր բանակի զորքերին:

Պարոն նախագահ, մենք Ձեզ խնդրում ենք նախագահ Գորբաչովի առաջ հարց դնել հայկական գյուղերից բնակչության բռնագաղթեցման անհապաղ դադարեցման մասին եւ հայ բնակիչներին հարազատ տներ վերադարձման մասին:

Հարգանքներով

Գանձասարի վանքի վանահայր ՄԱՐԿՈՍՅԱՆ Գրիգոր
Շահումյանի շրջգործկոմի նախագահ ՄԵՂՐՅԱՆ Շահեն
Լենինորիրդի ժողովրդական պատգամավոր ՎԻՆՆԻԿՈՎ Ա.
ՀՀ ժողովրդական պատգամավորներ ԱՅՎԱԶՅԱՆ Ս., ԱԲԳԱՐՅԱՆ Ե.
ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, գնդապետ ՍՄԻՈՆՈՎ Վ. Ս.

Խնդրում ենք հանձնել ԱՄՆ-ի դեսպանության միջոցով:

31.07.91 թ.

Շահումյանի շրջանի Վերին Շեն գյուղ»:

***

«Ռադիո «Ռոսիա», «Վեստի»

ԽՍՀՄ, ՌԽՖՍՀ, Լենինորիրդի, Մոսխորիրդի ժողովրդական պատգամավորներ

Վավերագրորեն հաստատված են 4-րդ բանակի 23-րդ դիվիզիայի եւ Ադրբ. ԽՍՀ ՕՄՕՆ-ի կողմից Ադրբ. ԽՍՀ Շահումյանի շրջանի հայկական բնակչության բռնի տեղահանման փաստերը: Հայերի բռնատեղահանման կանխման եւ ցեղասպանության դադարեցման համար պատգամավորների, արտասահմանյան լրագրողների եւ Եվրախորհրդարանի մարդու իրավունքների հանձնաժողովի ներկայացուցիչների կողմից էստաֆետային հերթապահություն է սահմանված Ադրբ. ԽՍՀ Շահումյանի շրջանի Կարաչինար, Հայ Բորիս եւ Վերին Շեն գյուղերում:

ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ

Վլադիմիր Սմիռնով
Սերգեյ Բելոզերցեւ
Ալեքսանդր Ռիմիկով
Լեւ Բալաշով

1.07.91 թ.»:

***

«ԽՍՀՄ պաշտպանության նախարար
Դ. Յազովին

Երկրորդ օրն է սպասում ենք Ձեր խոստացած ցամաքային զորքերի շտաբի պետ Կոլեսնիկովի հանձնաժողովին:

Դուք չեք կատարում սպայի եւ նախարարի խոստումը: Հեռագրով հաղորդեցեք հանձնաժողովի ժամանման ժամանակը:

ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր

Վլադիմիր ՍՄԻՈՆՈՎ

1.08.91 թ.»:

***

«Հեռագիր թ.1
«Ժողովրդավարական Ռուսաստան»
Շարժման Համակարգիչ խորհրդին

Ադրբեջանի Շահումյանի շրջանում անցկացվում է հայկական գյուղերից հայկական բնակչության բռնագաղթեցման հանցավոր պետական քաղաքականություն: Այդ ոճրագործությունների համար մեղքն ընկնում է Ռուսաստանի վրա:

Շաբաթ օրը (օգոստոսի 3-ին) նախատեսվում է (ենթադրվում է) խորհրդային բանակի եւ ՕՄՕՆ-ի կողմից հայկական գյուղերի հերթական գրոհը: Առանց Ձեր օգնության եւ բողոքի հանրահավաքի ողբերգությունը դժվար է կանխել:

«Ժողովրդավարական Ռուսաստան»
Համակարգիչ խորհրդի անդամ

Վլադիմիր ՍՄԻՈՆՈՎ

2.08.91 թ. »:

***

«Հեռագիր
ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովին
ՌԽՖՍՀ նախագահ Բ. Ելցինին
Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովին
Պաշտպանության նախարար Դ. Յազովին
Ներքին գործերի նախարար Բ. Պուգոյին

Վերջին օրերի ընթացքում Ադրբեջանի Շահումյանի շրջանում, մեր դիտարկումների տվյալներով, ավելի վաղ ձեռք բերված պայմանավորվածությանը համապատասխան խորհրդային բանակի զրահատեխնիկան հետքաշված է դեպի ռազմական տեղաբաշխման վայրը եւ կենտրոնացված Մանաշիդ գյուղում: Սակայն նախկին դիրքերից շարունակվում

է հայկական գյուղերի գնդակոծումը, ապակայունացնելով նորմալ կյանքը: Ավելին, սկսվել է բռնագաղթեցված Բուզլուխ, Մանաշիդ, Էրքեջ գյուղերը ադրբեջանցիներով բնակեցնելու գործընթացը այն ժամանակ, երբ այդ գյուղերի փախստականները գտնվում են մոտակա հայկական գյուղերում: Ընթանում է մարդու իրավունքների աղաղակող խախտում: Իրադրությունը շրջանում շարունակում է մնալ լարված: Երկար ժամանակ այդպիսի իրադրության կայունությունը շարունակվել չի կարող: Ինքնապաշտպանության ուժերը կարող են անցնել զավթված Բուզլուխ, Մանաշիդ, Էրքեջ գյուղերի ազատագրմանը:

Շրջանում իրադրության կայունացման եւ ինքնապաշտպանության ուժերի արձակման համար անհրաժեշտ է կատարել հետեւյալ գործողությունները.

1. Խորհրդային բանակի ստորաբաժանումները դուրս բերել եւ տանել նրանց մշտական տեղաբաշխման վայրերը:

2. Շտապ կերպով դադարեցնել Բուզլուխ, Մանաշիդ, Էրքեջ գյուղերի բնակեցումը ադրբեջանցիներով:

3. Բռնագաղթեցված գյուղերից եւ Շահումյանի շրջանի ամբողջ տարածքից հանել ադրբեջանական ՕՄՕՆ-ի ուժերը:

4. Հայաբնակ եւ ադրբեջանաբնակ գյուղերի միջեւ տարանջատիչ պոստեր կարգել ներքին զորքերի այն զորամասերով, որոնք ավելի վաղ չեն գործածվել հակամարտության մեջ:

5. Բռնագաղթեցված բոլոր ընտանիքներին հնարավորություն ընձեռնել վերադառնալու Բուզլուխ, Մանաշիդ, Էրքեջ գյուղերը:

Ինքնապաշտպանության ուժերը, ձգտելով պահպանել կայունությունը, թվարկված կետը կատարվելու դեպքում հրաժարվում են ամեն տեսակ մարտական գործողություններ սկսելուց:

Մեր կարծիքով, ԽՍՀՄ, ՌԽՖՍՀ, Մոսխորհրդի եւ Լենխորհրդի ժողովրդական պատգամավորների մշտական ներկայությունը կարող է ապահովել այդ պարտավորության կատարումը: Ըստ որում անհրաժեշտ է մշտական շփում հաստատել այդ պատգամավորական խմբի եւ Շահումյանի շրջանում գտնվող զորամասերի ղեկավարության միջեւ:

Լ. ՊՈՆՈՄԱՐՅՈՎ
(ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավոր),
Վ. ՍՄԻՌՆՈՎ
(ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր),
Ա. ՎԻՆՆԻԿՈՎ
(Լենխորհրդի պատգամավոր)

Ադրբ. ԽՍՀ Շահումյանի շրջանի Վերին Շեն գյուղ
4.08.91 թ.»:

***

«Դիմում 4-րդ բանակի 23-րդ դիվիզիայի զինվորներին

Զինվորներ եւ հրամանատարներ: Ձեզ է դիմում գնդապետ Սմիռնովը:

Այն, ինչ կատարվում է Ադրբեջանի այս մասում, սարսափելի է: Եվ հակասում է առողջ բանականությանը: Դա հասկանալ չեն կարող այն գյուղերի բնակիչները, որոնց դուք եք պաշարել: Չեն կարող հասկանալ Հայրենական մեծ պատերազմին մասնակցած ծերունիները: Այս բարի ու աշխատասեր ժողովուրդը, որ խորհրդային բանակի կողմից դուրս է քշվում հարազատ տներից: Այն ոճրագործությունը, որ կատարվում է ձեր զենքերով, արդարացնել չի կարելի: Տեղական բնակչությունը հսկայական հարգանքով է վերաբերվում խորհրդային բանակին, բայց, պաշտպանվելով, նրանք հարկադրված են կրակել ձեզ վրա: Առկա է ազգայնամոլությամբ տառապող քաղաքագետների փառամոլությունը:

Յուրաքանչյուր մարդ ապրելու, ազատության եւ երջանկության իրավունք ունի: Ձեզ ստում են, թե նրանք բոլորը գրոհայիններ են: Այստեղ գյուղացիներ են ապրում իրենց ընտանիքներով, ինչպես նաեւ փախստականներ, որոնց դուրս է քշել խորհրդային բանակը: Հայաստանից այստեղ են եկել ազգակիցներ, որպեսզի պաշտպանեն իրենց հայրերին ու մայրերին եւ ապրելու նրանց իրավունքը: Գյուղերի հերթական գրոհի եւ ռազմական պաշարման շարունակման դեպքում ինքնապաշտպանության ուժերը պատրաստ են անցնելու պարտիզանական պատերազմի:

Զինվորներ եւ հրամանատարներ: Դուք չեք կարող եւ չպետք է լինեք ձեր ժողովրդի դեմ: Ազգամիջյան գժտություն բորբոքելը խորհրդային սահմանադրության համաձայն պատժվում է օրենքով, եւ հեռու չէ այն օրը, երբ ազգամիջյան թշնամանքի կազմակերպիչները դատարանի առաջ կկանգնեն: Ես, որպես սպա եւ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, չեմ կարող դա ձեզ չասել: Ես ձեզ մաղթում եմ երջանկություն եւ խիղճ: Դադարեցրեք մասնակցությունը այս հանցավոր պատերազմին:

ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր
Վլադիմիր ՍՄԻՌՆՈՎ
04.08.91 թ. գ. Վերին Շեն, Շահումյանի շրջան»:

***

«ՀԵՌԱԳԻՐ
ԽՍՀՄ նախագահ Մ. Ս. Գորբաչովին, պատճենը՝ ԽՍՀՄ նախագահին առընթեր անվտանգության խորհրդի անդամ Բակատինին

Ադրբեջանական ԽՍՀ Շահումյանի շրջանում շարունակվում է գյուղերի ռազմական շրջափակումը: Շարունակվում են ինքնաձիգ զենքով գյուղերի գնդակոծություններն ու զորքերի մանեւրները: Անասունները

քշում-տանում են, հրկիզում են ցանքսերը: Բռնագաղթեցված գյուղերը կողոպտում են եւ վերաբնակեցնում ադրբեջանցիներով: Դա կատարվում է նրա համար, որպեսզի ինքնապաշտպանության ուժերին հարկադրեն դիմելու ակտիվ մարտական գործողությունների: Այդ դեպքում այդ բոլոր հանցավոր գործողությունների կազմակերպիչները հույս ունեն արդարացում ստանալ խոշորամասշտաբ ռազմագործողություն անցկացնելու համար: Մենք իրադարձությունների վայրում գտնվող ժողովրդական պատգամավորներս, վկայում ենք, որ այդ հանցավոր պետական քաղաքականությունը կարող է անցկացվել միայն Ադրբեջանի ղեկավարներ Մութալիբովի եւ Պոլյանիչկոյի հրահանգով, որոնք ակնհայտորեն չեն ցանկանում հիմնահարցը լուծել խաղաղ ճանապարհով: Մենք պնդում ենք, որ շտապ կերպով նախագահական հանձնաժողով ժամանի Շահումյանովսկ անվտանգության խորհրդի անդամ Բակատինի գլխավորությամբ իրադրության օբյեկտիվ գնահատման եւ 1991 թ. օգոստոսի 4-ին Ձեր անունով ուղարկված հեռագրում մեր կողմից առաջարկված անհետաձգելի գործողությունները ձեռնարկելու համար:

ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր
Վ. ՍՄԻՌՆՈՎ
ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավոր
Լ. ՊՈՆՈՄԱՐՅՈՎ
Լենինորհրդի պատգամավոր
Ա. ՎԻՆՆԻԿՈՎ

05.08.91 թ. Շահումյանի շրջանի Վերին Հեն գյուղ»:

Ռուս ժողովրդի սքանչելի զավակ, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, գնդապետ Վլադիմիր Սմիռնովի եւ նրա ընկերների այս հոգեցունց հեռագրերն ու նամակները նույնպես ներգործություն չունեցան խավարամոլ Միխայիլ Գորբաչովի ու նրա շրջապատի վրա: Ընդհակառակը, Միխայիլ Գորբաչովը, Ադրբեջանի ղեկավար Այազ Մութալիբովի միջնորդությամբ, իր հրամանագրով մի խումբ ադրբեջանական օմոնականների, խորհրդային բանակի եւ ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի ռազմիկների պարգեւատրեց ԽՍՀՄ շքանշաններով ու մեդալներով ցուցաբերած «հերոսության» ավազակության, երեխաների, կանանց ու ծերունիների սպանության եւ Լեռնային Ղարաբաղի հայերի բռնագաղթեցման ու նրանց բնակարանների ավերման համար: Ադրբեջանական հեռուստատեսությամբ ցույց էին տալիս, թե ինչպես է Այազ Մութալիբովը հպարտանում դրանով եւ պարգեւները հանձնում: Դրանից առավել կեղծ բարեպաշտություն եւ սրբապղծություն կլինի՞, արդյոք: ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովի ի՞նչ հոգն էր, թե այդ դժոխային օրերին Ստեփանակերտի փողոցները լիքն էին ցնցոտիներ հագած ու քաղցած փախստականներով, զոհված սմուսիններին, զավակներին ու եղբայրներին սգացող սեւազգեստ կանանցով, իսկ երբեմն էլ թե երիտասարդներ էին երեւում, ապա նրանք էլ հաշմանդամի սայլակներով կամ հենակներով, քանի որ բոլոր տղամարդիկ իրենց երկրամասի պաշտպանությամբ էին զբաղված: Տեսնելով, որ ԽՍՀՄ նախագահն ու միութենական մարմինները անտարբեր են ադրբեջանական իշխանությունների վանդալիզմի նկատմամբ, Լեռնային Ղարաբաղից ԽՍՀՄ եւ Հայկական ԽՍՀ ժողովրդական պատգամավորները 1991 թ. օգոստոսի 25-ին երկրամասում ստեղծված իրադրության մասին նամակ հղեցին Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինին հուսալով, որ այդչափ դժվարին պահին Ռուսաստանը կօգնի ղարաբաղցի հայերին:

Ստորեւ բերում եմ այդ նամակի լրիվ տեքստը.

«ՌԽՖՍՀ նախագահ
Բ. Ն. Ելցինին

Մեծարգո Բորիս Նիկոլաեւիչ

Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը երեք հարյուր տարի առաջ Ղարաբաղում է սաղմնավորվել: Հոկտեմբերից հետո բազմաչարչար Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը եւ Շահումյանի շրջանը Ստալինի կամոք հանձնվել են ռուսաստանյան պետության տարածքում հենց նոր ստեղծված բուֆերային Ադրբեջանական հանրապետությանը: Այդ պահից ի վեր ռուսաստանյան պետության կազմի մեջ գտնված ղարաբաղյան հողը նույնիսկ սահմաններ չունի նրա հետ: Եվ այսօր նրա ժողովուրդը գտնվում է կործանման եզրին:

Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ողջունում է անձամբ Ձեր գլխավորությամբ ժողովրդավարության մեծ հաղթանակը, հուսով է, որ մեզ համար այս ողբերգական պահին անհետաձգելիորեն կլուծվի հանցավոր կերպով երկարաձգված Ղարաբաղի հարցը:

Խորհրդանշական եւ հատկանշական է, որ հենց ԱԴՊԿ-ի անդամներից շատերն են հատկապես վերջին երեք ամսվա ընթացքում իրականացրել քսանչորս հինավուրց հայկական գյուղերի բռնագաղթեցումը:

Ստեղծված իրադրությունում, երբ Ադրբեջանի ղեկավարությունը նրա կուսակցական առաջնորդներ Մութալիբովի եւ Պոլյանիչկոյի գլխավորությամբ, ստրկամտաբար պաշտպանեց հանցավոր խունտային, երբ հատկապես այդ օրերին ուժեղացրեց ճնշումները հայկական բնակչության դեմ դրա համար օգտագործելով խորհրդային բանակի եւ ներքին զորքերի ուժերը, երբ իր հանցավոր գործողություններով նպաստեց արյունահեղությանը ոչ միայն տարածաշրջանում, այլեւ երկրում, մենք հպարտանում ենք, որ Ղարաբաղի հայ ժողովուրդը չի ցանկանում այլեւս գտնվել մի կառավարության վարչական ենթակայության տակ, որ մեր հայրենակիցների արյունով է թաթախված:

Թախանձագին խնդրում ենք Ձեզ, հարգելի Բորիս Նիկոլաեւիչ, օգտագործել Ձեր ամբողջ բարձր հեղինակությունը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզին աջակցություն ցույց տալու երկրի սահմանադրության մեջ արձանագրված մյուս ազգային-տարածքային կազմավորումներին հավասարապես, որպես Դաշնության սուբյեկտ միութենական պայմանագիր ստորագրելու:

Մեզ թույլ ենք տալիս հիշեցնելու, որ դեռեւս 1813 թվականին մեր ժողովրդի համար բախտորոշ Գյուլիստանի պայմանագրով Լեռնային Ղարաբաղը միացված է եղել Ռուսաստանին: 1988 թվականի ապրիլին, ղարաբաղյան շարժումն սկսվելուց հետո, Ղարաբաղի ժողովրդի պատվիրակները դիմել են Ռուսաստանի կառավարության ղեկավարին խնդրելով ԼՂԻՄ-ը վերաենթարկել Կենտրոնին կամ Ռուսաստանին, ինչում եւ ժողովուրդը տեսել է իր փրկությունը:

Ոտնձգություն չկատարելով ազգային-տարածքային կազմավորումների ինքնիշխանության մասին սահմանադրական նորմերի դեմ, պահպանելով ազգի ինքնորոշման իրավունքի սկզբունքները, խորապես գիտակցելով, որ ստեղծված ծայրահեղ լարված իրադրությունում, որը կապված է ԱԴՊԿ-ականների կազմակերպած զանգվածային սպանությունների եւ ջարդերի անպատժելիության հետ, անհնարին է մոտակա ժամանակներում երկու հակամարտ կողմերի իրական հաշտության հույս պահել, եւ տարածաշրջանում իրադրության անհապաղ նորմալացման ու կայունացման նպատակով միակ հնարավորն ենք համարում ինքնավար մարզը փոխադրել Կենտրոնի կամ Ռուսաստանի վարչական ենթակայության տակ:

ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ,
ԼՂԻՄ-ից եւ ՀՀ-ից Հայաստանի ժողովրդական պատգամավորներ

Վլադիմիր Աղաջանյան, Ռոլես Աղաջանյան, Գրիգոր Բաղյան,
Զորի Բալայան, Համլետ Գրիգորյան, Էդուարդ Ղուկասյան,
Բորիս Դաղամյան, Ռազմիկ Դանիելյան, Ռոբերտ Քոչարյան,
Արկադի Մանուչարով, Ռազմիկ Պետրոսյան, Գեորգի Պետրոսյան,
Սերժ Սարգսյան, Վիգեն Շիրինյան, Հենրիխ Պողոսյան,
Վահան Գաբրիելյան

25 օգոստոսի, 1991 թ.»:

Ցավոք, Բ. Ն. Ելցինն էլ չարձագանքեց Լեռնային Ղարաբաղի ժողովրդական ընտրյալների նամակին: Բայց մեր ժողովրդական պատգամավորները շարունակեցին երկրի կենտրոնական մարմինները ռմբակոծել օգնության մասին պահանջներով: 1991 թվականի սեպտեմբերի 25-ին Լեռնային Ղարաբաղից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների մի խումբ նամակ հղեց Վ. Պ. Բարաննիկովին եւ Ե. Ի. Շապոշնիկովին ԽՍՀՄ

ներքին գործերի եւ ԽՍՀՄ պաշտպանության նոր նախարարներին: Ստորեւ բերում ենք այդ նամակի տեքստը.

«ԽՍՀՄ ներքին գործերի նախարար
ընկ. Վ. Պ. Բարաննիկովին
ԽՍՀՄ պաշտպանության նախարար
ընկ. Ե. Ի. Շապոշնիկովին

Հարգելի Վիկտոր Պավլովիչ եւ Եվգենի Իվանովիչ

Վերջին 4 ամսվա ընթացքում ԼՂԻՄ-ից եւ հարակից Շահումյանի շրջանից բռնագաղթեցվել է ավելի քան 10 հազար մարդ: Շատ գյուղեր ավերված են, մարդկանց ունեցվածքը թալանված է: Քշել-տարել են ավելի քան 15 հազար գլուխ անասուն, որո ճարակ է դարձել հազարավոր հեկտար արդեն հասունացած հացահատիկայինների բերքը:

Լարվածության շիկացման գործում հսկայական դեր են խաղացել ԽՍՀՄ ՆԳՆ-ի ի դեմս նախկին նախարար Պուգոյի, ԽՍՀՄ ՊԱԿ-ի, ԽՍՀՄ ՊՆ-ի ի դեմս նախկին նախարար Յազովի դիրքորոշումները: Կանգնելով թշնամական կողմերի միջեւ խաղաղարար դիրք բռնելու փոխարեն ներքին զորքերն ու Ադրբեջանում տեղաբաշխված 4-րդ բանակի 23-րդ դիվիզիայի ստորաբաժանումները վերը հիշատակված անձանց ուղղակի ցուցումով մարտական գործողություններին անմիջական մասնակցություն են ունեցել այսպես կոչված ադրբեջանական ՕՄՕՆ-ի կողմում, որն իրենից ներկայացնում է ներքին զորքերի կամ բանակի համազգեստ հագած ավազակային կազմավորումներ: Հենց նրանց ջանքերով են դուրս քշվել Լեռնային Ղարաբաղի եւ Շահումյանի շրջանի 24 հայկական գյուղերի բնակիչները: Ըստ որում եւ ներքին զորքերի անձնակազմն է ակտիվ մասնակցություն ունեցել դիակապտությանը, կողոպուտներին ու բռնություններին: Միայն խռովության ճախողումից հետո են ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերն ու խորհրդային բանակի ստորաբաժանումները չեզոք դիրք գրավել:

Դրա հետ միասին արտակարգ պայմաններում զորքերի վարքի մասին վերադաս ղեկավարությունից հստակ ցուցումներ չունենալով, ներքին զորքերի հրամանատարությունը եւ արտակարգ դրության շրջանի պարետատունը անվճռականություն են ցուցաբերում արյունալի բախումները կասեցնելու գործում:

Ստեղծված դրությունը բացատրվում է նրանով, որ ներքին գործերի նախկին նախարար Պուգոյի ցուցումով եւ ներքին զորքերը, եւ արտակարգ դրության շրջանի պարետատունը ենթարկեցվել են ապօրինի հանրապետական կազմկոմիտեին եւ անձամբ ոչ անհայտ Պոլյանիչկոյին խիստ անցանկանալի կուսակցական ֆունկցիոներին, Լեռնային Ղարաբաղում ցեղասպանության հեղինակին ու ոգեշնչողին: Բավական

է ընդգծել, որ շրջանի պարետը այսօր էլ իր իշխանությունն իրականացնում է Մութալիբովի դիմանկարով ու մուսավաթավական Ադրբեջանի դրոշակով պսակված առանձնասենյակից, դրոշակ, որը ծածանվում է նաեւ այն շենքի վրա, ուր տեղավորված է պարետատունը:

Հարգելի Վիկտոր Պավլովիչ եւ Եվգենի Իվանովիչ:

Անշուշտ, Ղարաբաղի հարցի լուծումը իշխանության քաղաքական կառույցների առանձնաշնորհն է հանդիսանում: Մարզի իշխանության մարմինների գործունեության վերականգնումից հետո օրակարգից կհանվեն լարվածության հանգեցնող շատ հարցեր: Դրա հետ մեկտեղ, մի ամբողջ շարք հարցեր, մեր կարծիքով, մնում են Ձեր գլխավորած գերատեսչությունների իրավասության մեջ եւ կարող են արդեն այժմ իսկ լուծվել:

Դրանց թվին են պատկանում.

1. ԼՂԻՄ-ի հետ մեկտեղ Ադրբեջանի բոլոր հարակից շրջանների ապամիլիտարացումը ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի տեղաբաշխումով մարզի սահմաններում.

2. Լրիվ ծավալով ԼՂԻՄ ՆԳՎ-ի ֆունկցիաների վերականգնումը նրա վրա դնելով մարզում իրավակարգի համար պատասխանատվությունը.

3. Քաղաքական շարժառիթներով անձանց հետապնդման անհապաղ դադարեցումը.

4. ԼՂԻՄ-ի շուրջը անվտանգության գոտիների ստեղծումը բնակչության կենսապահովման օբյեկտներում.

5. Ստեփանակերտ-Գորիս ճանապարհի ապաշրջափակումը տրանսպորտային միջոցների երթեւեկության անվտանգության ապահովումով.

6. Ստեփանակերտի օդանավակայանում իրավակարգի ապահովումը դնել բացառապես ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի վրա.

7. Շահումյանի շրջանի բնակիչների ֆիզիկական անվտանգության ապահովումը.

8. Շուշիի, Հադրութի, Շահումյանի շրջանների գյուղերից, ինչպես նաեւ Խանլարի շրջանի Գետաշեն եւ Մարտունաշեն գյուղերից բռնագաղթեցված հայերի վերադարձն ու անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է զինվորական պահակակետեր ունենալ հետեւյալ գյուղերում.

ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ

Բանազուր, Առաքյուլ, Բինյաթլու, Ջիլան, Քարագլուխ (Դաշբաշի), Մուլքուդարա, Դոլանլար, Պետրոսաշեն, Սպիտակաշեն, Արփագյադուկ, Ծամծոր, Շաղախ, Աղջաքենդ:

ՇՈՒՇՎԱ ՇՐՋԱՆ

Մեծ շեն, Եղծահող, Տասը վերստ, Կանաչ թալա, Ղարաղշլաղ:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆ

Բուզլուխ, Մանաշիդ, Էրքեջ:

Գյուղերի պահպանության համար վճարելն իր վրա է վերցնում Լեռնային Ղարաբաղի մարզգործկոմը:

Հարգանքներով

ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ

ՊՈՂՈՍՅԱՆ Հ. Ա.
ԲԱԼԱՅԱՆ Զ. Հ.
ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Վ. Մ.
ԴԱԴԱՄՅԱՆ Բ. Վ.

25 սեպտեմբերի, 1991 թ.»:

ԽՍՀՄ պաշտպանության եւ ներքին գործերի նոր նախարարներն էլ խուլ մնացին արցախցիների կանչի հանդեպ:

Երբ երկրի ղեկավարությունը նեխած է ի՞նչ կարող էին անել նրա պաշտպանության ու ներքին գործերի նոր նախարարները, ինչքան էլ որ նրանք ամենազոր լինեին, պետական հեղաշրջում նախապատրաստելուց, երկրի ղեկավարությունը փոխելուց բացի: Բայց Շապոշնիկովն ու Բարաննիկովն իրենց հատկանիշներով դրա համար պիտանի չէին, թեկուզեւ ամբողջ խորհրդային ժողովուրդը պաշտպաներ նրանց:

Ի դեպ, 1992 թվականի փետրվարի 26-ին արցախցիներին օգնելու խնդրանքով ժնեւից Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինին նամակ է հղել նաեւ Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի փոխխոսնակ, բարոնուհի Քերոլայն Քոքսը: Ստորեւ բերում ենք այդ նամակը, թեեւ այն նույնպես անհետեւանք է մնացել.

«Մոսկվա, Կրեմլ
Ռուսաստանի նախագահ
պարոն Բորիս Ելցինին

Մեծարգո Բորիս Ելցին

Ամբողջ աշխարհը հուզմունքով ու տագնապով է հետեւում Լեռնային Ղարաբաղի ողբերգական իրադարձություններին, որտեղ ադրբեջանական կողմից ծանր հրետանու եւ «Գրադ» ռեակտիվ զենքի կիրառման հետեւանքով վերջին օրերին ոչնչացվել են հայկական շատ բնակավայրեր, լիովին ավերվել է Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտը, տաճարային ճարտարապետության, պատմության հնադարյան հուշարձաններ, կան մեծ թվով մարդկային զոհեր, այդ թվում կանայք, ծերեր, երեխաներ:

Հենց նոր հայտնի դարձավ, որ Ադրբեջանում, մասնավորապես Աղդամում, Նասոսնիում եւ Լենքորանում զավթել են Անդրկովկասյան ռազ-

մակյան օկրուգի զինամթերքների օկրուգային պահեստները: Ստեղծված գործնականում իշխանությունների կողմից չվերահսկվող իրադրությունում, սպառնալիորեն իրական է դառնում Ղարաբաղի հայկական բնակչության լրիվ ֆիզիկական ոչնչացումը: Ահա թե ինչու ամբողջ աշխարհը, տագնապ արտահայտելով հայ ժողովրդի ճակատագրի համար, անկեղծորեն հուսով է, որ Դուք, հարգելի նախագահ, գիտակցելով, որ խաղաղ բնակիչների բնաջնջման համար օգտագործվում է նախկին խորհրդային բանակի ահեղ զենքը, պահպանելով մոլորակի մեծ զավակների Ֆրիտյոֆ Նանսենի եւ Անդրեյ Սախարովի մարդասիրական սկզբունքները, օգտագործելով Ձեր միջազգային բարձր հեղինակությունն ու ազդեցությունը ԱՊՀ բանակի վրա, վճռական միջոցներ կձեռնարկեք ուղղված ղարաբաղցիների կյանքի իրական փրկությանը:

Ողբերգական կերպով ձգձգված այդ հարցի լուծումն այլեւս հետաձգում չի հանդուրժում: Թանկ է ամեն մի ժամը:

Մեծ Բրիտանիայի խորհրդարանի լորդերի պալատ

Քերոլայն ԲՈՔՍ

ժնեւ

26.02.92 թ.»:

Սակայն ոչ մի բողոք ու·նամակ չօգնեց, քանի որ ԽՍՀՄ եւ Ադրբեջանի ղեկավարության մեջ գերիշխում էր ամեն գարշելին, խառնակչությունը, մանր ու մեծ բանսարկությունն ու քծնանքը, որոնք մեծագոռգոռ կերպով «քաղաքականություն անել» էր հորջորջվում: Այստեղ իշխանության ազատությունն էր լոկ ճանաչվում, ոգու ազատությունից հրաժարումը հանուն կեղծ հզորության:

Հայերի ցեղասպանությունը Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, նրանց բռնագաղթեցումը Լեռնային Ղարաբաղից վկայում են այն մասին, որ Գորբաչովը եւ նրա հանցախումբը Լիգաչեւը, Ալիեւը, Բագիրովը, Վեզիրովը, Մութալիբովը, Հասանովը, Էլչիբեյը եւ Ադրբեջանում նրանց հետնորդները, պատմությանը հայտնի ամենահրեշային բռնավորներից են: Մի՞թե դրա ապացույցը չի հանդիսանում այն, որ ոչ ԽՍՀՄ-ում, ոչ Ադրբեջանում մարդն իշխանություններին չէր հետաքրքրում, մարդը նրանց համար գոյություն ուներ լոկ որպես վիճակագրական միավոր: ԽՍՀՄ եւ Ադրբեջանի ղեկավարության մեջ ոչ ոք հաշվի չէր առնում Հոկտեմբերյան հեղափոխությունից ժառանգություն մնացած ազգամիջյան հինգհարյուրների բարդությունն ու խճճվածությունը, ազգային վիրավորանքի, անարդարության, ամբողջական ժողովուրդների դեմ կատարված ուղղակի ոճրագործությունների բեռը, որոնք հիմա դաժան վրեժ են առնում հակամարտություններով ու բռնության պոռթկումներով: Այո, իշխանությունն արագորեն անառակացնում է նրան, ով Միխայիլ Գորբաչովի եւ Հեյդար Ալիեւի պես այն իր ձեռքն է վերցնում ոչ թե հասարակության, այլ իր իսկ փառքի եւ բարօրության հոգսից դրդված:

ԽՍՀՄ եւ որոշ միութենական հանրապետությունների ղեկավարների դժբախտությունը կայանում էր նրանում, որ նրանք չգիտեին, որ ժողովուրդների ինքնիշխանության գաղափարը դեռեւս վաղ միջնադարից է հայտնի մարդկությանը եւ որպես ամբողջական ուսմունք այն ձեւավորվել է 18-րդ դարի վերջին ֆրանսիական հեղափոխության ժամանակ, ժան-ժակ Ռուսոյի կողմից, որը հռչակեց ազգի ինքնիշխանության հիմունքները: Այդ հիմունքների համաձայն, ժողովուրդն ինքն է որոշում իր ճակատագիրը, իր ինքնիշխանությունը անկախ այն տարածքից, որտեղ նա ապրում է: Այդ ուսմունքը որպես պետական շինարարության գլխավոր հիմք, մտել է համարյա բոլոր բուրժուական պետությունների սահմանադրության մեջ, միայն ոչ խորհրդային:

Իսկ գուցե ԽՍՀՄ ղեկավարները գիտեին այդ ուսմունքի մասին, բայց թքել էին նրա վրա, ինչի պատճառով էլ այդքան դժբախտություններ ու արյունահեղություններ եղան մեր երկրում: Նրանք հավանաբար հավատ էին ընծայում լոկ երկրի ուժին ու հզորությանը: Բայց, ինչպես ասել է Պոլ Վալերիան, «ուժը նրանով է թույլ, որ միայն ուժին է հավատում»:

Հենց ԽՍՀՄ եւ Ադրբեջանի ղեկավարության այդ անմիտ քաղաքականությունն էր, որ հանգեցրեց երկու դարավոր հարեւանների միջեւ պատերազմին, իսկ Վրաստանում վրացիների ու աբխազների եւ վրացիների ու օսերի միջեւ: Մի՞թե դա չի հաստատում այն, որ Ադրբեջանն ու Վրաստանը փոքրիկ կայսրություններ են քայքայված խորհրդային մեծ կայսրության բեկորների մեջ: Այդ փոքրիկ կայսրությունների ղեկավարները ազգայնամոլական թմբիրի եւ կայսրապետական խելացնորության մեջ ընկան, որը կործանարար դարձավ, այդ թվում նաեւ անձամբ իրենց համար: Որպես արդյունք այս հանրապետություններում տեսնում ենք ղեկավարների անընդհատ հերթագայություն, մի իրավիճակ, երբ զուգահեռաբար գոյություն ունեն երկու, երբեմն էլ երեք «օրինական» առաջնորդներ, տեղի են ունենում քաղաքացիական ու ազգային ցնցումներ: Եվ այդ ամենը ժողովրդի աղքատացման ու հանցագործությունների աճի ֆոնի վրա: Այդ եւ այլ փոքրիկ կայսրությունների առաջնորդները պետք է իմանան, որ բռնությունը մտածել չկարողացող մարդկանց վերջին ապավենն է... ու թողնեն որ իրենց լծի տակ ապրող ժողովուրդներն ապրեն ազատ:

ԼՂՀ, քաղաք Ստեփանակերտ, 1995 թ.

ՄԻ ԴԱՎԱԳՐԳԻՌ ԳՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՄ՝ ՍՏԻ ԲԱՆԱՁԵՎԸ

Բաց նամակ Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ թղթակից-անդամ Մ. Իսմայիլովին

Իմ առջեւ է «Բակինսկի ռաբոչի» թերթի 1991 թ. հունվարի 5-ի համարը, որտեղ հրապարակված է Ձեր գրախոսություն-արձագանքը իմ «Իրադարձությունները Լեռնային Ղարաբաղում» գրքի (պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կ. Ս. Խուդավերդյանի խմբագրությամբ, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երեւան, 1990 թ.) առթիվ:

Կարծում էի, գրախոսության մեջ կգտնեմ իրադարձությունների արդարացի վերլուծություն եւ գործարար դիտողություններ, չէ՞ որ գրախոսը, ինչ էլ լինի, Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ է: Բայց այդպիսիք չկային գրախոսությունում: Ես գտա միայն Արցախի, արցախահայության պատմության ադրբեջանական հակագիտական հայեցակետի շարադրանքը եւ բազմաթիվ վիրավորական խոսքեր Հայաստանի, Արցախի հայերի, գրքի պատասխանատու խմբագիր, պրոֆեսոր Կ. Ս. Խուդավերդյանի եւ հեղինակիս հասցեին (մեզ անվանում են կեղծարարներ):

Դուք, Մամեդ մուալիմ, չհերքելով գրքում բերված ոչ մի փաստ, գրախոսության մեջ երկու մեջբերում եք կատարում պատասխանատու խմբագրի նախաբանից: Ընդսմին, առաջին դեպքում գիտակցաբար կեղծում եք գրքի տեքստը: Դուք գրում եք, որ Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների լուսաբանման համար «... հեղինակն ընտրել է այլ ոչ ճիշտ միջոցներով կասկածելի նպատակի հասնելու սկզբունք»: Եվ որպեսզի հաստատեք ասվածը, մեջբերում եք կատարում խմբագրի տեքստից. «Լայն հասարակությանը հայտնի չեն այն պատճառները, որոնք հանգեցրին հիմնահարցի ծագմանը: Մեր իրականության համար անսովոր իրադարձություն էր Լեռնային Ղարաբաղի շարժումը, որը ծնունդ էր Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը դուրս բերելու եւ այն Հայկական ԽՍՀ-ի կազմում ընդգրկելու մարզի արմատական հայ բնակչության ձգտման... Շարժումը, հիրավի, գիտական բնույթ է կրում ազգամիջյան հարաբերությունների ոլորտում»:

Գրագետ ընթերցողն իսկույն կնկատի, որ այստեղ ինչ-որ անհեթեթություն կա: Մինչդեռ գրքում բոլորովին այլ կերպ է ասվում: Ահա թե ինչպես. «Այնինչ, ինչպես էլ գնահատենք այդ շարժումը, չի կարելի չընդունել, որ այն, հիրավի, կրում է ժողովրդական բնույթ եւ, որ առանձնապես կարեւոր է, իր էական գծերով, համահունչ է մեր ամբողջ հասարակության շարժմանը հանուն հեղափոխական վերակառուցման, դեմոկրատիայի, լճացումից ելքի եւ կյանքի բոլոր ոլորտներում (այդ թվում՝ նաեւ ազգամիջյան հարաբերություններում) իսկական սոցիալիստական նորմերի հաստատման»:

Հետաքրքիր է, դուք ի՞նչ նպատակ եք հետապնդել «հիրավի, ժողովրդական բնույթ»-ը փոխարինելով «հիրավի, գիտական բնույթ»-ով, որից փոխվում է ամբողջ նախադասության իմաստը:

Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ թղթակից-անդամին վայե՞լ է, արդյոք, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսորի խոսքը այդքան կոպտորեն կեղծելը, թե՞ դա ձեր մասնագիտությունն է: Չէ՞ որ ժողովրդական շարժումը չի կարող ազգամիջյան հարաբերությունների ոլորտում կրել հիրավի գիտական բնույթ:

Ձեր գրախոսությունից ես հասկացա, որ դուք չեք ընթերցել իմ գիրքը, այլ միայն թռուցիկ ձեւով ծանոթացել եք պատասխանատու խմբագրի հետեւյալ կարծիքին. «Արցախը պատկանում է այն տերիտորիաների թվին, որոնցում տեղի է ունեցել հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը»: Ինչպես երեւում է, դա ձեզ շատ է վիրավորել, քանի որ դուք, սրբագրելով պատմությունը, կաշվից դուրս եք գալիս ապացուցելու համար, որ Արցախը հնուց ի վեր եղել է Ադրբեջանի կազմում եւ հանդիսանում է նրա անկապտելի մասը: Ընդսմին, վկայակոչելով Ի. Մ. Դյակոնովին, գրում եք, որ հայերը եկվոր են, իսկ ադրբեջանցիները միշտ էլ ապրել են ժամանակակից Ադրբեջանի տարածքում: Ինչպես երեւում է, դուք վատ եք ընթերցել նրա «Հայ ժողովրդի նախապատմությունը» գիրքը եւ նոր աշխատությունները (ինչի մասին մենք դեռ կխոսենք ստորեւ), այլապես նրան չէիք վկայակոչի: Բացի դրանից, անհասկանալի է թե ինչո՞ւ եք քրքրում պատմությունը, չէ՞ որ ձեր գրախոսած գիրքը Լեռնային Ղարաբաղի պատմությանը չի վերաբերում, այլ ընդամենը վերջին տարիների դեպքերի ժամանակագրությունն է:

Այնուհետեւ դուք գրում եք. «Ներկայիս ԼՂԻՄ-ի կազմի մեջ ընդգրկված տարածքում, ընդհուպ մինչեւ 19-րդ դարը, երբեք չի եղել փոքրիշատե նշանակալից հայկական էթնիկական զանգված... Մինչեւ Ռուսաստանի կողմից նվաճվելը այդ տեղաշրջանի բնակչության ճնշող մասը ադրբեջանցիներ էին: Վկայակոչելով հեղինակավոր աղբյուրներ, մենք մի անգամ չէ, որ գրել ենք այն մասին, թե ինչպես 1904-1913 թ.թ. եւ 1826-1828 թ.թ. ռուս-պարսկական պատերազմների ընթացքում եւ դրանցից հետո Իրանից ու Հարավային Ադրբեջանից, ինչպես նաեւ Թուրքիայից, հայերի զանգվածային վերաբնակեցում եղավ Անդրկովկասում, այդ թվում Ղարաբաղում»:

Մենք չգիտենք, թե միայն ձեզ հայտնի այդ ինչ «հեղինակավոր» աղբյուրներ եք վկայակոչել, բայց լավ գիտենք, որ 1904-1913 թ.թ. ռուս-

պարսկական պատերազմ չի եղել, ուստիեւ չէր կարող լինել հայերի վերաբնակություն: Բայց, հակառակ ձեր անհիմն ենթադրությունների, պատմությանը լավ է հայտնի, որ սկսած հին ժամանակներից մինչեւ հիմա Լեռնային Ղարաբաղում հայերը միշտ էլ մեծամասնություն են կազմել: Ձեզ հեղինակավոր աղբյուրնե՞ր են պետք: Խնդրեմ: Պլինիուս Ավագը գրում է, որ «այդ ցեղը (աղվանները) տարաբնակվելով կովկասյան լեռներում, հասնում է, ինչպես ասված է, մինչեւ Կիր գետը, որը սահման է Հայաստանի եւ Իբերիայի միջեւ» (տես Պլինիուս Ավագ, «Բնական պատմություն», XI, 39): Իսկ Պտղոմեոսը հաղորդում է, որ «Մեծ Հայքը սահմանափակվում է. հյուսիսից Կոլխիդայի մի մասով, Իբերիայով եւ Աղվանքով Կիր գետի վրա անցնող վերոհիշյալ գծով» (տես Կլավդիոս Պտղոմեոս, «Աշխարհագրություն», V, XII, I): Ինչպես նշում է Ստրաբոնը (մ.թ.ա 1-ին դար), ամբողջ Հայաստանի բնակչությունը միալեզու էր, այսինքն հայախոս էր (տես Ստրաբոն, «Աշխարհագրություն», XI, XIV, 5): Այդ մասին գրում են նաեւ Պլուտարքոսը, Դիոն Կասիոսը եւ մի շարք այլ հին հունական ու լատինական աղբյուրներ, էլ չենք խոսում հայ պատմիչների, նաեւ նրանց մասին, որոնց դուք վկայում եք:

Այն, որ Ղարաբաղը հայկական է, հաստատում է նաեւ գերմանացի ճանապարհորդ Յոհան Շիլտբերգերը, որը 15-րդ դարի սկզբին եղել է Ղարաբաղում: Նա գրում է, որ մարզը «գտնվում է Հայաստանում» եւ որ «հայկական գյուղերը հարկադրված են տուրք տալ հեթանոսներին» (տես «Յո. Շիլտբերգերի ճանապարհորդությունը Եվրոպայում, Ասիայում ու Աֆրիկայում 1394-1427 թ.թ.», Օդեսա, 1866 թ., էջ 110, հատված Ղարաբաղի մասին: Ի դեպ, ձեր ուսուցիչ Զիյա Բունյաթովը 1984 թվականին Բաքվում վերահրատարակելով Յո.Շիլտբերգերի գիրքը, տեքստից հանել է Ղարաբաղի մասին հատվածը):

Ձանաբ Իսմայիլով, խնդրեմ, ծանոթացեք այդ գրքերին: Եթե Բաքվում հանկարծ չճարեք, ես կարող եմ ժամանակավորապես դրանք ձեզ տրամադրել: Իսկ եթե ձեզ պետք են ժամանակակից հեղինակներ, խնդրեմ: Ահա թե ինչ է գրում այդ առթիվ ձեր կողմից հիշատակված հայտնի արեւելագետ Ի. Մ. Դյակոնովը. «Արեւելյան Անդրկովկասը տրոհվել էր բազմաթիվ առանձին մարզերի, որոնք ունեին իրարից խիստ տարբերվող, բայց ազգակից լեզուներ: Իսկն ասած, Աղվանք սկզբնապես կոչվում էր, հավանաբար, Քուռ գետի հովտի միջին մասը: Ավելի ուշ Աղվանքին միացվել են նաեւ Հայաստանի Քուռից հարավ գտնվող որոշ մարզեր Ուտիքը, Փայտակարանի մի մասը եւ Արցախը (մոտավորապես համապատասխանում է ժամանակակից Լեռնային Ղարաբաղին)» (տես «Հին աշխարհի պատմություն», հ.3, էջ 212, Ի. Մ. Դյակոնովի, Վ. Դ. Սերոնովայի, Ի. Ս. Սվենցիցկայայի խմբագրությամբ, ԽՍՀՄ ԳԱ արեւելագիտության ինստիտուտ, Մոսկվա, 1983 թ.):

Իսկ դուք ասում եք, որ մինչեւ 19-րդ դարը Լեռնային Ղարաբաղի տերիտորիայում չի եղել ինչ-որ չափով նշանակալից հայկական էթնիկական զանգված: Ի գիտություն հայտնեմ, Մամեդ մուալիմ, որ Փանահ խանի հարազատներից մեկը Շուշվա խանի վեզիր Միրզա Ջալալ Ջիվանշիրը, գրում է, որ Ղարաբաղում հիմնված առաջին քաղաքը Բարդան էր, որը հնուց ի վեր բնակեցված էր Քուռ գետից երեք փարսախ հեռու հոսող Թարթառ գետի ափերին ապրող հայերով: Խամսայի հայկական մելիքությունները (Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Գյուլիստանի եւ Ջրաբերդի) ենթարկվում էին Գյանջայի Բեգլարբեկին (տես «Ղարաբաղի պատմությունը», Բաքու, 1969 թ., էջ 64-65): Տեսնում եք, ըստ Միրզա Ջալալի, Ղարաբաղում ամեն ինչ հայկական էր եւ բնակչությունը, եւ մելիքությունները:

Այն մասին, որ Ղարաբաղը հին ժամանակներից բնակեցված էր հայերով, ասվում է ձեր ուրիշ այլ հայրենակիցների Միրզա Ադիգյոզալբեկի («Ղարաբաղ-նամե»), Ա. Բաքիխանովի («Գյուլիստան-Իրան») եւ այլոց աշխատություններում:

Իսկ հայ զորքերի ներկայացուցիչների Ռուսաստանի արտաքին գործոց կոլեգիայում 1724 թ. նոյեմբերի 5-ին արված հայտարարության մեջ ասվում է, որ Ղարաբաղի նահանգից հավաքվել է 40-հազարանոց զորք, այդ թվում 10 հազար հետեւակ եւ 30 հազար հեծելազոր, որոնց գլխավորում են կաթողիկոս Եսային, Ավան ու Միրզա հարյուրապետերը, եւ որ Ղարաբաղի բոլոր հայերը, որոնք ցանկանում են մտնել ռուսաստանյան պետության կազմի մեջ, 100 հազար ընտանիքներ են (տես «Հայ-ռուսական հարաբերությունները 18-րդ դարի առաջին երրորդում», փաստաթղթերի ժողովածու, հ.2, մաս 2-րդ, Երեւան, 1967 թ., փաստաթուղթ 176, էջ 27-28):

Եթե Ղարաբաղում 18-րդ դարի սկզբին կային 100 հազար հայ ընտանիքներ եւ նրանք ունեին 40-հազարանոց բանակ, որը 1723 թ. Չոլաղ կոչվող վայրում Գյանջա քաղաքի մոտակայքում, հավաքվել էր Պետրոս 1-ին ցարի հետ հանդիպելու համար, արդյոք չի խոսում այն մասին, որ 18-րդ դարի սկզբին Լեռնային Ղարաբաղում ապրում էին առնվազն կես միլիոն հայեր:

Որ 18-րդ դարում Ղարաբաղում միայն հայեր էին ապրում, վկայում է եւս մեկ միանգամայն չեզոք պետական գործիչ վրացական թագավոր Հերակլ 2-րդը: 1769 թ. Պետերբուրգ ռուսական արքունիք ուղարկած զեկուցագրում նա հաղորդել է, որ «Խամսան (Ղարաբաղը) կազմված է յոթ վոյեվոդական կառավարչությունների տիրույթներից, ամբողջ ժողովուրդը հայկական օրենքի է» (տես «Վրաստանին վերաբերող 18-րդ դարի պաշտոնագրեր եւ այլ պատմական փաստաթղթեր», հ.1, 1768-1774 թ.թ., Ա. Ա. Ցագարելիի խմբագրությամբ, ՍՊԲ 1891 թ., փաստ. 198, էջ 434-435): Այնուհետեւ վրացական թագավորը հայտնում է, որ պարսից

Նադիր շահի մահից հետո «... Նրանց կողմից մահմեդական օրենքի մի մարդ Ջիվանշիրի ցեղից, ցանկանում է ուժով խլել Ղարաբաղի հայ մելիքների տիրույթները»: Այսպիսով, վրաց թագավոր Հերակլ 2-րդը մեկ անգամ եւս վկայում է, որ մինչեւ ջիվանշիրյան ցեղից մի թուրքմենի Փանահ խանի ներխուժումը (1752 թ.) Ղարաբաղ, այնտեղ չկային մուսուլմաններ:

Ի դեպ, Փանահ եւ Իբրահիմ խաների երեւան գալուց հետո Լեռնային Ղարաբաղի բնիկների հայերի համար ստեղծվել էին անտանելի պայմաններ, ուստի նրանք հարկադրված են եղել դիմելու ռուս միապետներ Եկատերինա 2-րդին ու Պավել Առաջինին խնդրելով փրկել իրենց եւ ընդունել ռուսական հպատակության տակ: Այդ կապակցությամբ ցար Պավել Առաջինը 1797 թ. հոկտեմբերի 7-ին արձակեց հետեւյալ հրամանը. «Հետեւազորի պարոն գեներալ կոմս Գուդովիչ: Պարսկաստանից եկած երկու ղարաբաղյան հայ մելիքների Վարանդայի տիրակալ Ջումշուդի եւ Գյուլիստանի տիրակալ Ֆրիդոնի խնդրագրի առթիվ, որը մեզ է հասել ձեր միջոցով, կարգադրում ենք համաձայնվել նրանց եւ մյուս մելիքների առաջարկություններին, որոնք ցանկություն են հայտնել իրենց ենթակա հայ ժողովրդով (ի դեմս 11000 ընտանիքների) հետ մտնելու մեր հպատակության տակ...» (տես «Ռուսաստանյան կայսրության օրենքների լրիվ ժողովածու», հ. 24, էջ 761):

Վերոհիշյալ հայ մելիքները, ցար Պավել Առաջինի հրավերով, 1798 թ. մարտի 9-ին ժամանելով Պետրոգրադ, նոր նամակ են հղում, որում ցարին խնդրում են իր «բարձր հովանավորության եւ իշխանության տակ առնել ղարաբաղյան մարզը»:

Այդ նամակի երկրորդ կետում հայ մելիքները ցարին խնդրում են. «... եթե դա անհնար է, ապա ռուսների 12-հազարանոց զորք տվեք 20 հազար հայ ընտանիքների փրկության եւ Եկատերինոգրադի շրջանում բնակեցման համար» (տես «Կովկասյան հնագիտական հանձնաժողովի հավաքած ակտեր», հ.1, Թիֆլիս, 1866 թ., էջ 622-634):

Ինչպես երեւում է վերոհիշյալից, ղարաբաղյան միայն երկու համեմատաբար փոքր մելիքություններում 18-րդ դարում ապրում էին 20 հազար հայ ընտանիքներ:

Մամեդ մուալիմ, ուրիշ ապացույցներ էլ ե՞ք ուզում: Խնդրեմ: Կովկասում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Իշխան Ցիցիանովը կայսր Ալեքսանդր Առաջինին հղած զեկուցման (1804 թ. դեկտեմբերի 30) մեջ գրում է, որ «Իբրահիմ խանը Ղարաբաղում իր հպատակության տակ ուներ միայն 60 հազար հայ ընտանիքներ» (տես «Ակտեր», հ.2, էջ 623):

Մի՞թե այս պատմական փաստաթղթերի մասին դուք տեղյակ չեք, ջանաք Իսմայիլով: Իսկ եթե գիտեք, ինչո՞ւ եք խեղաթյուրում պատմությունը, ինչո՞ւ եք գրում, որ «այդ տեղաշրջանի բակչության ճնշող մեծամասնությունը, մինչեւ Ռուսաստանի կողմից նվաճվելը, կազմում էին ադրբեջանցիները», որ իբր 1826-1828 թ.թ. եւ 1904-1913 թ.թ. ռուս-պարսկական պատերազմների ընթացքում Ղարաբաղում վերաբնակեցվել են մեծ քանակությամբ հայեր: Բայց ինքներդ էլ գիտեք, որ ստում եք: Փաստերը հակառակն են ասում: Ղարաբաղում 1823 թ. հայերը կազմում էին 84,6, թաթարները 14,7, քրդերը 0,7 տոկոս (տես «Ղարաբաղյան նահանգի նկարագրությունը», կազմված 1823 թ. իսկական պետական խորհրդական Մոգիլեւսկու եւ փոխգնդապետ Երմոլով 2-րդի կողմից, Թիֆլիս, 1866 թ., էջ 260): Ինչպես տեսնում եք, ոչ մի ադրբեջանցի, եթե, իհարկե, թաթարներին չհամարենք ադրբեջանցիներ: Իսկ ինչ վերաբերում է հայերի վերաբնակեցմանը 1826-1828 թ.թ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում, կապված մեծ Գրիբոյեդովի անվան հետ, ապա, ի գիտություն ձեզ, Մամեդ մուալիմ, հայտնում եմ պատմությանը հայտնի եւ հավաստի փաստ: Պարսկաստանից Ղարաբաղ վերաբնակեցվել են ընդամենը 700 հայ ընտանիքներ, որոնցից 300-ը շուտով վերադարձել են իրենց տեղերը (տես «Ռուսական ցարիզմի գաղութային քաղաքականությունը Ադրբեջանում 19-րդ դարի 20-60-ական թվականներին», մաս 1-ին, Մ-Լ, 1936 թ., էջ 201-204): Իսկ թե ինչպիսին էր այդ հայ վերաբնակների հետագա ճակատագիրը, երեւում է Զուրաբովի «Ղարաբաղի նահանգի մասին» 1830 թ. ապրիլի 30-ի զեկուցագրից ուղղված ռուսական կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Իշխան Պասկեւիչին: Նրանում ասվում է թաթարների կողմից հայերի հանդեպ գազանային վերաբերմունք ցույց տալու մասին: Այն մասին, որ թաթարները հայերին շահագործում են ամենադաժան կերպով, ծանակում են նրանց, տրամադրում ամենավատ հողահատվածները, նրանց չի թույլատրվում ունենալ խոշոր եղջերավոր անասուն: Հայերի մեծ մասին վերաբնակեցրել են ավերված Բարդա քաղաքում, որտեղ չկային ոչ ջուր, ոչ գոյության միջոցներ: Կլիման շատ տաք էր (իսկ հայերը տեղահանվել էին լեռնային Մարաղայից): Դրա հետեւանքով երեք տարվա ընթացքում մեռավ 1012 մարդ: Ինչպես հեղինակն է գրում, հետո թաթարները կողոպտել են նրանց ունեցվածքը: «Հայերն իզուր են արդարություն պահանջում, արդարության փոխարեն նրանք ջախջախվել են»,- գրում է Զուրաբովը (տես Ակտեր, հ. 7, էջ 460-462): Դուք, Մամեդ մուալիմ, առանց քաշվելու, առանց խղճի խայթի, գրում եք. «Ինչ վերաբերում է Կ. Խուդավերդանի այն կարծիքին, որ հայկական պատկանելությունը (Արցախի - Վ. Հ.) հին ժամանակներից ապացուցվում է վանքերի, եկեղեցիների պատերին, գերեզմանաքարերին եւ այլուր արված հազարավոր արձանագրություններով, ապա նրան պետք է հայտնի լինի, որ այդ հուշարձանները պատկանում են ոչ թե հին ժամանակաշրջանին, այլ միջնադարին եւ կառուցվել են 4-րդ դարում, քրիստոնեության տարածումից հետո: Երկրորդ, դրանց մեծ մասը ոչ թե հայկական, այլ աղվանական է եւ արհեստականորեն

բարբարոսաբար հայացվել է, այսինքն ջնջվել են աղվանական բոլոր գրերը եւ փոխարինվել հայկականով»: Ըստ ձեզ, ստացվում է, որ ԼՂԻՄ-ի տարածքում մինչեւ 19-րդ դարը չկային հայեր կամ եթե կային, ապա կազմում էին չնչին փոքրամասնություն եւ մուրճ ու հատիչ վերցրած շրջում էին աղվանական կամ ադրբեջանական մեծամասնության բնակավայրերում ու նրանց իսկ աչքի առջեւ իրենց պատմական հուշարձաններից բարբարոսաբար անխտիր ջնջում աղվանական արձանագրությունները եւ դրանք փոխարինում հայկականով:

Պատմական գիտությանը հայտնի է, որ եթե անգամ եղել է կովկասյան Աղվանք, ապա այն հիմնականում զբաղեցրել է Քուռ գետի ձախափնյա տերիտորիան:

Թույլ տվեք հարցնել. եթե Լեռնային Ղարաբաղում հայերը պատմական հուշարձաններից ջնջել են աղվանական արձանագրությունները եւ հայացրել դրանք, ապա ո՞ւր են չքացել աղվանական արձանագրությունները Կովկասյան Աղվանքի հիմնական տերիտորիայում, որտեղ ընդհանրապես հայեր չկային: Մի՞թե դրանք ոչնչացրել են իրենք աղվանները կամ ադրբեջանցիները: Եթե, իրոք, եղել են աղվանական արձանագրություններով հուշարձաններ, ապա ցույց տվեք, խնդրեմ, թեկուզեւ մեկը:

Իսկ չէ՞ որ գիտությանը հայտնի է, որ Հայաստանի տարածքում բարերի վրա պահպանվել են բյուզանդական, արաբական եւ վրացական արձանագրություններ եւ ոչ ոք դրանք չի ջնջել ու չի հայացրել, ինչը չես ասի Ադրբեջանում գտնվող քրիստոնեական հուշարձանների մասին: Անհիմն չլինելու համար բերեմ միայն երկու օրինակ:

Միութենական «Օգոնյոկ» հանդեսի թղթակից Մ. Կորչագինը, մեր օրերում լինելով Ջուլֆայում, գրում է. «Երբ ես եղա Ջուլֆայի գերեզմանոցում, այնտեղ տեսա հայկական եւ ռուսական շիրիմներ, որոնք պղծվել էին պետական սահմանի քանդման օրը (տես «Օգոնյոկ», 1990 թ., հ.4, էջ 5): Իսկ ահա թե «Օգոնյոկ»-ի նույն համարում ինչ է գրում մեկ այլ լրագրող Վ. Իվանիձեն. «Ճանապարհին (Շուշվա - Վ.Հ.) ես նրանց խնդրեցի (Վ. Իվանիձեի հետ թռչող ադրբեջանցիներին - Վ. Հ.) ցույց տալ հայկական գերեզմանոցը: Իմ առջեւ բացվեց մռայլ պատկեր: Վանդալները հիմնավորապես գործել էին ծանր մուրճերով եւ, թվում է, չէին շրջանցել ոչ մի հուշարձան: Քարե պատերն ու խաչերը (խաչքարերը) անկարգ թափթփված էին գերեզմանների կողքին: Եվ նման բան կարելի է տեսնել ոչ միայն (Շուշիում» (տես «Օգոնյոկ», 1990 թ., հ.4, էջ 27). Ինչպես ասվում է, այստեղ մեկնաբանություններն ավելորդ են: Միայն մեր կողմից ավելացնենք, որ «Օգոնյոկ»-ի թղթակից Վ. Իվանիձեի այցելությունից հետո (Շուշի քաղաքում ձեր հայրենակիցների կողմից ավերվել է նաեւ նորերս վերանորոգված հայկական Ղազանչեցոց հոյակերտ եկեղեցին (կառուցված 19-րդ դարի կեսերին):

Իսկ որքան ստահոդ են ձեր փաստարկները այն մասին, որ Լեռնային Ղարաբաղը իրենից ներկայացնում է զարգացած ինդուստրիալ-ագրարային մարզ եւ զարգացման մակարդակով գերազանցում է Ադրբեջանի մյուս տեղաշրջաններին, դրա համար էլ ղարաբաղցիները հիմքեր չունեին Հայաստանի հետ վերամիավորման հարց բարձրացնելու:

Որպեսզի մեզ չմեղադրեք տեղայնության եւ կանխակալության մեջ, կուզեի նաեւ ձեր այս կեղծիքն էլ հերքել ռուս ընկերների միջոցով:

«Պրավդա» թերթի 1989 թ. հունվարի 15-ի համարում ահա թե ինչ է գրում ԽՄԿԿ Կենտկոմի մեքենաշինության բաժնի վարիչ, ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Վ. Վոլսկին. «Երկրում շրջագայելիս ես երբեք չեմ հանդիպել մարդկանց ճակատագրերի նկատմամբ նման անուշադրության ու արհամարհանքի, ինչպիսին Լեռնային Ղարաբաղում էր: Ահա այն սոցիալ-տնտեսական հողը, որի վրա աճել է ազգային պահանջների ծառը»:

Մամեդ մուալիմ, իսկ ահա թե «Պոլիտիչեսկոյե օբրազովանիե» հանդեսի 1989 թ. 3-րդ համարում ինչ է գրում հրաւպարակախոս-քաղաքագետ Վիլ Դորոֆեեւը. «Լեռնային Ղարաբաղի պետական ու կոոպերատիվ ձեռնարկությունները միայն 1981-1985 թ.թ. ստացել են 69 անգամ ավելի քիչ կապիտալ ներդրումներ, քան Ադրբեջանում միջին հաշվով»:

Կարծում եմ ոչ Ա. Ի. Վոլսկուն, ոչ Վ. Դորոֆեեւին դուք չեք կարող մեղադրել կանխակալության ու շահասիրության մեջ: Թվում է, այդքանն էլ հերիք է ապացուցելու համար, որ դուք մոլորության մեջ եք գցել «Բակինսկի բաբոչու» ընթերցողներին:

Դուք գրքի հեղինակին մեղադրում եք նրանում, որ նա ոչ քիչ տեղ է հատկացնում Սումգայիթի դեպքերին, չնայած այն նվիրված է Լեռնային Ղարաբաղի իրադարձություններին: Կարդալով այս տողերը, ես հասկացա, որ դուք չեք ընթերցել ժողովածուն: Եթե դուք ծանոթ լինեիք գրքի լրիվ տեքստին, ապա կնկատեիք, որ նրանում այդ դեպքերի մասին չկան հեղինակային խոսքեր, ընդամենը մեջբերվում են Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի այն ժամանակվա առաջին քարտուղար Ք. Բագիրովի հեռուստատեսային հաղորդումը սումգայիթյան դեպքերի մասին եւ որոշ արտահայտություններ «Մոսկովսկիե նովոստի» թերթի հաղորդումից մարդասպան Թ. Իսմայիլովի դատի մասին (Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն դատարանի նիստերի դահլիճից):

Սումգայիթին վերաբերող ողջ նյութը ընդամենը երկու էջ է զբաղեցնում: Մի հարցում դուք ճիշտ եք. «Սումգայիթը ողբերգական էջ է երկու ժողովուրդների պատմության մեջ»: Սակայն նույն տեղում դուք սրբապղծորեն հայտարարում եք. «Բայց չէ՞ որ Սումգայիթը նախապատրաստել են իրենք հայ ծայրահեղականները»: Եվ հպանցիկ մեղադրում եք մի քանի փախստական ադրբեջանցիների, որոնք օթեւան էին գտել

Սարաի եւ Ֆաթմայի գյուղերում: Ինչպե՞ս ձեր խիղճը չի տանջում: Չէ՞ որ ձեզ լավ հայտնի է, որ Սումգայիթի դեպքերը եղել են 1988 թ. փետրվարի 27-29-ին, երբ դեռեւս փախստականներ չկային Հայաստանից ու Ադրբեջանից: Ձեզ լավ հայտնի է, թե ով է կազմակերպել հայերի ցեղասպանությունը Սումգայիթում:

Ես տարակուսանքով կարդացի ձեր հետեւյալ նախադասությունը. «Հունվարի կեսերի մասնակի լռությունը ավարտվեց նոր ողբերգությամբ Բաքու մտցվեցին զորքեր, որոնք գործում էին չարդարացված դաժանությամբ, ահավոր արյունահեղությամբ»:

Եթե դուք ունեք մի կաթիլ խիղճ, ինչպե՞ս կարող եք գրել, որ 1990 թ. հունվարի կեսին Բաքվում եղել է «անդորր»: Մի՞թե հունվարի կեսերին 13-19-ին, Բաքվում չեն սպանվել ու ողջակիզվել տասնյակ հայեր, չի կողոպտվել նրանց գույքը: Մի՞թե այդ արյունալի իրադարձությունները «անդորր» են ձեզ համար:

Իհարկե, մենք խստորեն դատապարտում ենք նաեւ Բաքվում 1990 թ. հունվարի 20-ին ադրբեջանցիների զանգվածային սպանությունները, քանի որ ամեն մի սպանություն համարում ենք մեծագույն հանցագործություն մարդկության հանդեպ: Այնինչ ձեր խոսքերից երեւում է, որ ձեզ համար դա այդպես չէ: Անհրաժեշտ եմ համարում հաղորդել ձեզ, որ ես եւ իմ հայրենակիցները ոչինչ չունենք ադրբեջանական ժողովրդի դեմ: Մենք պայքարել եւ պայքարում ենք Ադրբեջանի նախկին եւ ներկա ղեկավարների հայատյաց քաղաքականության դեմ, ղեկավարներ, որոնց գաղափարախոսն եք դուք եւ ձեզ նմանները:

Ձեր արձագանքից ես հասկացա, որ դուք ոչ գիտական աշխատողներին, այդ թվում եւ ինձ արգելում եք գրքեր գրել առանց ձեր թույլտվության: Այ, այ, այ, ոնց չեմ գլխի ընկել վաղորոք ձեզնից թույլտվություն վերցնել:

Մի՞թե դուք չեք կռահել, որ գրել եմ ոչ թե դոկտորական դիսերտացիա, այլ ընդամենը դեպքերի ժամանակագրությունը Լեռնային Ղարաբաղում: Աշխատելով արցախցիների շարժման այդ ժամանակագրության վրա, ես փաստերի ազնիվ ու անկանխակալ շարադրման համար լիովին ինձ հաշիվ եմ տվել այն պատասխանատվությամբ, որ կրում եմ իմ հայրենակից ընթերցողների (ինչպես զանգվածային, այնպես էլ պրոֆեսիոնալ) առջեւ: Ուստի հայի ու հայկականի այնպիսի կատաղի թշնամի, ինչպիսին դուք եք, գրելով 413 տող գրախոսություն, չկարողացաք հերքել ժողովածուի մեջ իմ կողմից բերված եւ ոչ մի փաստ կամ փաստաթուղթ:

Ենթադրում եմ, որ ներկա եւ ապագա օբյեկտիվ պատմաբանները կկարողանան լրացնել, իսկ գուցեեւ կշտկեն նրանում պարունակվող որոշ փաստեր, դրուագներ եւ հիպոթեզներ, քանի որ տալով օրերի ժամանակագրությունը, ես ցանկացել եմ միայն ընդգծել այդ իրադարձությունների կարեւոր պահերը:

Եվ, որպես ականատես, նրա համար եմ գրառել Լեռնային Ղարաբաղի դեպքերը, որ, կռահում եմ, ապագայում ես ի հայտ կգան ձեզ նման վայ պատմաբաններ, որոնք կկեղծեն դրանք:

Աշխատելով այս գրառումների վրա, ես հիշեցի խորհրդային ականավոր արեւելագետ, ակադեմիկոս Յու. Վ. Բրոմլեյի հետեւյալ խոսքերը. «Սակայն գիտական աշխատություններում, դպրոցական եւ բուհական դասագրքերում պատմական փաստերը հաճախ մեկնաբանվում են պարզունակ կերպով, երբեմն էլ ընդհանրապես աղավաղվում են: Մի շարք հանրապետություններում ուղղակի հիվանդագին է դարձել արմատական ժողովուրդների ծագման հարցը: Դրա լուսաբանումը հաճախ ուղեկցվում է սեփական ժողովրդի պատմությունը, ի վնաս հարեւան ժողովուրդների, «հնացնելու» եւ «ազնվացնելու» ձգտումը:

Վերջին տասնամյակներս Ադրբեջանում զարգացում է ստացել հատուկ տեսություն Արեւելյան Անդրկովկասի իբր թե վաղնջական բնակիչներ համարվող թուրքերի իբրեւ թե վաղեմի նստակյաց ապրելակերպի մասին: Ընդսմին, բոլոր հնագիտական արժեքները դիտվում են որպես հին թուրքական ազգային մշակույթի մնացուկներ: Այնինչ Ադրբեջանի քոչվորների մասին կա նշանակալից գրականություն, այդ թվում նաեւ տեղի հեղինակների» (տես Յու. Վ. Բրոմլեյ, «Հոկտեմբերը եւ ազգային հարաբերությունների զարգացումը ԽՍՀՄ-ում», Մ., 1987 թ., էջ 56):

Մամեդ մուալիմ, ձեր գրախոսության բովանդակությունն ու էությունը խոսում են այն մասին, որ Յու. Վ. Բրոմլեյի այս խոսքերը կարելի է լիովին վերագրել նաեւ ձեզ:

Վահան ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ - Սույն բաց նամակը տպագրվել է հայերեն եւ ռուսերեն լեզուներով («Խորհրդային Ղարաբաղ», 1991 թ. փետրվարի 1, №22 եւ «**Советский Карабах**», 1991 թ. փետրվարի 2, №23) արցախյան ազգային-ազատագրական շարժման ամենածանր օրերին, երբ թուրք-ազերիները խորհրդային բանակի եւ ադրբեջանական օմոնի օգնությամբ դաժան հաշվեհարդար էին տեսնում Ղարաբաղի հայերի հետ: Տպագրվել է այն ժամանակ, երբ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի երկրորդ քարտուղար Վ. Պոլյանիչկոն եւ գեներալ Վ. Սաֆոնովը արցախցիների արյունն էին հեղում: Տպագրվել է Արցախի մայր թերթի գլխավոր խմբագիր, ղարաբաղյան շարժման ղեկավարներից եւ հերոսներից մեկի՝ Մաքսիմ Երվանդի Հովհաննիսյանի խիզախության շնորհիվ:

Հեղինակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3
Արցախ. հիմնահարցի ակունքները 5
Մի դավագրգիռ գրախոսության մասին կամ՝ ստի բանաձեւը 116

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ ԲԱԽՇԻԻ
ԱՐՑԱԽ. հիմնահարցի ակունքները
(պատմական ակնարկ)

ВААН БАХШИЕВИЧ АРУТЮНЯН
АРЦАХ: истоки проблемы
(исторический очерк)

На армянском языке
Издательство "СОНА"
Степанакерт, 1998

Գեղ. խմբագիր՝ Մ. ԱԶԻԶՅԱՆ
Սրբագրիչ՝ Ծ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Թարգմանիչներ՝ Դ. ԲԱՂՐՅԱՆ
Հ. ՎԱՆՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ ԲԱԽՇԻԻ
ԱՐՑԱԽ. հիմնահարցի ակունքները
(պատմական ակնարկ)

Հանձնված է շարվածքի՝ 21. 08.1997թ.: Ստորագրված է տպագրության՝ 10.01.1998թ.: Թուղթ՝ 42X60 1/16: Տպագրական 8 մամուլ: Տպագրությունը՝ օֆսեթ: «ՍՈՆԱ» գրահրատարակչություն: Տպաքանակը՝ 1.000: Գինը՝ պայմանագրային: ԼՂ 007:

ՍՈՆԱ ՓԲԸ